

Մ Ե Կ Ն Ա Ր Կ Ա Յ Ի Ն Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ պետական գնումների համակարգի հետազոտություն

Հաշվետվությունը պատրաստեց Արտակ Քյուրումյանը

Նյութը պատրաստվել է «Հանրային վերահսկողության և հաշվետվողականության բարձրացում պետական գնումների նկատմամբ» ծրագրի շրջանակում՝ Միացյալ Թագավորության կառավարության ֆինանսավորմամբ: Արտահայտված տեսակետները հեղինակին են և պարտադիր չէ, որ արտացոլեն Միացյալ Թագավորության կառավարության պաշտոնական դիրքորոշումը:

Ծրագիրը ֆինանսավորվել է ՄԹ միջազգային զարգացման աջակցության շրջանակում Միացյալ Թագավորության կառավարության կողմից:

Երևան 2023

Contents

Contents

Անվտոմատություն 4

1. Ներածություն..... 10

Մեթոդաբանություն 14

2. Գնումների պլանավորում 15

3. Գնումների կատարում 22

3.2. Էլեկտրոնային աճուրդ 26

3.3. Գնանշման հարցում 28

3.4. Մեկ անձ 30

3.5. 2020-22թթ. կազմակերպված ընթացակարգերի վերլուծություն 36

3.6. Գնման առարկայի բնութագիրը 38

3.7. Գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներ 40

3.8. Գնում չհանդիսացող ծախս 42

3.9. Պայմանագրի կատարում. հանձնում- ընդունում 44

3.10. ՀՀ ֆինանսների նախարարության դերը..... 44

4. Գնումների էլեկտրոնային համակարգը..... 48

5. Արտաքին վերահսկողություն..... 51

5.1. Հաշվեքննիչ պալատ 51

5.2. ՀՀ պետական վերահսկողական ծառայություն 52

6. Բողոքարկումների համակարգ 54

Օգտագործված աղբյուրներ..... 56

Մեկնարկային հաշվետվությունը պատրաստվել է ՄԹ դեպանատան կողմից ֆինանսավորվող «Պետական գնումների հանրային վերահսկողության և հաշվետվողականության խթանում» ծրագրի շրջանակներում: ՀՀ ֆինանսների նախարարությունը ծրագրի գործընկերն է:

Շնորհակալություն եմ հայտնում «Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական ՀԿ-ի անձնակազմին և հատկապես Սևադա Ղազարյանին հաշվետվության պատրաստման գործում ցուցաբերած աջակցության համար: «Պետական գնումների հանրային վերահսկողության և հաշվետվողականության խթանում» ծրագրի մեկնարկը լուսաբանվել է հայկական լրատվամիջոցներով¹:

¹ Պետական գնումների նկատմամբ հանրային վերահսկողությունը կուժեղացվի, 24 նոյեմբերի 2023թ.

<https://www.youtube.com/watch?v=iBioioC4O8E>

«Պետական գնումների հանրային վերահսկողության և հաշվետվողականության խթանում» ծրագրի բացումը. ՈԻՂԻՂ.

Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝ <https://factor.am/714710.html>:

Հապավումներ

ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ԱԱԾ	Ազգային անվտանգության ծառայություն
ԱԳՆ	Արտաքին գործերի նախարարություն
ԲՄ	Բաց մրցույթ
ԲՏԱՆ	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ԳՀ	Գնանշման հարցում
ԳԶԾ	Գնում չհանդիսացող ծախս
ԵԱՏԱ	Եվրասիական տնտեսական միություն
ԷԱ	Էլեկտրոնային աճուրդ
ՀԲՄ	Հրատապ բաց մրցույթ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՄԱ	Հրատապ մեկ անձ
ՀՈԱԿ	Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
ՄԱ	Մեկ անձ
ՆԳՆ	Ներքին գործերի նախարարություն
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե
ՊՆ	Պաշտպանության նախարարություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՊՎԾ	Պետական վերահսկողական ծառայություն
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՓՄԶ	փոքր և միջին ձեռնարկություն
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
SIGMA	Support for Improvement in Governance and Management

Անփութագրեր

Հայաստանի պետական գնումների համակարգը 23 տարվա պատմություն ունի: Կատարվող գնումները, ընթացակարգերը, պատվիրատուների և մատակարարների շրջանակը մշտապես գտնվել են լրասովորական միջոցների ուշադրության կենտրոնում:

Պետական գնումների համակարգի տարբեր փուլերի աշխատանքի հետ մի շարք ռիսկեր են կապված, ինչը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ որոշում կայացնողները տնօրինում են հանրային միջոցներ և կարող են բավարար զգուշավորություն, խոհեմություն չցուցաբերել: Գործընթացի նկատմամբ ներքին և արտաքին թույլ հսկողությունը և վերահսկողությունը կարող են հանգեցնել պետական միջոցների ոչ նպատակային, անարդյունավետ և ոչ խնայողաբար օգտագործման:

Չնայած գնումների համակարգը բարելավվելու գրեթե քառորդ դար ստեղծ ՀՀ կառավարության ջանքերին, մասնավոր հրապարակումները և հետաքննող լրագրողների հետազոտություններն ամրապնդում են հանրության տարբեր խմբերի շրջանում ձևավորված այն տեսակետը, որ բնագավառը կոռուպացված, գործընթացները ժամանակատար, թղթատար և ձևական են, բազմաթիվ դեպքերում գնումները չեն բխում կարիքներից, չեն նպաստում հանրային ռեսուրսների նպատակային, արդյունավետ և խնայողական օգտագործմանը: ՀՀ հաշվեքննիչ պալատի ուսումնասիրություններն ու եզրակացություններն ամրապնդում են այդ տեսակետը: Այս հետազոտությունը նաև չի գտել վկայություններ, որ գնումների պլանները կապված են պատվիրատուների երկարաժամկետ ռազմավարությունների հետ:

2013թ. սարկիլին «ARMEPS» համակարգի շտկման, թարմացման և զարգացման աշխատանքների ղեկավարման, այդ թվում՝ հանձնարարականներ տալու, ներկայացված տեխնիկական մասնագրերը հաստատելու, տրված հանձնարարականների կատարման վերաբերյալ և այլ հաշվետվություններ հաստատելու, ինչպես նաև ծրագրի հետագա ընթացքը կանխորոշող որոշումներ կայացնելու նպատակով ՀՀ վարչապետը միջգերատեսչական հանձնաժողով էր ստեղծել և հաստատել դրա անհատական կազմը:

Այս հետազոտության շրջանակներում պարզվել է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը ոչնչացրել է նախարարությունում առկա, էլեկտրոնային գնումների համակարգի աշխատանքների բարելավման ուղղությամբ ՀՀ կառավարության ջանքերի վերաբերյալ ոչ վաղ անցյալի՝ 2008-14թթ. փաստաթղթերը: Փաստաթղթերի ոչնչացումը հնարավորություն չի տա ուսումնասիրել գնումների համակարգի զարգացման պատմությունը և դասեր քաղել անցյալի սխալներից:

Ուսումնասիրվել է գնումների գործընթացի հիմնական մի քանի փուլերի, ներառյալ գնումների պլանավորման, գնման առարկայի բնութագրի, գնման ընթացակարգի ընտրության, պայմանագրի կատարման, արտաքին հսկողության, բողոքարկումների հետ կապված հարցերը և ՀՀ ֆինանսների նախարարության դերը:

Գնումների պլանավորումը գործընթացի առանցքային փուլերից մեկն է: Չնայած «Գնումների մասին» օրենքն ընդգծում է կարիքին համապատասխան գնումների կատարումը, պատվիրատուների կողմից կարիքների գնահատումը ըստ էության չի կատարվում և այդ գործընթացի նկատմամբ որևէ լուրջ հսկողություն առկա չէ: Կարիքների գնահատման խնդրի հետ է կապված նաև այն հանգամանքը, որ ՀՀ օրենսդրությունը չի հստակեցնում, թե որ դեպքերում կարող է գնման պահանջը դադարել գոյություն ունենալ: Այս հետազոտությունը չի հանդիպել պատվիրատուների կարիքները գնահատող փաստաթղթերի և եկադրում է, որ համակարգը բարելավվելու հնարավորություն կա:

Գնումների պլանները հիմնականում պահվում են pdf ձևաչափով: Չնայած առերևույթ գնումների պլանների վերաբերյալ պատվիրատուները հրապարակում են զգալի ծավալով տեղեկատվություն, սակայն Armeps համակարգի հետ կապված խնդիրները և www.gnumner.minfin.am կայքում որոնում կատարելու հետ կապված դժվարությունները, **գնումների պլանները դարձնում են ոչ բավարար թափանցիկ:**

Գնումների պլանը պատվիրատուի ղեկավարի կողմից հաստատվում է մինչև փետրվարի 1-ը (2017թ. №390-Ն որոշում): ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող գնումների վերաբերյալ տարեկան հաշվետվությունն ընդհանրապես չի անդրադառնում գնումների պլանավորմանը, գնումների պլանում կատարվող փոփոխությունների քանակին, ծավալին և հաճախականությանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս հետազոտության շրջանակներում ուսումնասիրված եզրակացություններում, հաշվետվություններում, հաղորդագրություններում և այլ փաստաթղթերում ՀՀ հաշվեքննիչ պալատը և ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը (այսուհետ՝ ՊՎՇ) ևս չեն անդրադառնում գնումների պլանավորման հետ կապված հարցերին, կարելի է եզրակացնել, որ գնումների պլանը չի հանդիսանում պետական ֆինանսական քաղաքականության կանխատեսելիությանը, կայունությանը և հուսալիությանը նպաստող գործոն և **հայտնի չէ, թե ինչպես է կատարվում գնումների պլանավորման վերաբերյալ օրենսդրական պահանջը:**

Իրավիճակի փոփոխության արձագանքելով, գնումների պլանում տարվա ընթացքում կարելի է կատարել մի քանի փոփոխություն: Սակայն գնումների պլաններում մշտապես, մեծ քանակով և ծավալներով կատարվող փոփոխությունները համակարգային խնդիրների վկայությունն են: Երևանի քաղաքապետարանի 2024թ. գնումների պլանում 2023թ. դեկտեմբերի 6-ին կատարվել է արդեն 11-րդ փոփոխությունը: Գնումների պլաններով կատարվող փոփոխությունների քանակը և ծավալն այնքան մեծ է, որ ՔՀԿ-ները և լրատվամիջոցներն չեն կարող մշտադիտարկել դրանք: Պետությունը չունի գնումների պլաններում կատարվող փոփոխությունների քանակը և ծավալը մշտադիտարկելու գործիքներ և մեխանիզմներ: Գնումների վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության տարեկան հաշվետվությունները չեն անդրադառնում պլաններում կատարվող փոփոխություններին: Այս հետազոտությունը եզրակացնում է, որ 2019թ. SIGMA-ի «Հանրային կառավարման սկզբունքները. երկրորդին գնահատման զեկույց»-ի հանրային գնումներում պլանավորման գործընթացին տված գնահատականը, որ պատշաճ ուշադրություն չի դարձվում պլանավորման գործընթացին³, մնում է ուժի մեջ:

«Պետական գնումների հանրային վերահսկողության և հաշվետվողականության խթանում» ծրագիրը հետամուտ է լինելու, որպեսզի ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող տարեկան հաշվետվությունները տեղեկատվություն ներկայացնեն գնումների պլաններում կատարվող փոփոխությունների քանակների, ծավալների և պարբերականության վերաբերյալ և ՀՀ ֆինանսների նախարարությունը գնահատական տա, թե որքանով են գնումների պլանները կատարում պատվիրատուների վարքագիծը կանխատեսելի և կայուն դարձնելու իրենց գործառնությունը:

Պատվիրատուները գնումների ընթացակարգեր են կազմակերպում առանց գնումների պլանում միջոցներ նախատեսված լինելու (այս հաշվետվությունը ներկայացնում է նման դեպք): Առանց ֆինանսական սպահովման և գնումների պլանում միջոցներ նախատեսելու գնման գործընթաց սկսելը հղի է մի շարք ռիսկերով, այդ թվում

² Օրինակ, <https://gnumner.minfin.am/hy/page/qaghaqapetaranner/>: էջում քաղաքապետարանների մեծ մասի գնումների պլանները pdf ձևաչափով են:

³ «Պատշաճ ուշադրություն է դարձվում պլանավորման գործընթացին» ցուցանիշի գծով ՏՀԶԿ և SIGMA-ի 2019թ. զեկույցը Հայաստանի գնումների համակարգին հնարավոր 5 միավորից շնորհել է «0» միավոր:

պատվիրատուների մարդկային ռեսուրսներն անարդյունավետ օգտագործելու մեծ հավանականությամբ: Առաջարկում ենք վերանայել առանց ֆինանսական միջոցներ նախատեսելու գնումների պլանավորման պրակտիկան:

Առանց գնումների պլանում ֆինանսական միջոցներ նախատեսելու ընթացակարգ նախաձեռնելու հնարավորությունը կասկածի տակ է դնում գնումների պլանավորման ամբողջ գործընթացի անհրաժեշտությունը և գնումների գործընթացի, որպես բյուջետային միջոցների նպատակային, արդյունավետ և խնայողական օգտագործումը ապահովելու և միտված, պատվիրատուների «ախորժակը» գսպող մեխանիզմ լինելը:

Պատվիրատուների ռազմավարությունների հետ կապ չունեցող, առանց կարիքների գնահատման պատրաստված, հաճախակի, մեծ քանակով և մեծ ծավալներով փոփոխությունների ենթարկվող, մեծ քանակով և ծավալով ոչ մրցութային, ոչ մրցակցային ընթացակարգերով գնումներ նախատեսող գնումների պլանները հանգեցնում են հանրության կողմից վճարվող հարկերի վատնման: Դրանք հնարավոր կոռուպցիոն գործարքների համար հող նախապատրաստելու նշան են, որը կոռուպցիոն ռիսկերի առկայության մասին նախագուշացնող կարմիր դրոշակ է:

Ինչպես նշեցինք, պատվիրատուների կողմից մշակվող գնումները և գնումների պլանները չեն հիմնվում կարիքների գնահատման վրա: ՊՎԾ ուսումնասիրությունը վկայում է, որ հաճախ գնման առարկայի բնութագիրը շարունակում է խնդիր հանդիսանալ գնումների ազատ, արդար, մրցակցային գործընթաց կազմակերպելիս:

2023թ., արդեն պլանավորման փուլում ՀՀ կառավարությունը նախատեսում էր մեկ անձ (այսուհետ՝ ՄԱ) գնումների ընթացակարգն օգտագործել դեպքերի 45.3%-ի դեպքում, կամ դրամային արտահայտությամբ 49.1% դեպքում: Սա նշանակում է, որ պատվիրատուները ՄԱ ընթացակարգն օգտագործում են ոչ թե անհետաձգելի կամ հրատապ լինելու, հեղինակային և հարակից, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայության հիմքով, այլ պլանավորված: ***Մեծ քանակով և ծավալով ոչ մրցութային և ոչ մրցակցային ընթացակարգի պլանավորումը կասկածի տակ է դնում բյուջետային միջոցների նպատակային, արդյունավետ և խնայող արար օգտագործումը:***

Պատվիրատուները գնում կատարելու նպատակով հաճախ օգտագործում են ՄԱ ընթացակարգ: Գնման ընթացակարգի վերաբերյալ որոշում կայացնելիս վերջին ընտրանքը լինելու փոխարեն (երբ պատվիրատուները համոզվում են որ մրցույթը և մրցակցությունն ապահովող այլ ընթացակարգերի օգտագործումը հնարավոր չէ), պատվիրատուներն ըստ էության ՄԱ-ն դիտարկում են որպես առաջին ընտրություն (եթե կարողանում են, իրենց կարծիքով հիմնավորել ՄԱ օգտագործումը, այլևս չեն դիտարկում մնացած տարբերակները): Արդյունքում, ոչ մրցութային, ոչ մրցակցային ընթացակարգերի քանակները և դրանցով կատարված գնումները մեծ տեսակարար կշիռ են կազմում:

Բաց մրցույթով (այսուհետ՝ ԲՄ) գնումների տեսակարար կշիռը, կնքված պայմանագրերի ընդհանուր մեծությունը և բոլոր պայմանագրերում ԲՄ ընթացակարգով կնքված պայմանագրերի մեծության տեսակարար կշիռը նվազում է, ինչը նշանակում է, որ պատվիրատուներն ավելի հազվադեպ են գնումները կատարում ԲՄ-ով:

Վերջին տարիներին կտրուկ ավելանում է էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ ԷԱ) ընթացակարգով կատարվող գնումների թիվը և կնքված պայմանագրերի ծավալը: ԷԱ ընթացակարգերի դեպքում մեծ է չկայացած ընթացակարգերի տեսակարար կշիռը: 2021-22թթ. յուրաքանչյուր 4-րդ կամ 5-րդ ընթացակարգը չի կայացել: ԷԱ ընթացակարգի դեպքում համեմատաբար փոքր է նաև հանրային միջոցների տնտեսումը:

Նվազում է գնանշման հարցում (այսուհետ՝ ԳՀ) ընթացակարգով գնումների թիվը և դրանց տեսակարար կշիռը կազմակերպված բոլոր ընթացակարգերում: Նվազում է նաև ԳՀ

ընթացակարգով կնքված պայմանագրերի ծավալը (դրամային արտահայտությամբ) և դրանց տեսակարար կշիռը կնքված բոլոր պայմանագրերի ընդհանուր ծավալում: 2021-22թթ., յուրաքանչյուր տարի եղել է 20-22 դեպք, երբ պատվիրատուները 80 մլն դրամը գերազանցող գնումներ են կատարել ԳՀ ընթացակարգով: «Պետական գնումների հանրային վերահսկողության և հաշվետվողականության խթանում» ծրագիրը հետամուտ է լինելու, որպեսզի ՀՀ ֆինանսների նախարարությունն իր կանոնադրության համաձայն գնահատական տա այդ գործարքների ՀՀ օրենսդրությանը համապատասխանության վերաբերյալ և եթե տեղի ունեցել ՀՀ օրենսդրության խախտում, համապատասխան միջոցներ ձեռնարկի, ինչպես նաև նախատեսի պատվիրատուների կողմից հետագայում նման գործելաձևը բացառող մեխանիզմներ:

ՄԱ ընթացակարգով կատարվող գնումների քանակը կազմում է բոլոր կատարված գնումների 44.5%-47.0%: Չնայած կնքված պայմանագրերի ծավալը դրամային արտահայտությամբ մեծացել է, դրանց տեսակարար կշիռը բոլոր կատարված գնումների ծավալում նվազել է: ՄԱ ընթացակարգերի դեպքում այլ ընթացակարգերի համեմատ հանրային ֆինանսական միջոցների խնայողություն գրեթե չի լինում: Եթե ԳՀ արդյունքում սնտեսումները 2020-22թթ. կազմել են պայմանագրի արժեքի համապատասխանաբար 11.2%, 11.7% և 9.5%, ԲՄ-ի արդյունքում՝ 7.8%, 5.7%, 8.9%, ԷԱ-ի արդյունքում՝ 1.7%, 4.2%, 3.0%, սակայն ՄԱ-ի դեպքում կազմել են 1.0%, 0.5% և 0.5%: ***ՄԱ ընթացակարգն ապահովում է բյուջետային միջոցների նվազ արդյունավետ և խնայողական օրգտագործում:***

«Պետական գնումների հանրային վերահսկողության և հաշվետվողականության խթանում» ծրագրի շրջանակներում հասուկ ուշադրություն կդարձվի հանձնման-ընդունման փուլում առկա կարգավորումներին և կներկայացվեն այն բարելավելու վերաբերյալ առաջարկություններ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը հրապարակում է ԵԱՏՄ անդամ երկրների գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակների հղումները և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը: Պատվիրատուների որոշումները մասնակիցները կարող են բողոքարկել դատական կարգով, ինչը կարող է զգալիորեն ծանրաբեռնալ արդեն իսկ ծանրաբեռնված դատական համակարգը: ՀՀ ֆինանսների նախարարությունը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի ***պատճառաբանված*** որոշման հիման վրա: Հայտնի չէ, թե արդյոք ՀՀ ֆինանսների նախարարությունն ունի պատվիրատուների ղեկավարների որոշումների պատճառաբանված լինելու հանգամանքը ստուգելու մեխանիզմներ և գործիքներ: Հայտնի չէ նաև, թե ով է հսկում պատվիրատուների ղեկավարների որոշումների պատճառաբանված լինելու հանգամանքը:

Գնումների գործընթացի նկատմամբ հանրային վստահությունը կբարելավվի և դատական համակարգի վրա դրվող բեռը կմեղմվի, եթե հնարավոր լինի ձևավորել պատվիրատուների որոշումների պատճառաբանված լինելը հավաստող ***անկախ*** մեխանիզմ կամ գործիք: Չի հայտնաբերվել դեպք, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը մասնակցին չներառի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, պատվիրատուի որոշումը բավարար պատճառաբանված չլինելու հիմնավորվածությամբ:

Ներկա ձևաչափով հնարավոր չէ ավտոմատ եղանակով գտնել տեղեկատվություն, թե որ պատվիրատուն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մատակարարին ներառելու քանի որոշում է կայացրել յուրաքանչյուր տարի, քանի դեպքում է նման որոշում կայացրել միննույն ընկերության նկատմամբ, ըստ տարիների ինչպես է փոփոխության ենթարկվում նման որոշումների

քանակը, մինչև մատակարարը քանի անգամ է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, որ պատվիրատուներն են որոշում կայացրել տվյալ մատակարարին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, այլ տեղեկատվություն, որը քաղաքականություն, մշակողների, պատվիրատուների, մատակարարների, ՀԿ-ների, լրատվամիջոցների, վերլուծաբանների համար կարող է արժեքավոր լինել:

Այս հետազոտության շրջանակներում չի հաջողվել գտնել վկայություններ, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը կատարում է հանրային հատվածի կազմակերպությունների գնումների (գործարքների) ՀՀ օրենսդրությանը համապատասխանությունը գնահատելու իր կանոնադրական պարտականությունը:

ՀՀ կառավարությունը չի ապահովում գնումների գործընթացի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, քանի որ Armeps համակարգում առկա են մեծ թվով անճշտություններ, նիստերի արձանագրությունները պարունակող ինտերնետային էջերը չունեն որոնման հնարավորություն (և որևէ արձանագրություն փնտրելու համար պետք է թերթել տասնյակ ինտերնետային էջեր)

2020-22թթ. կազմակերպված ընթացակարգերի 8.8-12.0 տոկոսը չեն կայացել: ՀՀ ֆինանսների նախարարությունը ներկայացնում է չկայացած ընթացակարգերի վերաբերյալ տվյալները, սակայն չի ներկայացնում դրանց պատճառների վերլուծություն և չի ներկայացնում տեղեկատվություն: Ընթացակարգերը կարող են չկայանալ ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներով: ***Մեծ քանակով ընթացակարգեր չկայացած հայտարարելը կոռուպցիոն ռիսկերի առկայության մասին նախագգուշացնող կարմիր դրոշակ է:***

Մի շարք դեպքերում պատվիրատուները գնումների պլանով նախատեսված մեծությունը գերազանցող գումարով պայամանագիր են կնքում մատակարարների հետ, ապա հետագայում, փոխադարձ համաձայնությամբ նվազեցնում են պայմանագրում նշված մեծությունը: Այս գեկույցը ներկայացնում է նման երկու դեպք, որոնցից մեկը ՀՀ ՆԳՆ, մյուսը Երևանի քաղաքապետարանի գործունեության ընթացքում: Դրա հետ կապված առաջանում են մի շարք հարցեր: Օրինակ, ինչու է անհրաժեշտ կնքել գնումների պլանում նշված մեծությունը գերազանցող մեծությամբ պայմանագիր, եթե վերջնական արդյունքում պարզվում է, որ պատվիրատուն կարող է իր առջև դրված խնդիրների լուծմանը հասնել գնումների պլանով նախատեսված գումարով: Հավանական է, որ այդ լրացուցիչ միջոցները հասանելի լինելու դեպքում դրանք կարող էին օգտագործվել ոչ նպատակային, անարդյունավետ և ոչ խնայողաբար: ***Նման գործելաճը կոռուպցիոն ռիսկերի առկայության մասին նախագգուշացնող կարմիր դրոշակ է:***

Գնումը կարող է կատարվել գնանշման հարցման (այսուհետ՝ ԳՀ) ձևով, եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի 80-ապատիկը (80 մլն դրամ), և գնման առարկան ներառված չէ ԷԱ միջոցով ձեռք բերվող սպրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակում: 2021-22թթ. ԳՀ ընթացակարգով գնում կատարելիս պատվիրատուները 42 դեպքում կնքել են 80 մլն դրամը գերազանցող պայմանագրեր: ՀՀ ֆինանսների նախարարության հաշվետվությունները և այլ փաստաթղթեր չեն բացատրել օրենքով սահմանված շեմը գերազանցելու պատճառները և դրա իրավական հիմքերը: ***ԳՀ ընթացակարգով, օրենքով սահմանված շեմը գերազանցող գնումները կոռուպցիոն ռիսկերի առկայության մասին նախագգուշացնող կարմիր դրոշակ է:***

«Գնումների մասին» օրենքում 2022թ. կատարված փոփոխությունների արդյունքում ***գնումների հետ կապված որոշումները և գործողությունները կարող են բողոքարկվել դատարանում:*** 2022թ. երկրորդ կիսամյակում պատվիրատուների որոշումների և

գործողությունների դեմ ներկայացվել է 31 դատական հայց: Դրանցից 3-ը եղել են հրավերի պայմանների, 15-ը՝ հայտերի գնահատման փուլում գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած որոշումների, 10-ը՝ պայմանագրերը միակողմանի լուծելու և 13-ը՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատվիրատուի ղեկավարի որոշման դեմ: Դատարանները բավարարել են ներկայացված հայցերից 8-ը, որոնց վերաբերյալ մանրամասները ներկայացված են հաշվետվության մեջ: 2023թ.գնումների հետ կապված որոշումների և գործողությունների դեմ դատարան ներկայացված որոշումների վերլուծությունը հնարավորության դեպքում կկատարվի միջանկյալ կամ վերջնական հաշվետվությունում:

Գնումներ կատարելու նպատակով պատվիրատուներն օգտագործում են օրենքով չնախատեսված գնում չհանդիսացող ծախս (այսուհետ՝ ԳՉՕ) «ընթացակարգ»: 2018թ. ՀՀ կառավարության որոշմամբ սահմանել է ԳՉՕ հասկացությունը և այդ «ընթացակարգի» օգտագործման դեպքերը (օրինակ, նախորդ տարիների բյուջեների կատարման ընթացքում ստանձնած պարտավորությունների դիմաց առաջացած պարտքերի մարմանն ուղղվող ծախսերը): Եթե ՄԱ ընթացակարգի դեպքում պատվիրատուները պետք է նշեն այն օգտագործելու հիմքերը, ապա ԳՉՕ դեպքում այդպիսի պահանջ գոյություն չունի:

2022թ. պատվիրատուները 5,792.7 մլրդ դրամի 2488 գնում են կատարել ԳՉՕ «ընթացակարգով»: 2023թ. դեկտեմբերի 2-ի դրությամբ ԳՉՕ ընթացակարգով կնքվել է 6,521.5 մլն դրամ ծավալով 2322 պայմանագիր (նոյեմբերի 21-ի դրությամբ կնքվել էր 6492.8 մլն դրամ ծավալով 2149 պայմանագիր): «Գնումների մասին» ՀՀ օրենքով չնախատեսված «ընթացակարգի» օգտագործումը խնդրահարույց է, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ «ընթացակարգով» պատվիրատուները ձեռք են բերում նույն ապրանքները, ծառայությունները և աշխատանքները, որոնք ձեռք են բերում օրենքով նախատեսված 4 ընթացակարգերով: Armeeps համակարգի տվյալների հետազոտության արդյունքում կարելի է հանգել եզրակացության, որ պատվիրատուները ԳՉՕ-ն օգտագործում են «Գնումների մասին» օրենքը շրջանցելու համար: **«Գնումների մասին» օրենքով չնախատեսված «ընթացակարգի» օգտագործումը, որով ձեռք են բերվում այն նույն ապրանքները, աշխատանքները և ծառայությունները, որոնք ձեռք են բերվում օրենքով նախատեսված ընթացակարգերով, հիմք է տալիս մտածելու, որ այս «ընթացակարգը» դարձել է օրենքը շրջանցելու միջոց, ինչը կոռուպցիոն ռիսկերի առկայության մասին նախազգուշացնող կարմիր դրոշակ է:**

ՀՀ ֆինանսների նախարարությանն առաջարկում ենք գնումների վերաբերյալ իր տարեկան հաշվետվության մեջ անդրադարձնել գնում չհանդիսացող ծախս «ընթացակարգով» գնումներին և իր կանոնադրական պարտականության համաձայն տալ ՀՀ օրենսդրությանը դրանց համապատասխանության գնահատականը (ԳՉՕ «ընթացակարգ» պատվիրատուներն օգտագործել են միայն ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված, թե՛ նաև այլ դեպքերում):

Խնդրահարույց և մտահոգիչ է պետական կառավարման համակարգում ներքին ֆինանսական հսկողության գործառնություն ըստ էության բացակայությունը: Հաշվեքննիչ պալատի եզրակացություններն արձանագրում են ներքին հսկողական համակարգի բացակայության կամ վատ աշխատանքի փաստեր: 2020թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացության մեջ ՀՀ հաշվեքննիչ պալատը նշել էր, որ «շարունակվել է ներքին աուդիտի առաջադրանքների թիվ անկումը» և որ մտահոգիչ է նաև որակական անկումը: Նույն փաստաթղթում ՀՀ հաշվեքննիչ պալատն արձանագրել էր, որ «պետական մարմինների ներքին հսկողության համակարգի թերացումները կարող են ժամանակին չբացահայտվել և չկանխարգել, որի պայմաններում թուլանում է նաև ֆինանսական կարգապահությունը, ստեղծվում է նպատավոր միջավայր անհամապաս-

տասխանությունների և խեղաթյուրումների առաջացման համար, խաթարվում է արտաքին աուդիտոր (ի դեմս՝ Հաշվեքննիչ պալատի) – ներքին աուդիտոր կապը»:

2023թ. հունվարի 3-ից մինչև ապրիլի 30-ը ՀՀ ՆԳՆ-ում իրականացված 2022թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 30-ը ներառյալ ՀՀ պետական բյուջեի 2022թ. մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման հաշվեքննության արդյունքում ՀՀ հաշվեքննիչ պալատը եզրակացրել է, որ «Ոստիկանությունում հաշվեքննությանը ընդգրկված ժամանակահատվածում ներքին աուդիտ չի իրականացվել, որի արդյունքում չի ապահովվել «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նպատակներին հասնելու ուղղված արդյունքները»:⁴ ***Ներքին ֆինանսական հսկողության համակարգի բացակայությունը կամ դրա վատ աշխատանքը լայն դաշտ է բացում կոռուպցիոն գործարքների համար և այդ առումով կոռուպցիոն ռիսկերի առկայության մասին նախազգուշացնող կարմիր դրոշակ է:***

Պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունը մանրամասն տեղեկատվություն է ներառում տարբեր դասակարգումներով բյուջեի կատարման ինչպես նաև պետական բյուջեի կատարման հետ կապված մի շարք կարևորագույն գործընթացների և աշխատանքների վերաբերյալ: Սակայն բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունը չի ներկայացնում տեղեկատվություն պլանավորված գնումների, գնումների պլանում կատարված փոփոխությունների, կատարված գնումների արդյունքում ունեցած խնայողությունների, գնումների հետ կապված այլ կարևոր հանգամանքների վերաբերյալ, չի անդրադառնում յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին ՀՀ կառավարության որոշման հավելվածով (սովորաբար հավելված 10) հաստատված գնումների պլանի կատարմանը: ***ՀՀ իշխանությունները պետք է բարելավեն գնումների վերաբերյալ հաշվետվողականությունը և պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության շրջանակներում հաշվետվություն ներկայացնեն գնումների պլաններին փաստացի կատարված գնումների համապատասխանության, առաջացած խնայողությունների և գնումների հետ կապված այլ աշխատանքների և ընթացակարգերի վերաբերյալ:***

ՀՀ հաշվեքննիչ պալատը և ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը բացահայտում են գնման առարկայի բնութագրերի, ընթացակարգերի օգտագործման, պայմանագրի կատարման, ընդունման-հանձնման փուլի հետ կապված խնդիրներ, որոնց հետ կապված իրավիճակը չի բարելավվում:

Չի կարելի բացառել, որ հաշվի առնելով սուղ ժամանակը, այս մեկնարկային հաշվետվության տեսադաշտից կարող են վրիպել գնումների և գնումների գործընթացի հետ կապված առանձին կարևոր հանգամանքներ: Ծրագրում ներգրավված թիմն ակնկալում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության հետ համագործակցային ոգով աշխատանքների կազմակերպումը կօգնի բացահայտել բոլոր էական խնդիրները և փորձել լուծումներ գտնել:

1. Ներածություն

2022թ. օգոստոսի 25-ին ՀՀ վարչապետն ընդունել է «Գնումների համակարգի զարգացման հայեցակարգը և դրանից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N°977-Լ որոշումը: Գնումների համակարգի խնդիրները բաժնում ՀՀ վարչապետն արձանագրել է, որ «Թեև գնումների համակարգի ներդրված մոդելը հիմնականում բնորոշվում է միջազգային չափանիշներին համապատասխան, սակայն ներկայումս

⁴ ՀՀ հաշվեքննիչ պալատի 2023թ. ապրիլի 26-ի թիվ 69-Ա որոշման հավելված. «Ընթացիկ եզրակացություն Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությունում 2022 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ»: Հասանելի է <https://armsai.am/hy/current-conclusions> էջում:

գործնականում տեսանելի են հետևյալ խնդիրները. (1) ղեկավար կազմի, պատասխանատու ստորաբաժանումների և գնումների մասնագետների միջև գնումների համակարգի վերաբերյալ տեղեկատվական խզումների առկայություն, (2) նախնական հսկողության գործառնություն իրականացման կարողության ցածր մակարդակ, (3) հակամրցակցային համաձայնությունների հավազմման ցածր կարողություններ և թույլ զարգացած մեխանիզմներ, (4) գնումների ոչ համարժեք պլանավորման պրակտիկա, (5) տեխնիկական առաջադրանքների մշակման կարողությունների ցածր մակարդակ, (6) պայմանագրերի կառավարման և որակի հսկողության կարողությունների ցածր մակարդակ, (7) ավտոմատացման ցածր մակարդակ և գործառնական անհամաչափ բարձր ծախսեր»:

Չնայած 2012-23թթ. ՀՀ կառավարությունների ձեռնարկած ջանքերին, որոնք հակիրճ ներկայացված են հավելված 1-ում, ՀՀ վարչապետն իր որոշմամբ ընդունված հայեցակարգում լրջագույն խնդիրներ է արձանագրել գնումների գործընթացի բոլոր առանցքային փուլերում: ՀՀ վարչապետի 2022թ. օգոստոսի 25-ի №977-Լ որոշմամբ հաստատված գնումների համակարգի զարգացման հայեցակարգի և դրանից բխող միջոցառումների ծրագրի կատարման վերաբերյալ «Իրազեկ քաղաքացիների միություն» խորհրդատվական ՀԿ-ի 2023թ. նոյեմբերի 15 հարցմանն ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարությունը ղեկտեմբերի 4-ին տրամադրել է տեղեկատվություն, որից հետևում է, որ կամ հայեցակարգով նախատեսված միջոցառումները կատարվել են 2022-23թթ., կամ ունեն շարունակական բնույթ: Քանի որ մասուլը և փորձագիտական հանրությունը շարունակում են բարձրաձայնել գնումների համակարգում առկա համակարգային խնդիրների և դրանց պարբերական և հաճախակի դրսևորումների մասին, կարելի է ենթադրել, որ ՀՀ վարչապետի հաստատած հայեցակարգով նախատեսված միջոցառումների ծրագիրն իր սահմանած նպատակներին չի հասել:


«Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական ՀԿ-ի կողմից ՄԹ դեսպանատան ֆինանսավորմամբ իրականացվող «Պետական գնումների հանրային վերահսկողության և հաշվետվողականության խթանում» ծրագիրն ունի երկու նպատակ.

- 1) Օգնել ՀՀ կառավարությանը բարելավել գնումների օրենսդրությունը, կիրառման մեխանիզմները, հանրային միջոցների հաշվին կատարվող գնումների միջոցով հասնել միջոցների նպատակային, արդյունավետ և խնայողական օգտագործման, սպահովել գնումների թափանցիկությունը և հաշվետվողականությունը, և
- 2) Օգնել քաղաքացիական հասարակությանը և լրատվամիջոցներին բարելավել գնումները մշտադիտարկելու կարողությունները:

Վերը նշված նպատակներով պայմանավորված հանրային ռեսուրսների հաշվին գնումներ կատարող պատվիրատուները և քաղաքացիական հասարակության ու լրատվամիջոցների ներկայացուցիչները հանդիսանում են սույն աշխատանքի շահառուներ և թիրախային խմբեր:


ՀՀ ֆինանսների նախարարության հաշվետվությունների համաձայն վերջին տարիներին պատվիրատուները 100 հազարից ավելի գնման ընթացակարգ են կազմակերպում: Կազմակերպված ընթացակարգերի 9-12 տոկոսը չի կայանում տարբեր պատճառներով (գծապատկեր 1)

Գծապատկեր 1. Կայացած և չկայացած ընթացակարգերը 2020-22թթ.




Հետազոտված ժամանակահատվածում ծախսերի մեծ մասը բաժին է ընկնում մեկ անձով կատարված գումներին (զծապատկեր 2):

Գծապատկեր 2. Կնքված պայմանագրերի արժեքն ըստ ընթացակարգի (մլն դրամ)



Եթե համեմատենք կայացած գնման ընթացակարգերով կնքված պայմանագրերի ընդհանուր արժեքը նախահաշվային գնի հետ, կատարվի, որ խնայողությունների զգալի մասը կատարվում է մրցութային ընթացակարգերով իրականացված գումների դեպքում (զծապատկեր 3):

Գծապատկեր 3. Խնայողություններն ըստ գնման ընթացակարգերի



Աղյուսակ 1. Պատվիրատուների կողմից կազմակերպված գնման ընթացակարգերը

	2020թ.	2021թ.	2022թ.
Կազմակերպված ընթացակարգերի քանակը	1 15,305	1 13,506	1 24,019
որից			
Կայացած ընթացակարգերի քանակը	104,372	99,887	113,054
Չկայացած ընթացակարգերի թվաքանակը	10,933	13,619	10,965
Չկայացածները կազմակերպվածների տոկոս	9.5	12.0	8.8
Կայացած ընթացակարգերի քանակական տվյալները ըստ գնման ձևերի			
Բաց մրցույթ	2,557	3,015	2,394
Հրատույ պաց մրցույթ	421	271	864
Երկփուլ մրցույթ	3	1	21
Շրջանակային համաձայնագիր	8	8	-
Գնանշման հարցում	54,963	3,592	38,571
Էլեկտրոնային աճուրդ	25	259	18,754
Հրատույ մեկ անձ	-	243	469
Մեկ անձ	46,395	46,892	51,981
Նախահաշվային արժեքը (մլն դրամ), այդ թվում	322,246.2	339,369.8	404,238.3
Բաց մրցույթ	89.851,9	81.507,7	75.667,9
Հրատույ պաց մրցույթ	38.059,1	47.886,1	65.741,9
Շրջանակային համաձայնագիր	59,4	54,0	-
Երկփուլ մրցույթ	371,7	390,3	446,8
Գնանշման հարցում	50.697,5	46.842,5	39.689,2
Էլեկտրոնային աճուրդ	734,8	5.697,7	55.878,6
Հրատույ մեկ անձ		20.301,2	18.590,8
Մեկ անձ	142.471,8	136.690,2	148.223,2

Ընդամենը կնքված պայմանագրերի ընդհանուր արժեք, մլն. Դրամ, այդ թվում	306.844,6	327.914,8	390.592,7
Բաց մրցույթ	83.316,4	77.126,3	73.617,2
Հրատապ բաց մրցույթ	35.751,2	46.998,3	60.140,6
Երկվույ մրցույթ	59,4	54,0	429,9
Շրջանակային ամսականագիր	371,7	390,3	
Գնանշման հարցում	45.600,9	41.951,7	36.225,5
Էլեկտրոնային աճուրդ	722,2	5.465,9	54.245,5
Հրատապ մեկ անձ		19.954,6	18.400,9
Մեկ անձ	141.022,8	135.973,7	147.533,1

Աղբյուր. ՀՀ ֆինանսների նախարարություն

Պետական գնումների համակարգի տարբեր փուլերի աշխատանքի հետ մի շարք ռիսկեր են կապված, ինչը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ որոշում կայացնողները տնօրինում են ոչ թե իրենց անձնական, այլ հանրային միջոցներ և կարող են բավարար զգուշավորություն, խոհեմություն, հեռատեսություն և անշահախնդրություն չցուցաբերել: Գործընթացի նկատմամբ ներքին և արտաքին թույլ հսկողությունը և վերահսկողությունը կարող է հանգեցնել պետական միջոցների ոչ նպատակային, անարդյունավետ և ոչ խնայողաբար օգտագործման:

Մեթոդաբանություն

Այս հաշվետվությունը պատրաստելու նպատակով հետազոտվել են գնումների բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրությունը. «Գնումների մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության որոշումներ, ՀՀ ֆինանսների նախարարի հրամաններ:

Գնումների համակարգում առկա խնդիրների և համակարգի զարգացման ՀՀ կառավարության տեսլականը հասկանալու նպատակով հետազոտվել են ՀՀ կառավարության հայեցակարգային և ռազմավարական փաստաթղթերը, ինչպես օրինակ ՀՀ կառավարության 2019թ. նոյեմբերի 28-ին N°1716-Լ որոշմամբ հաստատված «Պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թվականների բարեփոխումների ռազմավարությունը և պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների 2019-2023 թվականների գործողությունների ծրագիրը» և ՀՀ վարչապետի 2022թ. օգոստոսի 25-ի N°977-Լ որոշմամբ հաստատված «Գնումների համակարգի զարգացման հայեցակարգը և դրանից բխող միջոցառումների ծրագիրը» :

Հետազոտվել են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող գնումների տարբեր տարիների հաշվետվությունները, Armepps համակարգում և www.gnumner.minfin.am կայքում առկա տվյալներն ու տեղեկատվությունը: Հնարավորության և անհրաժեշտության դեպքում տարբեր աղբյուրներից ստացված տվյալները և տեղեկությունները համադրվել և համեմատվել են:

Առանձին տվյալներ և տեղեկություններ ստանալու նպատակով հարցումներ են ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարություն:

Հետազոտվել են ՀՀ հաշվեքննիչ պալատի առանձին ընթացիկ եզրակացություններ, որոնք ի թիվս պետական ֆինանսական կառավարման հետ կապված բազմաթիվ հարցերի նաև անդրադառնում են առանձին պատվիրատուների կողմից կատարվող գնումներին և կազմակերպվող ընթացակարգերին ու գործընթացներին: Այդ եզրակացություններում առկա տեղեկատվությունը համադրվել և համեմատվել է Armepps համակարգի և www.gnumner.minfin.am կայքում առկա տեղեկատվության հետ:

Վերը ներկայացված հետազոտությունների արդյունքում կուտակված տվյալների և տեղեկությունների համադրման արդյունքում արվել են եզրակացություններ, անհրաժեշտության դեպքում ներկայացվել են նախնական առաջարկություններ:

Հետազոտությունն առերեսել է մի քանի սահմանափակում, որոնցից առաջինը ժամանակն է: Նման կարևոր և մեծ քանակով տվյալներ ու տեղեկություններ պարունակող բնագավառն ավելի շատ ժամանակ է պահանջում: Երկրորդը, Armeeps համակարգի և www.gnumner.minfin.am կայքի հետ կապված խնդիրներն են: Երրորդը, առանձին տվյալներ և տեղեկությունն ստանալու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարությանը հղված գրությունների պատասխանների ուշացումը:

Հետագայում գնումների համակարգը կոխովի նաև ԵՄ հետ ՀՀ ստորագրած Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի համատեքստում:

2. Գնումների պլանավորում

Գնումների պլանավորումը գնումների գործընթացի առանցքային փուլերից մեկն է: Որակյալ պլանից է կախված դրա հետագա հաջող իրականացումը, բյուջետային միջոցների նպատակային, արդյունավետ և խնայողական օգտագործումը, հարկաբյուջետային կարգապահության ապահովումը, բյուջետային միջոցների բաշխման և գործառնական արդյունավետության ապահովումը:

Պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանը հաստատվում է բյուջետային ծախսերի գերատեսչական և գործառնական դասակարգմամբ: «Գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելու և հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի»: ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշման համաձայն գնման գործընթացն սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում:

Գնման պահանջի ծագման օրը հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում: Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջների և համապատասխան հաստատված և հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին ՀՀ կառավարության որոշման հավելվածով (սովորաբար հավելված 10) հաստատվում է այդ տարվա պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով սահմանված բյուջետային հասկացումների հաշվին պետության կարիքների համար տվյալ տարում իրականացվող գնումների պլանը: Գնումների պլանը սովորաբար հաստատվում է ըստ բյուջետային ծախսերի ծրագրային և գործառնական դասակարգման և ըստ ծրագրերի միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների:

Մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Առանց ֆինանսական միջոցներ նախատեսելու կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Առանց ֆինանսական միջոցներ նախատեսելու պայմանագիր կարող է կնքվել, եթե (1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը, կամ (2) սպրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման

համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

2017թ. ապրիլի 13-ի №390-Ն որոշմամբ ՀՀ կառավարությունը հաստատել է գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը: ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվելիք գնումների պլանը հաստատվում է յուրաքանչյուր տարվա ՀՀ պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումները հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշմամբ՝ առանձին հավելվածով: Գնումների պլանը պատվիրատուի ղեկավարի կողմից հաստատվում է մինչև փետրվարի 1-ը: ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվելիք գնումների պլանում փոփոխություններ և լրացումներ կատարվելու դեպքում պատվիրատուն դրանցում ներառվող գնման ձևերը նախապես համաձայնեցնում է ՀՀ ֆինանսների նախարարության հետ: Գնումների պլանը, ներառյալ դրանում կատարված փոփոխությունները և լրացումները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով հրապարակում է տեղեկագրում: Գնումների պլանում կատարված փոփոխությունը և լրացումները տեղեկագրում հրապարակվում են պլանի ամբողջական տեսքով: ՀՀ ֆինանսների նախարարն իր 2017թ. մայիսի 20-ի №231-Ն հրամանով հաստատել է գնումների պլանում փոփոխություններ և լրացումներ կատարելու ծանուցման օրինակելի ձևը, դրա լրացման կարգը:

ՏՀԶԿ և SIGMA-ի 2019թ. «Հանրային կառավարման սկզբունքները, ելակետային գնահատման զեկույց»-ը նշում է, որ «Գնումների մասին» օրենքի և թիվ 526-Ն որոշման՝ պետական գնումների պլանավորմանն առնչվող դրույթները հիմնականում կարգավորում են ֆինանսական հարցեր՝ նպատակ ունենալով ապահովել, որ ոչ մի պայմանագիր առանց բավարար ֆինանսավորման արդյունավետ չլինի: Անհրաժեշտ է, որպեսզի պատվիրատուները նախապատրաստեն և հրապարակեն իրենց գնումների պլանները: ՏՀԶԿ և SIGMA-ի 2019թ. զեկույցը նշում է, որ թեև ենթադրվում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության կայքէջը պետք է պլանները հասանելի դարձնի հանրությանը, իսկ էլեկտրոնային գնումների կայքէջն ունենա որոնման ֆունկցիա, սակայն ՀՀ ֆինանսների նախարարության կայքէջի հղումները չեն գործում, իսկ էլեկտրոնային գնումների կայքէջը սովորաբար անդրադառնում է ավելի շատ գնման ենթակա առանձին կետերի, քան որևէ ամբողջական գնումների պլանի: **«Պատշաճ ուշադրություն է դարձվում պլանավորման գործընթացին» ցուցանիշի գծով հնարավոր 5 միավորից գեկույցը ՏՀԶԿ և SIGMA-ի 2019թ. Հայաստանի գնումների համակարգին շնորհել է «0» միավոր:**

Այս հետազոտությունը հանգել է եզրակացության, որ ՏՀԶԿ և SIGMA-ի 2019թ. «Հանրային կառավարման սկզբունքները, ելակետային գնահատման զեկույց»-ի Հայաստանի հանրային գնումներում պլանավորման գործընթացին տված գնահատականը մնում է ուժի մեջ⁵:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 3-ի առաջին մասի առաջին կետի համաձայն օրենքի նպատակը «կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում»-ն է: Օրենսդիրը շեշտել է «կարիքին համապատասխան» գնում կատարելու անհրաժեշտությունը: Կարիքները բացահայտելու համար պետք է կատարել կարիքի գնահատում:

Այս հետազոտությունը չի հայտնաբերել վկայություններ, որ գնումների պլանները կապված են պատվիրատուների ռազմավարական նպատակների և կարիքների հետ: Դա են վկայում, ՀՀ կառավարության մի շարք որոշումներ, որոնցով կառավարությունը

⁵ «Պատշաճ ուշադրություն է դարձվում պլանավորման գործընթացին» ցուցանիշի գծով հնարավոր 5 միավորից գեկույցը ՏՀԶԿ և SIGMA-ի 2019թ. Հայաստանի գնումների համակարգին շնորհել է «0» միավոր:

փոփոխություններ է կատարում ՀՀ պետական բյուջեում, գումար հատկացնելով որոշ խոշոր գնումներ կատարելու համար, քանի որ գնումների պլանավորման ժամանակ այդ գնումների կարիքը չի դիտարկվել, նույնիսկ չնայած այն հանգամանքին, որ այդ գնումներն ակնհայտ կերպով անհրաժեշտ են եղել ոլորտներում տեղի ունեցող խոշոր փոփոխություններով պայմանավորված (օրինակ, ուստիկանության): Խնդիրը նրանում է, որ նախարարություններում ու գերատեսչություններում գնումների պլանավորումը դիտվում է գուտ որպես տեխնիկական վարժություն և գնումները չեն պլանավորվում կարիքների գնահատման հիման վրա: Բացառությամբ միջազգային գործընկերների ֆինանսավորմամբ իրականացվող մի քանի ծրագրերի, այս հետազոտության շրջանակներում չի հաջողվել հայտնաբերել կարիքների գնահատման վերաբերյալ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ), հանրային կազմակերպությունների կողմից իրականացված կարիքների գնահատման վերաբերյալ հաշվետվություններ, ուսումնասիրություններ, զեկույցներ կամ այլ փաստաթղթեր:

Ոլորտների ռազմավարություններով և երկարաժամկետ զարգացման ծրագրերով նախատեսված գործողությունների շրջանակներում կատարվող գնումների ֆինանսավորման համար հատկացումները պետք է նախատեսվեն ՀՀ պետական բյուջեով: Եթե պետական բյուջեով ոլորտային ռազմավարություններով և երկարաժամկետ զարգացման ծրագրերով սահմանված նպատակներին հասնելուն ուղղված գործողությունների շրջանակներում գնումներ կատարելու համար պետական բյուջեով միջոցներ չեն նախատեսվում և հետագայում միջոցները հատկացվում են ՀՀ կառավարության որոշումներով, նշանակում է գնումների նախնական պլանը կապված չէ ոլորտի ռազմավարության հետ: Խնդիրը զգալի չափով պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ նախարարությունների և գերատեսչությունների կողմից մշակվող և ՀՀ կառավարության կողմից հաստատվող ռազմավարություններն ու ծրագրերը չեն համապատասխանում ՀՀ վարչապետի 2021թ. դեկտեմբերի 30-ի №1508-Լ որոշմամբ հաստատված պետական եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթերի մշակման, ներկայացման և հսկողության իրականացման մեթոդական հրահանգի պահանջներին:

Օրինակ, կառավարության 2020թ. ապրիլի 23-ի №638-Լ որոշմամբ հաստատվել է ՀՀ ուստիկանության բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող 2020-22թթ. գործողությունների ծրագիրը: Սակայն 2022թ. ՀՀ պետական բյուջեով և ՀՀ կառավարության 2021թ. դեկտեմբերի 23-ի №2121-Ն որոշման հավելված 10-ով չեն նախատեսվել միջոցներ Արագածոտնի, Գեղարքունիքի, Կոտայքի և Տավուշի մարզերում նոր ձևավորվող պարեկային ծառայության ստորաբաժանումների համար մեքենաներ ձեռք բերելու նպատակով: Մեքենաների այդ խմբաքանակը ձեռք բերելու համար ՀՀ կառավարությունը միջոցներ է նախատեսել 2022թ. հուլիսի 21-ի №1129-Ն որոշմամբ: Սա ոլորտային ռազմավարության հետ գնումների պլանի թույլ կապի մեկ օրինակ է:

Գնումների պլաններում հաճախակի և մեծ ծավալով փոփոխություններ են կատարվում: Օրինակ, Երևանի քաղաքապետարանի 2024թ. գնումների պլանում 2023թ. նոյեմբերի 29-ին կատարվել է արդեն 8-րդ փոփոխությունը:

Իրավիճակի փոփոխությանը արձագանքելով գնումների պլանում մի քանի փոփոխությունների կատարումն ընդունելի գործելաձև է: Սակայն պլաններում մշտապես, մեծ քանակով և ծավալներով կատարվող փոփոխությունները համակարգային խնդիրների վկայություն են:

Պատվիրատուները կարողանում են գնումների ընթացակարգեր կազմակերպել նաև առանց գնումների պլանում միջոցներ նախատեսված լինելու: Օրինակ, 2022թ. մայիսի 23-ին Ոստիկանությունը պարեկային ծառայության համար մեքենաների խմբաքանակի

ձեռքբերման մրցույթ էր հայտարարել, առանց այդ մի քանի միլիարդ դրամ արժեքով գնումը ՀՀ կառավարության կողմից գնումների պլանում ներառելու: Մեքենաների այդ խմբաքանակը ՀՀ կառավարությունը գնումների պլանում ներառել է 2022թ. հուլիսի 21-ին (բաց մրցույթից գրեթե 2 ամիս հետո) իր №1129-Ն որոշման հավելված 5-ով:

Առանց ֆինանսական ապահովման և գնումների պլանում նախատեսելու գնման մեկ այլ օրինակ է 6 մարդաստար մեքենա մատակարարելու վերաբերյալ «Մուրան» ՍՊԸ-ի հետ 2022թ. հոկտեմբերի 13-ին ՀՀ ՆԳՆ կնքած պայմանագիրը: 2023թ. փետրվարի 6-ին ՀՀ ՆԳՆ լուծել է այդ պայմանագիրը, քանի որ «գնումների պլանով չհաստատվեց ֆինանսական միջոցներ պայմանագրով նախատեսված թվով 6 հատ մարդաստար մեքենաները ձեռք բերելու համար»: ՀՀ ՆԳՆ գնումների պլանների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է սղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. ՀՀ ՆԳՆ 2022թ. գնումների պլանը համաձայն ՀՀ կառավարության 2021թ. դեկտեմբերի 23-ի №2121-Ն որոշման և Armeps-ի

Ընթացակարգ		Ընթացակարգեր		Մլն դրամ	
		Որոշում	Armeps	Որոշում	Armeps
1	ԲՄ	4	5	1,740.4	1,274.1
2	ՀԲՄ		3		407.9
3	ԵՄ		2		2.3
4	ԷԱ	921	1093	8,403.6	12,271.3
5	ԳՀ	121	242	487.6	1,332.6
6	ՄԱ	58	115	5,437.7	8,962.5
7	ՀՄԱ	-	11	-	1216.9
Ընդամենը		1104	1471	16,069.3	25,467.6

Աղբյուր. ՀՀ կառավարության 2021թ. դեկտեմբերի 23-ի №2121-Ն որոշման և Armeps

ԲՄ՝ բաց մրցույթ, ՀԲՄ՝ հրատապ բաց մրցույթ, ԵՄ՝ երկփուլ մրցույթ, ԷԱ՝ էլեկտրոնային աճուրդ, ԳՀ՝ գնանշման հարցում, ՀՄԱ՝ հրատապ մեկ անձ, ՄԱ՝ մեկ անձ

Առանց գնումների պլանում ֆինանսական միջոցներ նախատեսելու ընթացակարգ նախաձեռնելու հնարավորությունը կասկածի տակ է դնում գնումների պլանավորման ամբողջ գործընթացի անհրաժեշտությունը և գնումների գործընթացի, որպես բյուջետային միջոցների նպատակային, արդյունավետ և խնայողական օգտագործումը ապահովելու և միտված, պատվիրատուների «ախորժակը» զսպող մեխանիզմ լինելը:

Մեծ քանակով և ծավալներով փոփոխությունների արդյունքում պատվիրատուների գնումների պլանները դադարում են արժանահավատ և պատվիրատուների «ախորժակը» սահմանափակող փաստաթղթեր հանդիսանալ: Հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարության տարեկան հաշվետվություններում հրապարակվող գնումների մեծ ծավալը, գնումների պլանների փոփոխության ենթարկված և չենթարկված տողերի թիվը հասնում է մի քանի հարյուր հազարի: ՔՀԿ-ները և լրատվամիջոցները չունեն բավարար կարողություններ գնումների պլանների մի քանի հարյուր հազար տողերի և դրանցում կատարվող փոփոխությունների հիմնավորվածության, նպատակայնության, արդյունավետության նկատմամբ հանրային վերահսկողություն իրականացնելու համար: ՀՀ օրենսդրությունը չի անդրադարձնում գնումների պլաններում կատարվող փոփոխությունների քանակը և ծավալը մշտադիտարկելու համար նախատեսված ներքին հսկողության և վերահսկողության գործիքներին և մեխանիզմներին:

2023թ., արդեն պլանավորման փուլում ՀՀ կառավարությունը նախատեսում է մեկ անձից գնման ընթացակարգն օգտագործել դեպքերի 45.3%-ի դեպքում, կամ դրանցին արտահայտությամբ 48.1% դեպքում: Սա նշանակում է, որ մեկ անձից գնումները կատարվում են ոչ միայն անհետաձգելի կամ հրատապ լինելու հիմքով, այլ պլանավորված:

2021թ. և 2022թ. ՀՀ կառավարությունը պլանավորել է գնումների համապատասխանաբար 57.7% և 47.0% ֆինանսավորել մեկ անձից ընթացակարգով ձեռք բերված ապրանքների, ծառայությունների և աշխատանքների դիմաց վճարելու համար:

Իրավիճակում տեղի ունեցած փոփոխություններին ՀՀ կառավարությունը միջոց կարող է արձագանքել պետական բյուջեում կատարվող մի քանի փոփոխությունների օգնությամբ: Սակայն 2019թ. սկսած ՀՀ կառավարությունը մեծ քանակով և ծավալներով փոփոխություններ է կատարում պետական բյուջեներում և գնումների պլաններում:

Պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունը մանրամասն տեղեկատվություն է ներառում տարբեր դասակարգումներով բյուջեի կատարման, ինչպես նաև պետական բյուջեի կատարման հետ կապված մի շարք կարևորագույն գործընթացների և աշխատանքների վերաբերյալ: Սակայն բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունը չի ներկայացնում տեղեկատվություն պլանավորված գնումների, գնումների պլանում կատարված փոփոխությունների, գնումների հետ կապված այլ կարևոր հանգամանքների վերաբերյալ, չի անդրադառնում պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին ՀՀ կառավարության որոշման հավելվածով հաստատված գնումների պլանի կատարմանը: ՀՀ կառավարության որոշումներով հաստատված 2021-23թթ. գնումների պլանների հիմնական ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 3-ում:

Պատվիրատուների ռազմավարությունների հետ կապ չունեցող, առանց կարիքների գնահատման պատրաստված, մեծ քանակով և մեծ ծավալներով փոփոխությունների ենթարկվող, մեծ քանակով և ծավալով ոչ մրցութային, ոչ մրցակցային ընթացակարգերով գնումներ նախատեսող գնումների պլանները հանգեցնում են հանրության կողմից վճարվող հարկերի հաշվին վարձատրվող աշխատակիցների ժամանակի վատնման, հնարավոր կոռուպցիոն գործարքների համար հող նախապատրաստելու նշան կարող է հանդիսանալ և կոռուպցիոն ռիսկերի առկայության մասին նախազգուշացնող կարմիր դրոշակ է:

Աղյուսակ 3. ՀՀ կառավարության որոշումներով հաստատված 2021-23թթ. գնումների պլաններ

	2021թ.				2022թ.				2023թ.			
	Ընթ.	%	ՀՀ դրամ	%	Ընթ.	%	ՀՀ դրամ	%	Ընթ.	%	ՀՀ դրամ	%
ԲՄ	244	1.7	58,994,685.4	29.5	126	0.9	78,602,896.6	32.1	228	1.6	71,252,310.9	26.9
ՀԲՄ	21	0.1	3,113,985.1	1.6	24	0.2	5,190,706.4	2.1	39	0.3	8,567,266.3	3.2
ԳՀ	11286	78.0	22,380,638.6	11.2	4,361	29.7	12,254,611.7	5.0	4,029	27.7	13,625,800.1	5.1
ԷԱ	0	0.0	0.0	0.0	7,314	49.9	32,578,902.9	13.3	6,576	45.3	39,839,600.4	15.0
ՀՄԱ	7	0.0	52,806.0	0.0	12	0.1	1,229,666.5	0.5	9	0.1	1,581,825.8	0.6
ՄԱ	2902	20.1	115,167,161.5	57.7	2,823	19.3	115,291,343.0	47.0	6,579	45.3	130,354,355.4	48.1
Ընդամենը	14460	100.0	199,709,276.6	100.0	14660	100.0	245,148,127.1	100.0	14,530	100.0	265,221,218.9	100.0

Աղբյուր. ՀՀ կառավարության որոշումներ

Ծանոթություններ. Ընթ.՝ ընթացակարգ, %՝ տեսակարար կշիռը:

ԲՄ՝ բաց մրցույթ, ՀԲՄ՝ հրատապ բաց մրցույթ, ԳՀ՝ գնանշման հարցում, ԷԱ՝ էլեկտրոնային աճուրդ, ՀՄԱ՝ հրատապ մեկ անձ, ՄԱ՝ մեկ անձ

Եզրակացություն

Գնումների պլան կազմելու և հրապարակելու օրենսդրական պահանջը նվազ արժեքավոր է, եթե չկա օրենքի այդ պահանջի կատարման նկատմամբ հսկողություն:

Չկա որևէ վկայություն, որ կներկայացնի.

- պատվիրատուների մեծ մասի գնումների պլանների կապը նրանց ռազմավարությունների և գնահատված կարիքների հետ:
- տվյալ գնման առաջնահերթությունը և թույլ կտա ապահովել հանրությանը մատուցվող սպրանքների կամ ծառայությունների ներկա մակարդակը կամ բարելավել այն (արդյունքում, պլանում փոփոխություններ կատարելու համար կարիք չկա լուրջ հիմնավորումներ ներկայացնել):

Գնումների պլաններում կատարվում են մեծ թվով և ծավալներով փոփոխություններ: Արտակարգ և չկանխատեսված իրավիճակներում կարելի է և անհրաժեշտ է փոփոխություններ կատարել գնումների պլաններում: Սակայն մեծ թվով և ծավալներով փոփոխությունները վկայում են պլանավորման համակարգում լրջագույն խնդիրների առկայության մասին:

Պատվիրատուները զգալի ռեսուրս են ծախսում գնումների պլանում չներառված ֆինանսական միջոցներով ընթացակարգ կազակերպելու և հետագայում կնքված պայմանագիրը լուծելու համար: Գնումների պլաններում կատարվող փոփոխությունները, չպլանավորված ընթացակարգեր կարգմակերպելը, պայմանագրերը լուծելը և այլ նման «աշխատանքներ» կատարելը հանգեցնում են հանրության կողմից վճարած հարկերի հաշվին վարձատրվող աշխատակիցների աշխատատեղանակի անարդյունավետ օգտագործման:

Մեծ քանակով և ծավալներով փոփոխությունները վկայում են, որ ՀՀ կառավարության կողմից պետական բյուջեով ֆինանսական միջոցների հատկացումները և գնումների պլանը նպատակային և արդյունավետ չեն եղել և անհրաժեշտություն է առաջացել վերանայել դրանք: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոչ պետական բյուջեով նախատեսված հատկացումները և գնումների պլանը, ոչ էլ դրանցում հետագայում կատարվող փոփոխությունները բավարար խորությամբ գննության չեն ենթարկվում, չի կարելի վստահ լինել, որ փոփոխություններից հետո ՀՀ կառավարությունը ապահովում է բաշխման և գործառնական արդյունավետություն:

ՀՀ ֆինանսների նախարարության հաշվետվություններում, ՀՀ հաշվեքննիչ պալատի և ՊՎԾ եզրակացություններում և այլ հրապարակումներում բավարար անդրադարձ չկա գնումների պլաններին և դրանցում կատարվող փոփոխությունների քանակին և ծավալին:

Առաջարկություններ

ՀՀ կառավարությունը պետք է հետամուտ լինի որպեսզի.

- պատվիրատուները գնումների պլանը կապեն ռազմավարությունների հետ:
- գնումների պլանները կազմվեն կարիքների գնահատման վրա:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պետք է ուսումնասիրի գնումների պլաններում կատարվող փոփոխությունների քանակները և ծավալները, գնահատի կատարված փոփոխությունների համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը, հանրային միջոցների օգտագործման արդյունքում «կարիքին համապատասխան սպրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում»-ը, «հատուցման դիմած արժեք» ստեղծելու հանգամանքը, և այդ տվյալները, վերլուծությունը և իր գնահատականը ներառի իր կողմից հրապարակվող տարեկան հաշվետվություններում:

3. Գնումների կատարում

«Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 18-ի 1-րդ մասի համաձայն գնում կատարելու ընթացակարգերն են (1) էլեկտրոնային աճուրդը, (2) մրցույթը, (3) գնանշման հարցումը, (4) մեկ անձից գնումը: Գնումների կատարման նախընտրելի ձևը մրցույթն է: Մրցույթը լինում է բաց և փակ: Փակ մրցույթը լինում է նպատակային կամ պարբերական:

ՏՀԶԿ և SIGMA-ի 2019թ. զեկույցը նշում է, որ գնումների գործընթացը, սկզբունքորեն բաց է որակավորման չափանիշները բավարարող ցանկացած տնտեսվարող սուբյեկտի համար: Այնուամենայնիվ, զեկույցն ընդգծում է, որ 2017թ մայիսի 4-ի №526-Ն որոշման 61-րդ կետի 1-ին ենթակետով սահմանվում է լրացուցիչ պահանջ՝ ներկայացնելու փաստեր համանման պայմանագիր իրականացրած լինելու մասին: Զեկույցն ընդգծում է, որ նման պայմանը մեծապես սահմանափակում է մրցակցությունը՝ սահմանափակելով թե՛ հայաստանյան, և թե՛ օտարերկրյա ընկերությունների մուտքը պետական գնումների շուկա: Մա սկնհայտորեն հակասում է «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին, ինչպես նաև պետական գնումների մասին համաձայագրի VIII.2 (ա) հոդվածի պահանջներին: 2019թ. հետո համանման պայմանագիր իրականացրած լինելու վերաբերյալ դրույթները վերաձևակերպվել են:

Ներկայումս, գնման ընթացակարգի ընտրության գործընթացն ընտրվում է պատկեր 1-ում ներկայացված տրամաբանությամբ:

3.1. Բաց մրցույթ

Մրցույթով կամ բաց մրցույթով (այսուհետ՝ ԲՄ) գնումներ կատարելու դեպքում պատվիրատուն ձևավորում է գնահատող հանձնաժողով և նշանակում է քարտուղար, ով գնահատող հանձնաժողովի անդամ չէ, այլ կազմակերպում է վերջինիս աշխատանքը: Եթե հրավերով սահմանվել է, որ հայտերը գնահատելիս առաջարկվող գնից բացի հաշվի են առնվելու ոչ գնային այլ չափանիշներ և հրավերում ներկայացվել են այդ չափանիշների հարաբերական կշիռները, ապա ընտրվում է այն մասնակիցը, որի առաջարկած գնային և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարն ամենաբարձրն է: Հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Ընտրված մասնակիցը պայմանագիրը կնքում է անգործության ժամկետը լրանալուն հաջորդող 4-րդ աշխատանքային օրը, այլապես զրկվում է այդ իրավունքից:


ՀՀ ֆինանսների նախարարության հաշվետվությունների համաձայն 2022թ. նվազել են ԲՄ ընթացակարգով գնումների դեպքերն ինչպես բացարձակ մեծությամբ, այնպես էլ բոլոր ընթացակարգերի թվում դրանց տեսակարար կշիռը (աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Կայացած ԲՄ և ՀԲՄ ընթացակարգերի տեսակարար կշիռը բոլոր ընթացակարգերում

Գնման ձևը	2020թ.	2021թ.	2022թ.
ԲՄ	2557	3015	2394
<i>ԲՄ տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ, %</i>	<i>2.4</i>	<i>3.0</i>	<i>2.1</i>
ՀԲՄ	421	271	864
<i>ՀԲՄ տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ, %</i>	<i>0.4</i>	<i>0.3</i>	<i>0.8</i>
Ընդամենը ընթացակարգեր	104,372	99,887	113,054

Աղբյուր. ՀՀ ֆինանսների նախարարություն

Պատկեր 1. Գնումների ընթացակարգի ընտրության գործընթացի ներկայացրած տրամաբանությունը



Չնայած չկայացած ընթացակարգերի տեսակարար կշիռը բոլոր կազմակերպած ընթացակարգերի մեջ նվազում է, սակայն 2022թ. յուրաքանչյուր 8 ԲՄ ընթացակարգից մեկը չի կայացել (աղյուսակ 5): 2020թ. չի կայացել կազմակերպած ԲՄ ընթացակարգերից մոտավորապես յուրաքանչյուր երրորդը, իսկ 2021թ.՝ մոտավորապես յուրաքանչյուր 4-րդը:

Աղյուսակ 5. 2020-22թթ. կայացած և չկայացած ԲՄ և ՀԲՄ ընթացակարգերի թիվը

Գուման ձևը	2020թ.	2021թ.	2022թ.
ԲՄ և ՀԲՄ կայացած ընթացակարգերի քանակները			
ԲՄ	2557	3015	2394
Հրատապ ԲՄ (այսուհետ՝ ՀԲՄ)	421	271	864
ԲՄ և ՀԲՄ չկայացած ընթացակարգերի քանակները			
ԲՄ	1493	932	344
<i>Չկայացածների տեսակարար կշիռը</i>	<i>36.9%</i>	<i>23.6%</i>	<i>12.6%</i>
ՀԲՄ	38	61	26
<i>Չկայացածների տեսակարար կշիռը</i>	<i>8.3%</i>	<i>18.4%</i>	<i>2.9%</i>

Աղբյուր. ՀՀ ֆինանսների նախարարություն

2020-22թթ. նվազել են ԲՄ-ով կատարվելիք գնումների պլանային ծավալները, այսինքն պատվիրատուները պլանավորել են ավելի քիչ ծավալով գնում կատարել ԲՄ ընթացակարգով: ԲՄ-ով կատարվելիք գնումների նախահաշվային արժեքը 2020թ. 89.9 մլրդ դրամից 2021թ. նվազել է մինչև 81.5 մլրդ դրամ, իսկ 2022թ. մինչև 75.7 մլրդ դրամ: Նվազել է նաև ԲՄ ընթացակարգով գնումների նախահաշվային արժեքը գնումների ընդհանուր ծավալում, 2020-22թթ. կազմելով համապատասխանաբար 27.9%, 24.0% և 18.7%: 2020-22թթ. նվազել են նաև ԲՄ ընթացակարգով կնքված պայմանագրերի փաստացի ծավալները (դրամային արտահայտությամբ՝ 83.3 մլրդ դրամ, 77.1 մլրդ դրամ և 73.6 մլրդ դրամ) և տեսակարար կշիռը պայմանագրերի ընդհանուր ծավալում (2020-22թթ. համապատասխանաբար 27.25, 23.5% և 18.8%):

Աղյուսակ 6. Կայացած ԲՄ և ՀԲՄ ընթացակարգերի նախահաշվային արժեքների և կնքված պայմանագրերի ընդհանուր արժեքների տվյալները

	2020թ.	2021թ.	2022թ.
Նախահաշվային արժեքներ			
Ընդամենը, մլն. դրամ, որից	322,246.2	339,369.8	404,238.3
ԲՄ	89,851.9	81,507.7	75,667.9
<i>Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%)</i>	<i>27.9</i>	<i>24.0</i>	<i>18.7</i>
ՀԲՄ	38,059.1	47,886.1	65,741.9
<i>Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%)</i>	<i>11.8</i>	<i>14.1</i>	<i>16.3</i>
<i>ԲՄ և ՀԲՄ տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%)</i>	<i>39.7</i>	<i>38.1</i>	<i>35.0</i>
Պայմանագրերի արժեքները			
Ընդամենը, մլն. դրամ, որից	306,844.6	327,914.8	390,592.7
ԲՄ	83,316.4	77,126.3	73,617.2
<i>Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%)</i>	<i>27.2</i>	<i>23.5</i>	<i>18.8</i>
ՀԲՄ	35,751.2	46,998.3	60,140.6
<i>Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%)</i>	<i>11.7</i>	<i>14.3</i>	<i>15.4</i>
<i>ԲՄ և ՀԲՄ տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%)</i>	<i>38.8</i>	<i>37.9</i>	<i>34.2</i>

Տնտեսում				
	ԲՄ	6,535.5	4,381.3	6,535.5
<i>Տնտեսումը որպես նախահաշվի տոկոս</i>				
		7.3	5.4	8.6
<i>Տնտեսումը որպես պայմանագրի արժեքի տոկոս</i>				
		7.8	5.7	8.9
	ՀԲՄ	2,307.9	887.8	2307.9
<i>Տնտեսումը որպես նախահաշվի տոկոս</i>				
		6.1	1.8	3.5

Աղբյուր. ՀՀ ֆինանսների նախարարություն


ՀՀ ֆինանսների նախարարության հաշվետվության համաձայն 2022թ. ԲՄ ընթացակարգով գնումների դեպքում տնտեսումը կազմել է նախահաշվային արժեքի 8.6%-ը և պայմանագրի արժեքի 8.9%-ը: Armeeps համակարգում 2022թ. գրանցված ԲՄ ընթացակարգով 534 պայմանագրերի դեպքում հաշվարկային տնտեսումը կազմել է պայմանագրի ընդհանուր արժեքի 3.9%-ը:

Այսպիսի մեծ տարբերությունը ուսու մնասիրության կարիք ունի պարզելու համար, թե ինչու է պետության կարիքների համար կատարվող գնումների դեպքում հաշվարկային տնտեսումը համեմատաբար փոքր:

Ստորև ներկայացվում են ԲՄ և ՀԲՄ ընթացակարգերով գնման օրինակներ:

2023թ. սեպտեմբերի 6-ին ՀՀ ՊՆ-ն հայտարարություն է տարածել բաց մրցույթ ընթացակարգով ննջատենյակի կահույք (2000 մահճակալ) գնելու վերաբերյալ (ԳՄԱ 39141170/515): Մահճակալ էսքիզը և բնութագրի որոշ տվյալներ առկա են պատկեր 2-ում:

Պատկեր 2. Զինվորական մահճակալի էսքիզ



www.gnumner.minfin.am կայքում առկա հրապարակումների համաձայն 2023թ. հոկտեմբերի 17-ին հանձնաժողովի անդամները հայտարարություն են տարածել շահերի բախման բացակայության վերաբերյալ: Նույն օրը ՀՀ ՊՆ-ն հրապարակել է 2023թ. հոկտեմբերի 16-ին կայացած հայտերի բացման և գնահատման նիստի №3 արձանագրությունը, որի համաձայն հայտեր են ներկայացրել «Հայր և Որդի Գյոդակյաններ» ՍՊԸ-ն (արժեքը 98,825,000 դրամ, ԱԱՀ՝ 19,765,000 դրամ, ընդհանուր գինը՝ 118,590,000 դրամ) և «Օլանդա» ՍՊԸ-ն (արժեքը 98,300,000 դրամ, ԱԱՀ՝ 19,660,000 դրամ, ընդհանուր գինը՝ 117,960,000 դրամ): Ընտրվել էր «Հայր և Որդի Գյոդակյաններ» ՍՊԸ-ն քանի որ հանձնաժողովն անհամատասխանություն է գտել «Օլանդա» ՍՊԸ-ի հայտի տառերով և թվերով նշված գումարի մեծության միջև:


2023թ. հոկտեմբերի 17-ին ՀՀ ՊՆ-ն հայտարարություն է տարածել պայմանագիր կնքելու որոշման մասին և հրապարակել է իրական շահառուների տվյալները:

2023թ. նոյեմբերի 10-ին ՀՀ ՊՆ-ն հրապարակել է հայտարարություն կնքված պայմանագրի վերաբերյալ, որի համաձայն 118,760,000 դրամ նախահաշվային արժեքով

2000 մահճակալը «Հայր և Որդի Գյոդակյաններ» ՍՊԸ-ն պատրավորվել է մատակարարել 118,590,000 դրամով, այդ թվում առանց ԱԱՀ՝ 98,825,000 դրամ, ԱԱՀ՝ 19,765,000 դրամ:

www.gnumner.minfin.am համակարգի համաձայն 2021թ հուլիսի 27-ին ՀՀ ՊՆ-ն նախաձեռնել է «ՀՀ ՊՆ-ՀՖՄԱՊԶԲ-21-10/2» ծածկագրով ՀՖՄ, որպեսզի մինչև 2021թ. դեկտեմբերի 20-ը ձեռք բերի 905 զինվորական մահճակալ (պատկեր 13):

Պատկեր 13. Զինվորական մահճակալի էսքիզ



2021թ. օգոստոսի 27-ին ՀՀ ՊՆ-ն հայտարարել է «ՀՀ ՊՆ-ՀՖՄԱՊԶԲ-21-10/2» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «Օլանդա» ՍՊԸ-ի հետ առանց ԱԱՀ-ի 27,150,000.0 դրամ գումարով 905 զինվորական մահճակալ մատակարարելու պայմանագիր կնքելու որոշման մասին և հրապարակել է շահերի բախման բացակայության մասին հայտարարություն: Նույն օրը ՀՀ ՊՆ-ն նաև հրապարակվել է հայտարարություն իրական շահառուի վերաբերյալ:

2021թ. սեպտեմբերի 10-ին ՀՀ ՊՆ-ն տարածել է կնքված պայմանագրի մասին հայտարարություն, որի համաձայն 905 «Օլանդա» ՍՊԸ-ից ձեռքբերման գործարքի նախահաշվային գինը կազմել է 34,390,000 դրամ, «գինն առանց ԱԱՀ» կազմել է 27,150,000 դրամ, «ԱԱՀ» 5,430,000 (5,430,000 = 27,150,000 x 20%), «ընդհանուր» 32,580,000 դրամ (32,580,000 = 27,150,000 + 5,430,000): Խնայողությունը կազմել է 1,810,000 դրամ, կամ նախահաշվային արժեքի 5.2%-ը և կնքված պայմանագրի 5.5%-ը:

3.2. Էլեկտրոնային աճուրդ

2022թ. ավելացել են էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ ԷԱ) ընթացակարգի օգտագործման դեպքերը: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլուխը սահմանում է ԷԱ անցկացման հետ կապված հարաբերությունները: ԷԱ հիմնվում է բացառապես գների վրա և կարող է կայանալ մի շարք հաջորդական փուլերով:

ԷԱ ընթացակարգով գնումը կազմակերպելու համար գնման առարկան պետք է ներառված լինի ՀՀ կառավարության հաստատած ԷԱ միջոցով ձեռք բերվող սպրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակում: Էլեկտրոնային եղանակով գնումների դեպքում հայտերի ներկայացման ժամկետը առնվազն երեսուն օրացուցային օր է: ԷԱ-ին մասնակցելու համար հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակելու օրվանից հետո հայտերի ներկայացման համար տրվում է առնվազն 15 օրացուցային օր, իսկ եթե գնման գինը չի գերազանցում 80 մլն դրամը, սպա տրամադրվում է առնվազն տաս օրացուցային օր:

ԷԱ կիրառման դեպքում հրավերը ներառում է (1) ներկայացվելիք առաջարկների, գնման առարկայի բնութագրից բխող սահմանափակումները, (2) ԷԱ ընթացքում

մասնակիցներին տրամադրվելիք տեղեկությունները և տրամադրելու պայմանները, (3) ԷԱ գործընթացին վերաբերող էական նշանակության տեղեկությունները, (4) մասնակիցների կողմից հայտեր ներկայացնելու պայմանները, (5) էլեկտրոնային սարքավորումներին ներկայացվող պահանջները, (6) հայտերի լիարժեք գնահատման չափանիշները:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց մինչև երկու օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք նույն օրը հրապարակվում են տեղեկագրում, իսկ հայտերի ներկայացման վերջնաժամկետը հաշվարկվում է փոփոխությունների մասին տեղեկագրում հրապարակելու օրից:

Մասնակիցներն իրավունք ունեն հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ պահանջել հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում: Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրը, առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները:

Պատվիրատուն հայտերի լիարժեք գնահատումն իրականացնում է ԷԱ արդյունքներն ամփոփվելուց հետո: Հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին ուղարկվում է վերանայված գներ ներկայացնելու առաջարկություն, որը ներառում է տեղեկություններ ԷԱ հայտերի բացման օրվա ու ժամի և օգտագործվող էլեկտրոնային սարքավորումների մասին: ԷԱ-ն սկսվում է ոչ շուտ, քան դրա մասին պահանջը ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկու օրացուցային օր անց: ԷԱ յուրաքանչյուր փուլում պատվիրատուն անհապաղ (առցանց) մասնակիցներին է տրամադրում նվազագույն բավարար տեղեկություններ, որոնք նրանց հնարավորություն են տալիս ցանկացած պահի ճշտել իրենց զբաղեցրած հարաբերական տեղը: ԷԱ փուլերի իրականացման ընթացքում պատվիրատուն չի հրապարակում գներ ներկայացրած մասնակիցների ինքնությունը:

ԷԱ ամփոփվում (փակվում) է (1) հրավերում նշված կոնկրետ պահի, (2) աճուրդին մասնակցելու հրավերում նշված աճուրդի փուլերի քանակը սպառելուց հետո և եթե (3) նոր գներ այլևս չեն ներկայացվել: Այդ դեպքում աճուրդին մասնակցելու հրավերում պատվիրատուն նշում է վերջին առաջարկությունն ստանալուց մինչև ԷԱ փակումն ընկած թույլատրելի ժամանակահատվածը: Պատվիրատուն ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքում է ԷԱ արդյունքների հիման վրա:

ԷԱ ընթացակարգով գնումը կազմակերպելու համար գնման առարկան պետք է ներառված լինի ՀՀ կառավարության հաստատած ցուցակում: 2021-22թթ. չկայացած են հայտարարվել կազմակերպված ԷԱ-երից յուրաքանչյուր 4-րդը կամ 5-րդը (սղյուսակ 7):

Աղյուսակ 7. 2020-22թթ. կայացած և չկայացած ԷԱ ընթացակարգերի թիվը

Գնման ձևը	2020թ.	2021թ.	2022թ.
ԷԱ կայացած ընթացակարգերի քանակները			
ԷԱ	25	3374	18754
ԷԱ չկայացած ընթացակարգերի քանակները			
ԷԱ	0	1161	4817
<i>Չկայացածների տեսակարար կշիռը</i>	<i>0.0</i>	<i>25.6%</i>	<i>20.4%</i>

Աղբյուր. ՀՀ ֆինանսների նախարարություն

2020-22թթ. շեշտակի ավելացել է ԷԱ ընթացակարգերի տեսակարար կշիռը, 2020թ. 0.02%-ից 2022թ. հասնելով 16.6% (աղյուսակ 8):

Աղյուսակ 8. Կայացած ԷԱ ընթացակարգերի տեսակարար կշիռը բոլոր ընթացակարգերում

Գնման ձևը	2020թ.	2021թ.	2022թ.
ԷԱ	25	3374	18754
<i>ԷԱ տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ</i>	<i>0.02%</i>	<i>3.4%</i>	<i>16.6%</i>
Ընդամենը ընթացակարգեր	104,372	99,887	113,054

Աղբյուր. ՀՀ ֆինանսների նախարարություն

2020-22թթ. ավելացել է ԷԱ ընթացակարգերի ինչպես նախահաշվային արժեքը, այնպես էլ դրանց տեսակարար կշիռը նախահաշվային արժեքի ընդհանուր մեծության մեջ, 2020թ. 0.2%-ից 2022թ. հասնելով 13.8% (աղյուսակ 9): Շեշտակի ավելացել է նաև ԷԱ ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրերի արժեքի ինչպես բացարձակ մեծությունը, այնպես էլ բոլոր կնքված պայմանագրերի ընդհանուր արժեքում դրանց տեսակարար կշիռը:

Աղյուսակ 9. Կայացած ԷԱ ընթացակարգերի նախահաշվային արժեքների և կնքված պայմանագրերի ընդհանուր արժեքների համեմատական տվյալները

	2020թ.	2021թ.	2022թ.
Նախահաշվային արժեքներ			
Ընդամենը, մլն. դրամ, որից	322,246.2	339,369.8	404,238.3
ԷԱ	734.8	5,697.7	55,878.6
<i>Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%)</i>	<i>0.2</i>	<i>1.7</i>	<i>13.8</i>
Պայմանագրերի արժեքները			
Ընդամենը, մլն. դրամ, որից	306,844.6	327,914.8	390,592.7
ԷԱ	722.2	5,465.9	54,245.5
<i>Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%)</i>	<i>0.2</i>	<i>1.7</i>	<i>13.8</i>
Տնտեսում			
ԷԱ	12.6	231.7	1,633.1
<i>Տնտեսումը որպես նախահաշվի արժեքի տոկոս</i>	<i>1.7</i>	<i>4.0</i>	<i>2.9</i>
<i>Տնտեսումը որպես պայմանագրի արժեքի տոկոս</i>	<i>1.7</i>	<i>4.2</i>	<i>3.0</i>

Աղբյուր. ՀՀ ֆինանսների նախարարություն

ԷԱ ընթացակարգի արդյունքում տնտեսման ծավալները (2020-22թթ. տնտեսումը կազմել է պայմանագրի արժեքի համապատասխանաբար 1.7%, 4.2% և 3.0%) զգալիորեն զիջում են ԲՄ ընթացակարգի արդյունքում տնտեսման ծավալները (2020-22թթ. տնտեսումը կազմել է պայմանագրի արժեքի համապատասխանաբար 7.8%, 5.7% և 8.9%):

3.3. Գնանշման հարցում

Գնումը կարող է կատարվել գնանշման հարցման (այսուհետ՝ ԳՀ) ձևով, եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի 80-ապատիկը, և գնման առարկան ներառված չէ ԷԱ միջոցով ձեռք բերվող սպրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակում: 2020-22թթ. ԳՀ կայացած ընթացակարգերի քանակը նվազում է: ԳՀ չկայացած ընթացակարգերի տեսակարար կշիռը դեռևս մեծ է: 2022թ. չի կայացել կազմակերպված յուրաքանչյուր 8 ԳՀ ընթացակարգերից մեկը:

Աղյուսակ 10. 2020-22թթ. կայացած և չկայացած ԳՀ ընթացակարգերի թիվը

Գնման ձևը	2020թ.	2021թ.	2022թ.
-----------	--------	--------	--------

ԳՀ կայացած ընթացակարգերի քանակները			
ԳՀ	54963	45779	38571
ԳՀ չկայացած ընթացակարգերի քանակները			
ԳՀ	9314	11284	5553
<i>Չկայացածների տեսակարար կշիռը</i>	<i>14.5</i>	<i>19.8</i>	<i>12.6</i>

Աղբյուր. ՀՀ ֆինանսների նախարարություն

Նվազում է կայացած ԳՀ ընթացակարգերի տեսակարար կշիռը կայացած բոլոր ընթացակարգերում: Եթե 2020թ. յուրաքանչյուր երկրորդ պայմանագիրը կնքվում էր ԳՀ ընթացակարգի արդյունքում, ապա 2022թ. յուրաքանչյուր երրորդը:

Աղյուսակ 11. Կայացած ԳՀ ընթացակարգերի տեսակարար կշիռը բոլոր ընթացակարգերում

Գնման ձևը	2020թ.	2021թ.	2022թ.
ԳՀ	54963	45779	38571
<i>ԳՀ տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ</i>	<i>52.7</i>	<i>45.8</i>	<i>34.1</i>
Ընդամենը ընթացակարգեր	104,372	99,887	113,054

Աղբյուր. ՀՀ ֆինանսների նախարարություն

2020-22թթ նվազել է ինչպես ԳՀ ընթացակարգով նախատեսված գնումների մեծության նախահաշվային արժեքը (2020թ. 50.7 մլրդ դրամից 2022թ. հասնելով 39.7 մլրդ դրամի), այդպես էլ դրա տեսակարար կշիռը ընդհանուր նախահաշվային արժեքի մեջ (2020թ. բոլոր գնումների ընդհանուր նախահաշվային արժեքի 15.7%-ից 2022թ. նվազելով մինչև 9.8%): Նվազում են նաև ԳՀ ընթացակարգով կնքված պայմանագրերի արժեքի ինչպես բացարձակ մեծությունը (2020-22թթ. համապատասխանաբար 45.6 մլրդ, 41.8 մլրդ և 36.2 մլրդ դրամ), այնպես էլ դրանց տեսակարար կշիռը կնքված բոլոր պայմանագրերի ընդհանուր մեծության մեջ (2020-22թթ. համապատասխանաբար 14.9%, 12.7% 7 9.2%):

ԳՀ կիրառման արդյունքում տնտեսված ծավալները (2020-22թթ. պայմանագրի արժեքի համապատասխանաբար 11.2%, 11.7% և 9.5%) զգալիորեն գերազանցում են ԲՄ և ԷԱ ընթացակարգերի արդյունքում տնտեսման ծավալները (2020-22թթ. պայմանագրի արժեքի համապատասխանաբար 7.8%, 5.7%, 8.9% և 1.7%, 4.2%, 3.0%):

Աղյուսակ 12. Կայացած ԳՀ ընթացակարգերի նախահաշվային արժեքների և կնքված պայմանագրերի ընդհանուր արժեքների համեմատական տվյալները

	2020թ.	2021թ.	2022թ.
Նախահաշվային արժեքներ			
Ընդամենը, մլն. դրամ, որից	322,246.2	339,369.8	404,238.3
ԳՀ	50,697.5	46,842.5	39,689.2
<i>Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%)</i>	<i>15.7</i>	<i>13.8</i>	<i>9.8</i>
Պայմանագրերի արժեքները			
Ընդամենը, մլն. դրամ, որից	306,844.6	327,914.8	390,592.7
ԳՀ	45,600.9	41,951.7	36,225.5
<i>Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%)</i>	<i>14.9</i>	<i>12.7</i>	<i>9.2</i>
Տնտեսում			
ԳՀ	5,096.6	4,890.9	3,463.7
<i>Տնտեսումը որպես նախահաշվի տոկոս</i>	<i>10.1</i>	<i>10.5</i>	<i>8.7</i>
<i>Տնտեսումը որպես պայմանագրի արժեքի տոկոս</i>	<i>11.2</i>	<i>11.7</i>	<i>9.5</i>

Աղբյուր. ՀՀ ֆինանսների նախարարություն

Համեմատաբար ոչ մրցակցային, ոչ մրցութային ԳՀ ընթացակարգի արդյունքում խնայողություններն ավելի մեծ են, քան ԲՄ և ԷԱ ընթացակարգի դեպքում:

Ի տարբերություն ՄԱ գնման ընթացակարգի, որի օգտագործման դեպքում օրենսդիրը նախատեսել է սահմանափակումներ, որպեսզի խոչընդոտներ ստեղծի դրա անհարկի օգտագործման համար, ԳՀ ընթացակարգի դեպքում նախատեսել է սահմանափակում գնման գնի վրա: Գնումը կարող է կատարվել ԳՀ ձևով, եթե գնման գինը չի գերազանցում 80 մլն դրամը, և գնման առարկան ներառված չէ ԷԱ միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակում: Այս ձևակերպումը չի բացառում, որ մինչև 80 մլն դրամ մեծությամբ գնումները չեն կարող ձեռք բերվել նաև ԲՄ ընթացակարգով: Հաշվի առնելով ԳՀ ընթացակարգի դեպքում սահմանված 80 մլն դրամ սահմանափակումը, հստակեցման կարիք ունեն նախորդ տարիներին կատարված մի շարք գնումների հետ կապված հանգամանքներ: Armeps համակարգի համաձայն 2021թ. ԳՀ ընթացակարգով կատարվել է 80 մլն դրամը գերազանցող 21 գնում, 2022թ.՝ 20 (հավելված 3):

ԳՀ ընթացակարգի դեպքում 80 մլն դրամը գերազանցող գործարքների վերաբերյալ ԻԲՄ-ն հարցում է ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն, խնդրելով ներկայացնել այդ գնումների իրավական հիմքը: ՀՀ ֆինանսների նախարարության պատասխանից հետևում է, որ նախարարությունը պատասխանատվություն չի կրում «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության համար, չի հետաքրքրվում պատվիրատուների կողմից օրենքի խախտման ենթադրյալ (կամ հավանական) դեպքերով և չի պատրաստվում ուսումնասիրել դրանք:

ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրության⁶ 11-րդ կետի (7) ենթակետի «բ» ենթա-ենթակետի համաձայն ֆինանսաբյուջետային վերահսկողության մասով իր նպատակների և խնդիրների կենսագործման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարությունն իրականացնում է հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսաբյուջետային գործունեության ՀՀ օրենսդրությանը համապատասխանության գնահատում: Հանրային հատվածի ֆինանսաբյուջետային գործունեության ոլորտում, ի թիվս ֆինանսական կառավարման, հսկողության, ներքին աուդիտի, հաշվապահական հաշվառման և ակտիվների կառավարման գործընթացների և գործարքների, կանոնադրությունը նշում է նաև գնումների գործընթացները և գործարքները:

Հստակեցման կարիք ունի, թե որքանով է ՀՀ ֆինանսների նախարարության վերը նշված պատասխանը համապատասխանում կանոնադրությանը նրա վրա դրված պարտականություններին:

3.4. Մեկ անձ

Գնումը կարող է կատարվել մեկ անձից (այսուհետ՝ ՄԱ), եթե (1) հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ պայմանավորված գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, (2) արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակից ելնելով, գնման այլ ձևերի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն կանխատեսել, (3) որևէ անձից գնում կատարելուց հետո պատվիրատուն որոշում է օբյեկտիվորեն չնախատեսված հանգամանքներից ելնելով՝ սկզբնական

⁶ ՀՀ վարչապետի 2018թ. հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» №743-Լ որոշում: Հասանելի է arlis.am/DocumentView.aspx?DocID=163763 էջում:

պայմանագրի կատարման համար անհրաժեշտ դարձած ապրանքների լրացուցիչ գնում կատարել նույն անձից⁷, (4) եթե գնման գինը չի գերազանցում 1,000,000 ՀՀ դրամը կամ (5) գնումն իրականացվում է Հայաստանի տարածքից դուրս:

Եթե գնումն իրականացվում է, քանի որ արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակից ելնելով, գնման այլ ձևերի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն կանխատեսել, սպա գնման հրավեր ստացող անձանց (հնարավոր մասնակից) թիվը չի կարող պակաս լինել երեքից, բացառությամբ ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպվելու դեպքի (526, 21-1-դ): Ընդ որում, օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի կիրառման պարագայում⁸, եթե առկա է պատվիրատուի ղեկավարի գրավոր համաձայնությունը, սպա հրավեր տրամադրվում է միայն գնման հայտում նշված անձին (հնարավոր մասնակցին):

ՏՀԶԿ և SIGMA 2019թ. մարտին հրապարակված զեկույցի⁹ համաձայն ՀՀ կառավարությունն իր 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ ավելացրել է ապրանքների անվանումների երկար ցանկ, որոնք կարող են ձեռք բերվել մեկ անձից գնման ընթացակարգով՝ ենթադրաբար «հատուկ կամ բացառիկ իրավունքներով» պայմանավորված, ինչով պայմանավորված մրցակցային գնումների ոլորտը սահմանափակվել է: Ժամանակի ընթացքում ՀՀ կառավարությունը վերացրել է ՏՀԶԿ և SIGMA 2019թ. մարտին հրապարակված զեկույցում մրցակցությանը խոչընդոտող կարգավորումների մի մասը, սակայն դրանց փոխարեն նորերն է ստեղծել: Օրինակ, ՏՀԶԿ և SIGMA-ի կողմից զեկույցի հրապարակումից յոթ ամիս հետո, 2019թ. հոկտեմբերի 10-ի իր №1422-Ն որոշմամբ, ՀՀ կառավարությունը 2017թ. №526-Ն որոշման 23-րդ կետի 4-րդ ենթակետի՝ հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայության հիմքով մեկ անձից գնումներ կատարելու իրավունք տվող ցանկին ավելացրել է ևս մի քանի տող, դրանով սահմանափակելով պետական գնումների բնագավառում մրցակցությունը¹⁰:

ՄԱ ընթացակարգով գնումները գրեթե 100%-ով կայանում են (աղյուսակ 13):

Աղյուսակ 13. 2020-22թթ. կայացած և չկայացած ՄԱ ընթացակարգերի թիվը

Գնման ձևը	2020թ.	2021թ.	2022թ.
ՄԱ կայացած ընթացակարգերի քանակները			
ՄԱ	46395	46830	51981
ՄԱ չկայացած ընթացակարգերի քանակները			
ՄԱ	88	155	199

⁷ Պայմանով, որ առանց պատվիրատուի համար նշանակալի դժվարություն ստեղծելու հնարավոր չէ լրացուցիչ ապրանքների պայմանագիրը տեխնիկապես կամ տնտեսապես առանձնացնել սկզբնական պայմանագրից և լրացուցիչ ապրանքների պայմանագրի գինը չի գերազանցում սկզբնական պայմանագրի ընդհանուր գնի 10 տոկոսը: Մինչև անձից լրացուցիչ գնում կարող է կատարվել մեկ անգամ, իսկ լրացուցիչ ապրանքների գինը չի կարող գերազանցել պայմանագրով սահմանված գինը,

⁸ Արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակից ելնելով, գնման այլ ձևերի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն կանխատեսել.

⁹ ՏՀԶԿ և SIGMA. (2019թ.): Հանրային կառավարման սկզբունքները. Հայաստան: Ելակետային գնահատման զեկույց: 2019թ. մարտ: Հասանելի է <https://www.sigmaxweb.org/publications/Baseline-Measurement-Armenia-2019-ARM.pdf> էջում:

¹⁰ ՀՀ կառավարության 2019թ. հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի №526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 16-ի №1454-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №1422-Ն որոշում: Հասանելի է <https://www.arlis.am/documentview.aspx?docid=135267> էջում:

<i>Չկայացածների տեսակարար կշիռը (%)</i>	<i>0.2</i>	<i>0.3</i>	<i>0.3</i>
---	------------	------------	------------

Աղբյուր. ՀՀ ֆինանսների նախարարություն

ՄԱ ընթացակարգերի քանակը վերջին տարիներին ավելանում է (2020-22թթ. համապատասխանաբար 46.4 հազար, 46.8 հազար և 52.0 հազար ընթացակարգ), իսկ տեսակարար կշիռն ընթացակարգերի ընդհանուր թվում մնում է մոտավորապես նույնը՝ 44.5%-47.0% միջակայքում:

Աղյուսակ 14. Կայացած ՄԱ ընթացակարգերի տեսակարար կշիռը բոլոր ընթացակարգերում

Գնման ձևը	2020թ.	2021թ.	2022թ.
ՄԱ	46395	46830	51981
<i>ՄԱ տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ (%)</i>	<i>44.5</i>	<i>46.9</i>	<i>46.0</i>
Ընդամենը ընթացակարգեր	104,372	99,887	113,054

Աղբյուր. ՀՀ ֆինանսների նախարարություն

Աղյուսակ 15. Կայացած ՄԱ ընթացակարգերի նախահաշվային արժեքների և կնքված պայմանագրերի ընդհանուր արժեքների համեմատական տվյալները

	2020թ.	2021թ.	2022թ.
Նախահաշվային արժեքներ			
Ընդամենը, մլն. դրամ, որից	322,246.2	339,369.8	404,238.3
ՄԱ	142,471.8	136,690.2	148,223.2
<i>Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%)</i>	<i>44.1</i>	<i>40.3</i>	<i>36.7</i>
Պայմանագրերի արժեքները			
Ընդամենը, մլն. դրամ, որից	306,844.6	327,914.8	390,592.7
ՄԱ	141,022.8	135,973.7	147,533.1
<i>Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%)</i>	<i>46.0</i>	<i>41.5</i>	<i>37.8</i>
Տնտեսում			
ՄԱ	1,449.0	716.5	690.2
<i>Տնտեսումը որպես նախահաշվի տոկոս</i>	<i>1.0</i>	<i>0.5</i>	<i>0.5</i>
<i>Տնտեսումը որպես պայմանագրի արժեքի տոկոս</i>	<i>1.0</i>	<i>0.5</i>	<i>0.5</i>

Աղբյուր. ՀՀ ֆինանսների նախարարություն

Դրամային արտահայտությամբ ՄԱ ընթացակարգով գնումների համար նախատեսվող միջոցներն ավելացել են (2020-22թթ. 142.5 մլրդ դրամից հասնելով 148.2 մլրդ դրամ), իսկ դրանց տեսակարար կշիռը պլանավորված ընդհանուր մեծության մեծ նվազել է (2020-22թթ. 44.1% հասնելով 36.7%): ՄԱ-ով փաստացի կնքված պայմանագրերի ծավալը ևս ավելացել է, գնումների ծավալում դրանց տեսակարար կշիռը նվազել է:

2019թ. ի վեր ՀՀ կառավարությունը փոփոխություններ է կատարել ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-ն որոշման մեջ, որոնցով վերացրել է արձանագրված խնդիրների մի մասը: Սակայն №526-ն որոշման մեջ կատարված մի շարք այլ փոփոխություններ պատվիրատուներին նոր հնարավորություն են տվել խոշոր գնումներ կատարել ոչ մրցակցային ընթացակարգերով: Ի տարբերություն գոյություն ունեցող պրակտիկայի 2019թ. հոկտեմբերի 10-ի նիստին ՀՀ ֆինանսների նախարարությունը 2017թ. №526-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու հիմնավորում չէր ներկայացրել, այլ 2 տեղեկանք և 2 ամփոփաթեթ¹¹:

¹¹ ՀՀ կառավարության 2019թ. հոկտեմբերի 10-ի նիստի օրակարգ Հասանելի է <https://e-gov.am/sessions/archive/2019/10/10/> էջում:

ԲՄ ընթացակարգը շրջանցելու նպատակով պատվիրատուներն օգտվում են 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ տրվող նոր հնարավորություններից: Հղում կատարելով որոշման 23-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ցանկի 33-րդ տողին¹² 2022թ. և 2023թ. տոնական ձևավորման կամ միջոցառումների հետ կապված ծառայություններ ձեռք բերելու նպատակով Երևանի քաղաքապետարանը ՄԱ-ով պայմանագիր է կնքել «Սինեմարտ» ՍՊԸ-ի հետ (աղյուսակ 16), առանց բացատրելու, թե ինչու տոնական ձևավորման ծառայությունները չի կարող կազմակերպել որևէ այլ կազմակերպություն և ինչն է «Սինեմարտ» ՍՊԸ-ին դա անելու հատուկ կամ բացառիկ իրավունք տալիս:

Աղյուսակ 16. 2022թ. և 2023թ. «Սինեմարտ» ՍՊԸ-ից (ՀՎՀՀ՝ 01565173) մեկ անձ ընթացակարգով Երևանի քաղաքապետարանի ձեռք բերած ծառայությունների պայմանագրերի հիմնական ցուցանիշները

Կնքման ամսաթիվ	Ծածկագիր	Ընդհանուր գումարը	Առկա ֆին. միջոցներով	Հաշվարկ. տնտեսում
		ՀՀ դրամ		
07/11/2023	ԵՔ-ՄԱԾՁԲ-23/267 ¹³	202,406,000.0	202,406,000.0	0.0
28/10/2022	ԵՔ-ՄԱԾՁԲ-22/184 ¹⁴	191,006,000.0	176,006,000.0	0.0

Աղբյուր. Armepps

Հատկանշական է, որ 2022թ. Երևանի քաղաքապետարանը նախ հոկտեմբերի 28-ին 191,006,000.0 դրամի պայմանագիր է կնքել «Սինեմարտ» ՍՊԸ-ի հետ, որից առկա ֆինանսական միջոցներով սպահովված էր միայն 176,006,000.0 դրամի չափով: Մեկ ամիս հետո, 2022թ. դեկտեմբերի 1-ին, Երևանի քաղաքապետարանը պայմանագրի գինը 15,000,000.0 դրամով նվազեցնելու վերաբերյալ համաձայնագիր է կնքել «Սինեմարտ» ՍՊԸ-ի հետ, ծառայության գինը սահմանելով մինչև 176,006,000.0 դրամ, այսինքն այնքան գումար, որքան նախատեսված էր գնումների պլանով:

2022թ. դեկտեմբերին Փաստերի ստուգման հարթակն (այսուհետ՝ Fip.am) արձանագրել էր, որ «Սինեմարտ» ՍՊԸ-ն նախկինում երբևէ պետական գնումների մրցույթի չի մասնակցել¹⁵: Նշանակում է, հանրային հաստատում չկար ինստիտուցիոնալ գիտելիք այդ ընկերության կարողությունների վերաբերյալ և ընկերության գործունեության վերաբերյալ գիտելիքները հիմնվում են մասնավոր տեղեկատվության վրա: Fip.am-ի հետ զրույցում, Երևանի քաղաքապետարանի գնումների վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Իսկուհի Օսիպյանը նշել էր, որ իրենց վարչությունը պատասխանատու ստորաբաժանումից ստացել է առաջարկ, որի շրջանակներում էլ կազմակերպել է գնման գործընթացը: «Սինեմարտ» ՍՊԸ-ի հետ ՄԱ-ով պայմանագիրը կնքելու որոշում կայացրել է Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանի ղեկավարած աշխատանքային խումբը: 2022թ. դեկտեմբերի 2-ին քաղաքապետարանում հրավիրած մամուլի ասուլիսի ժամանակ¹⁶ փոխքաղաքապետը հայտարարել էր, որ օրենքը հնարավորություն է տալիս միջոցառումների կազմակերպիչ ընկերություն ընտրել առանց մրցույթի:

¹² «Մշակութային և (կամ) գեղարվեստաստեղծագործական միջոցառումների (բեմադրությունների, ցուցադրությունների, ցուցահանդեսների, համերգների, փառատոների, կինոարտարության, հեռուստահաղորդումների, ռադիոհաղորդումների արտադրության) կազմակերպման շրջանակում ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում, բացառությամբ շինարարական աշխատանքների»

¹³ Գնման առարկայի անվանում. Տոնական ձևավորման ծառայություններ

¹⁴ Գնման առարկայի անվանում. Միջոցառումների հետ կապված ծառայություններ

¹⁵ Սևադա Ղազարյան: (2022թ.) Երևանը \$2 մլնից ավելի է ծախսում ամանորյալ միջոցառումների վրա. գնումների հիմնական մասը մեկ անձից է: 3 դեկտեմբերի 2022թ.: Փաստերի ստուգման հարթակ: Հասանելի է <https://fip.am/21188> էջում:

¹⁶ Մամուլի ասուլիս՝ Երևանի ամանորյալ տոնական ձևավորման թեմայով: 2 դեկտեմբերի 2022թ.: Հասանելի է <https://www.youtube.com/watch?v=WYBaKgSshvM> էջում:

Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը հայտարարել է, որ անձնական կամ այլ փոխկապակցվածություն «Մինեմարտ» ՍՊԸ-ի հետ չունի և որ մինչև 2022թ. միջոցառման կազմակերպումը «Մինեմարտ» ՍՊԸ-ի միակ բաժնետեր և սնօրեն Ռուբեն Շահինյանին, ով Հանրային հեռուստատեսության ռազմավարական ծրագրերի պատասխանատուն է՝ չի ճանաչել¹⁷: Քաղաքապետի տեղակալը չի բացատրել, թե այդ դեպքում 2022թ. ինչպե՞ս է իմացել «Մինեմարտ» ՍՊԸ գոյության մասին, ինչպե՞ս է վերջինիս ներկայացուցիչների հետ հաղորդակցության մեջ մտել, ի՞նչ տեխնիկական առաջադրանքով են գնման հետ կապված հարցեր քննարկել և ինչպե՞ս է որոշել, որ նախկինում պետական գումարներին չմասնակցած ընկերությունը կարող է որակյալ և ժամանակին ծառայություններ մատուցել, ի՞նչ քննարկումներ է ունեցել այլ ընկերությունների հետ, ի՞նչ առաջարկներ են ներկայացրել վերջիններս, և այլն:

Հանրային կառավարման տեսակետից նաև անհրաժեշտ է հասկանալ Հանրային հեռուստաընկերության ռազմավարական ծրագրերի պատասխանատուի կողմից մասնավոր ձեռնարկատիրությամբ զբաղվելու հանգամանքի հետ կապված հարցերը:

«Մինեմարտ» ՍՊԸ-ի հետ 2022թ. հոկտեմբերի 28-ին ՄԱ գնման ընթացակարգի կիրառման միջոցով ծառայությունների մատուցման պայմանագրի կնքումը խնդրահարույց է նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերության նկատմամբ կիրառված է եղել արգելանք: 2021թ. մարտի 15-ից ի վեր պետական բյուջեի նկատմամբ 130,000.0 դրամ պարտավորության պատճառով ընկերության նկատմամբ կիրառված արգելանքից ՍՊԸ-ն ազատվել է 2022թ. հոկտեմբերի 12-ին, Երևանի քաղաքապետարանի հետ 191 մլն դրամ մեծությամբ պայմանագիրը կնքելուց 16 օր առաջ (պատկեր 16):

Երևանի քաղաքապետարանի գումարների պլանի 2022թ. հոկտեմբերի 26-ին հաստատված տարբերակում միջոցառումների հետ կապված ծառայությունների ձեռքբերում նախատեսված չի եղել: Տոնական ձևավորման ծառայությունների 202,406,000.0 դրամ ձեռքբերումը (ԳՄԱ կոդ՝ 79951100/82) գումարների պլանում է հայտնվել 2023թ. նոյեմբերի 9-ին, դրանում 2023թ. կատարված 88-րդ փոփոխությունից հետո: Այսինքն, մինչև 2023թ. նոյեմբերի 9-ը Երևանի քաղաքապետարանը չէր ծրագրում ամսնորյա միջոցառումներ կազմակերպել:

Պատկեր 16. Պետական բյուջեի օգտին բռնագանձվելիք 130000 դրամ գումարի պատճառով «Մինեմարտ» ՍՊԸ նկատմամբ 2021թ. մարտի 15-ին կիրառված արգելանքի և 2022թ. հոկտեմբերի 12-ին արգելանքը հանելու վերաբերյալ պետոեզիստրի էջի տեսանկյանում

¹⁷ Ֆակտոր տեղեկատվական կենտրոն: (2023թ.): Անձնական կամ այլ փոխկապակցվածություն չկա «Մինեմարտ» ՍՊԸ-ի հետ: Սուրեն Գրիգորյան: Հասանելի է <https://factor.am/711870.html> էջում:

Ընկերության նկատմամբ կիրառված արգելանքներ				
Արգելանքի դրման ամսաթիվ	Արգելանքի հիմք	Արգելանք հանելու ամսաթիվ	Արգելանքը հանելու հիմք	Արգելանքի մեկնաբանություն
2021-03-15	Վարոյթ՝ 07365514, հարուցման(վերականգնման) ամսաթիվ՝ «15» մարտ 2021թ. Կատ.թերթ՝ 2651/03-Ա, տրված՝ «15» դեկտեմբեր 2020թ. Պահանջ՝ Սինեմարտ ՍՊԸ-ից Պետ. բյուջեի օգտին բռնագանձել 130000 ՀՀ դրամ, ԳԱՀԿ Երևան քաղաքի պետ. բյուջեի օգտին բռն.բաժին բաժին-Կատարող՝ հարկադիր կատարող արդարադատության լեյտենանտ Արամ Թովմայան, Պարտաբանին արգելել 1	2022-10-12	Վարոյթ՝ 07365514, հարուցման(վերականգնման) ամսաթիվ՝ «15» մարտ 2021թ. Կատ.թերթ՝ 2651/03-Ա, տրված՝ «15» դեկտեմբեր 2020թ. Պահանջ՝ Սինեմարտ ՍՊԸ-ից Պետ. բյուջեի օգտին բռնագանձել 130000 ՀՀ դրամ, ԳԱՀԿ Պետական բյուջեի օգտին բաժին, Պետական բյուջեի օգտին բաժին Կատարող՝ հարկադիր կատարող արդարադատության լեյտենանտ Լ.Լիթ Խաչատրյան, արգելանքից ազատման պատճառը՝ 42.1.1	

Երևանի քաղաքապետարանի կողմից 202.4 մլն ՀՀ դրամ գումարով տոնական ձևավորման ծառայությունների ձեռքբերումը ՄԱ ընթացակարգի իրականացնելու հանգամանքն անհրաժեշտ է ենթարկել իրավական փորձաքննության հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևանի փոխքաղաքապետը իր բացատրություններում հղում էր կատարում այն հանգամանքին, որ օրենքը թույլ է տալիս: Իրականում «Գնումների մասին» օրենքը ՄԱ-ից նման գնում կատարել թույլ չի տալիս: Ենթադրաբար, փոխքաղաքապետը հղում է կատարում Ն. Փաշինյանի կառավարության կողմից 2019թ. հոկտեմբերի 10-ին 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշման մեջ կատարված փոփոխությանը, որով կարգի 23 կետի 4-րդ ենթակետի ցանկում ավելացվել էր 33-րդ տող, որի համաձայն մեկ անձից ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ կարելի է ձեռք բերել մշակութային և (կամ) գեղարվեստաստեղծագործական միջոցառումների (բեմադրությունների, ցուցադրությունների, ցուցահանդեսների, համերգների, փառատոնների, կինոարտադրության, հեռուստահաղորդումների, ռադիոհաղորդումների արտադրության) կազմակերպման շրջանակում: Սակայն ՀՀ կառավարության որոշման այս տողին հղում կատարելը խնդրահարույց է, քանի որ 23 կետի 4-րդ կետը նշում է, որ ցանկում ներառված գնումները կարող են կատարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23 հոդված 1-ին մասի 1-ին կետի հիման վրա: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը կարգավորում է հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայության դեպքում միջոցառումների կազմակերպումը: Նշվող կարգավորումը ՀՀ կառավարության 2017թ. հոկտեմբերի 10-ի նիստի ժամանակ ներկայացնելիս ՀՀ ֆինանսների նախարար Ատոմ Ջանջուղազյանը ցանկություն էր հայտնել առանձնացնել «մշակութային և գեղարվեստաստեղծագործական միջոցառումների մասը, որովհետև դա էլ մշտապես քննարկվում աս, որ էս դեպքում, որպես կանոն մրցութային գործընթաց կամ մրցակցային գործընթաց կիրառելը գործնականում հնարավոր չի, որովհետև կոնկրետ տվյալ արդյունքն է ուզում ստացվել, այսինքն տվյալ հեղինակի արդյունքն է ուզում ստացվել: Դա այստեղ առաջարկվող փոփոխություններով ենթադրվում աս, որ առանց լրացուցիչ գործընթացի կարող է մեկ անձից գնման եղանակով կատարվել, բայց էստեղ մի բացառություն այնուհանդերձ կա: Դա շինարարական աշխատանքներին վերաբերող մասն է»¹⁸: Երևանի քաղաքապետարանի և «Սինեմարտ»

¹⁸ ՀՀ կառավարության 2019թ. հոկտեմբերի 10-ի նիստի տեսագրություն: Հասանելի է <https://www.youtube.com/watch?v=kBRq5FOcCPY&t=1671s> էջում:

ՄՊԸ միջև կնքված պայմանագիրը չի նշում «Սինեմարտ» ՄՊԸ-ի ունեցած հեղինակային և հարակից իրավունքի, կամ հասուկ կամ բացառիկ իրավունքի առկայության մասին:


«Սինեմարտ» ՄՊԸ-ից ծառայությունների ձեռքբերման դեպքում Երևանի քաղաքապետարանի գործկառնը հնարավոր կոռուպցիոն ռիսկերի մասին ազդարարող կարմիր դրոշակ է:

Երևանի քաղաքապետարանի և «Սինեմարտ» ՄՊԸ-ի միջև ՄԱ ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրն անհրաժեշտ է դիտարկել ՀՀ հաշվեքննիչ պալատի 2023թ. ապրիլի 26-ի թիվ 69-Ա որոշմամբ հաստատած ՀՀ ՆԳՆ ոստիկանությունում 2022թ. պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացության մեջ ՍԱման Արզումանյան՝ ԱԶ-ից ՄԱ ընթացակարգով ապակիների թաղանթապատման ծառայությունների ձեռքբերման ՀՀ հաշվեքննիչ պալատի տրամադրած եզրակացության համատեքստում: ՀՀ հաշվեքննիչ պալատն արձանագրել է, որ նման դեպքերում անհրաժեշտ է ներկայացնել բացառիկ իրավունքներ վերապահված լինելու փաստը հավաստող փաստաթղթեր:

3.5. 2020-22թթ. կազմակերպված ընթացակարգերի վերլուծություն

2020-22թթ. գնումների 96.7-97.1 տոկոսը կատարվել է 3 ընթացակարգի միջոցով (գծապատկեր 4): ԲՄ ընթացակարգն օգտագործվել է 2.1-3.0 տոկոս դեպքերում:

Գծապատկեր 4. Գնումների 3 հիմնական ընթացակարգերի տեսակարար կշիռները կազմակերպված բոլոր ընթացակարգերում




Աղբյուր. ՀՀ ֆինանսների նախարարություն

2020թ. չի կայացել մրցույթներից առնվազն յուրաքանչյուր երրորդը, իսկ ՄԱ ընթացակարգերը կյանքի են կոչվել գրեթե ամբողջությամբ: 2021թ. պատվիրատուներն սկսել են ակտիվորեն օգտագործել ԷԱ ընթացակարգերը: 2021թ. չի կայացել յուրաքանչյուր 4-րդ ԷԱ ընթացակարգը: Չկայացած ԷԱ ընթացակարգերը շարունակում են մեծ տեսակարար կշիռ կազմել: 2022թ. չի կայացել յուրաքանչյուր 5-րդ ԷԱ ընթացակարգը, յուրաքանչյուր 8-րդ ԲՄ-ն և ԳՀ-ն, յուրաքանչյուր 262-րդ ՄԱ-ն:

ՀՀ ֆինանսների նախարարության հաշվետվությունը և այլ փաստաթղթեր չեն անդրադառնում ընթացակարգերի չկայանալու պատճառներին: ԷԱ ընթացակարգերի չկայացածների բարձր տեսակարար կշիռը մասնակիորեն կարելի է բացատրել էլեկտրոնային գնումների համակարգի հաճախակի խափանումներով: Վերջին 2 տարում

Էլեկտրոնային գնումների համակարգը խափանվել է 17 անգամ, ինչի հետևանքով չկայացած է հայտարարվել 258 ընթացակարգ, այդ թվում 2 խափանում և 13 չկայացած ընթացակարգ 2021թ., 10 խափանում և 213 չկայացած ընթացակարգ 2022թ., և 5 խափանում և 32 չկայացած ընթացակարգ 2023թ.: Ըստ ընթացակարգերի 2020-22թթ. չկայացած ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է գծապատկեր 5-ում:

Գծապատկեր 5. Չկայացած ընթացակարգերի տեսակարար կշիռները համապատասխան ընթացակարգերում




Աղբյուր. ՀՀ ֆինանսների նախարարություն

Ի պատասխան «Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական ՀԿ-ի 2023թ. նոյեմբերի 24-ի հարցման հարցման 2023թ. դեկտեմբերի 13-ի իր 1/ՌՄ/24579-2023 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ «ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակված 2020-2022թթ. տարիների գնումների հաշվետվություններում հաշվառվել և արտացոլվել են չկայացած ընթացակարգերի վերաբերյալ միայն քանակական ցուցանիշները» և նշել է, որ չկայացած պատճառների մասին տեղեկատվությունը հավաքագրման փուլում է և կտրամադրվի դրա ամփոփման աշխատանքներն ավարտելուց հետո:

ՀՀ ֆինանսների նախարարության հաշվետվությունների համաձայն 2020-22թթ. կայացած մրցույթների արդյունքում պետական բյուջեի խնայողությունները տատանվել են նախահաշվային արժեքի 5.4-8.6 տոկոսի միջակայքում (գծապատկեր 6): Ծախսված միջոցների ավելի մեծ խնայողությունն ապահովել է ԳՀ ընթացակարգը՝ 8.7-10.4 տոկոս: ՄԱ ընթացակարգով գնումների ժամանակ խնայվել են բյուջեներով նախատեսված միջոցների 0.5-1.0 տոկոսը: Չնայած ԷԱ ընթացակարգի առավելություններին, այն դեռևս չի ապահովում բյուջետային միջոցների խնայողության այն մակարդակը, որն ապահովում են ԲՄ և ԳՀ ընթացակարգերը:

Գծապատկեր 6. Տնտեսումը որպես նախահաշվային արժեքի տոկոս



Աղբյուր. ՀՀ ֆինանսների նախարարություն

ՄԱ ընթացակարգի արդյունքում տնտեսումը ամենափոքրն է: Եթե ԳՀ արդյունքում տնտեսումները 2020-22թթ. կազմել են պայմանագրի արժեքի համապատասխանաբար 11.2%, 11.7% և 9.5%, ԲՄ-ի արդյունքում՝ 7.8%, 5.7%, 8.9%, ԷԱ-ի արդյունքում՝ 1.7%, 4.2%, 3.0%, սպա ՄԱ-ի դեպքում կազմել են 1.0%, 0.5% և 0.5%: ***Ակնհայտ է, որ այլ ընթացակարգերի համեմատ ՄԱ ընթացակարգն ապահովում է բյուջետային միջոցների նվազ արդյունավետ և խնայողական օգտագործում:***

3.6. Գնման առարկայի բնութագիրը

Գնման առարկայի բնութագիրը գնման առարկայի հատկանիշներն են, դրանց ձևերի, մեթոդների և վճարման պայմանները:

Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձևերի, մեթոդների և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Գնման առարկայի բնութագրերը պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և ***համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը***, ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Գնման առարկայի առանձնահատկությունները պետք է հիմնվեն միջազգային ստանդարտների և ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա, իսկ դրանց հատկանիշները հնարավորինս պետք է ներառեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ

հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը: Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառնության (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ, հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան: Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Գնման հայտի նախագծմանը մասնակցող պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցները պետք է ունենան գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություն: **Գնման առարկայի բնութագրերը պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է հատուկ կամ բացառիկ իրավունք, կամ առաջացել է արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակ, որի հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակից ելնելով պետք է կիրառվի ՄԱ ընթացակարգ:**

Վերևում նշվել է, որ գնումները պետք է կատարվեն կարիքների գնահատման և շուկայի ուսումնասիրությունների հիման վրա: Կարիքների գնահատման և շուկայի ուսումնասիրության արդյունքները պետք է արտացոլվեն գնման առարկայի բնութագրում: «Հայաստան» համահայկական հիմնադրամում (այսուհետ՝ հիմնադրամ) 2015թ. հունվարի 1-ից 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում գնումների գործընթացի հաշվեքննության ընթացիկ եզրակացության մեջ ՀՀ հաշվեքննիչ պալատն արձանագրել է, որ **գնու մներ կատարելիս Հիմնադրամը շուկան չի ուսումնասիրել:**

Հիմնադրամում գնումների գործընթացի հաշվեքննության արդյունքում ՀՀ հաշվեքննիչ պալատը պարզել էր, որ Հիմնադրամի և «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի միջև բոլոր պայմանագրերը, անկախ գումարի մեծությունից, կնքվել են ուղղակի ձևով: Պայմանագրերը կնքվել են առանց գնման հայտի և գնման առարկայի բնութագրի հաստատման: Կնքված բոլոր պայմանագրերում բացակայել են գնման առարկայի տեխնիկական բնութագրերը, որտեղ պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրվելին ձեռքբերվող սպրանքների հատկանիշները (չափեր, ձև, օգտագործվող նյութեր և այլն), ինչպես նաև՝ դրանց վերաբերվող պայմանների հստակ նկարագրությունը:

Հիմնադրամի և «Արամ Գևորգյան» ՍՊԸ-ի միջև 2015- 2017թթ. ընթացքում կնքված 39.5 մլն դրամ ընդհանուր արժեքով բոլոր 16 պայմանագրերը կնքվել են ուղղակի ձևով՝ առանց գնման հայտի և գնման առարկայի բնութագրի (չափեր, ձև, օգտագործվող նյութեր և այլն) հաստատման:

Գնման առարկայի բնութագրերի հետ կապված խնդիրները շարունակվել են նաև 2018թ. հետո: 2022թ. ընթացքում ՀՀ պետական վերահսկողական ծառայությունն (այսուհետ՝ ՊՎԾ) ընտրանքային կարգով, ռիսկայնության և մի շարք այլ չափորոշիչների համադրման միջոցով, իրականացրել է շուրջ 3,100 գնման ընթացակարգերի տեխնիկական բնութագրերի վերլուծություն, որի շրջանակներում փոփոխության են ենթարկվել 168 գնման ընթացակարգերի հրավերներ, կամ ուսումնասիրված ընթացակարգերի մոտավորապես 5.5%-ը: Իրականացված վերահսկողական գործառնությունների արդյունքների հիման վրա 2022թ. նախաձեռնվել է 11 քրեական վարույթ և արձանագրվել են շուրջ 1.18 մլրդ ՀՀ դրամի խախտումներ: ՊՎԾ վերլուծության արդյունքում փոփոխության ենթարկված բնութագրերի տեսակարար (5.5%) կշիռը 2022թ. բոլոր կայացած և կազմակերպված

ընթացակարգերի (համապատասխանաբար 113,054 և 124,019) կիրառելու դեպքում կատարվի, որ ամենայն հավանականությամբ կայացած ընթացակարգերից 6218-ի, կամ կազմակերպված ընթացակարգերից 6820-ի դեպքում գնման առարկայի բնութագիրը բարելավման կարիք է ունեցել:

Ոստիկանության կողմից մեքենաների ձեռքբերման դեպքում տեխնիկական բնութագրում ներկայացված պահանջներին հնարավոր մատակարարների զգալի մասի կողմից ներմուծվող մեքենաները չէին համապատասխանում ՀՀ ոստիկանության պատրաստած տեխնիկական բնութագրի պահանջներին:

Այս հետազոտության ընթացքում չի հաջողվել հայտնաբերել պատվիրատուների կարիքների գնահատման վերլուծություններ, ուսումնասիրություններ և հաշվետվություններ, որոնց հիման վրա պատրաստվել են գնման առարկայի տեխնիկական բնութագրերը, ինչը նշանակում է, որ ամենայն հավանականությամբ գործընթացի այդ երկու փուլերի միջև առկա է խզում:

3.7. Գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են Եվրասիական տնտեսական միությանն (այսուհետ՝ ԵԱՏՄ) անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված¹⁹, կամ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են ՀՀ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, կամ որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագրի կնքելու իրավունքից:

ՀՀ ֆինանսների նախարարությունը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ պատճառաբանված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելու և հաջորդող օրը այն տրամադրվում է ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին: ՀՀ ֆինանսների նախարարությունը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակվիչ դատական ակտն ուժի մեջ

¹⁹ Այս պայմանը չի գործում միջազգային պայմանագրերով նախատեսված միջոցների հաշվին կատարվելիք գնման գործընթացների նկատմամբ:

մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

ՀՀ ֆինանսների նախարարությունը հրապարակում է ԵԱՏՄ անդամ երկրների գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակներին հղումները²⁰: Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը ՀՀ ֆինանսների նախարարությունը հրապարակում է www.gnumner.minfin.am կայքում: 2023թ. նոյեմբերի 26-ի դրությամբ ցուցակն ուներ 389 էջ և 2190 տող:²¹

Ցուցակը չի նշում այն պատվիրատուներին, որոնց որոշմամբ էլ ՀՀ ֆինանսների նախարարությունը ձևավորել է ցուցակը և չի տրամադրում տեղեկատվություն, թե արդյոք եղել են դեպքեր, երբ ՀՀ ֆինանսների նախարարությունը որոշել է, որ պատվիրատուի որոշումը բավարար հիմնավորված չէ:

Առանձին մատակարարներ կարող են ցուցակում հայտնվել մի քանի անգամ: Ներկա ձևաչափով ցուցակը չի տալիս հնարավորություն ավտոմատացված եղանակով բացահայտելու այդ դեպքերը: Օրինակ, «ՄՄ և ընկերներ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 02535853) ցուցակում նշված է 41 անգամ (հավելված 2), բոլոր դեպքերում իրավական հիմք է հանդիսացել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը: Մի շարք դեպքերում ընկերությունը ցուցակում ներառվել է երկու և ավելի անգամ: Օրինակ՝ 2-ական անգամ 2023թ. մայիսի 9-ից (1811 և 1815 տողեր) և մայիսի 16-ից (1828 և 1829 տողեր), 2 անգամ 2023թ. հունիսի 6-ից (1861 և 1862 տողեր), 5 անգամ 2023թ. հունիսի 10-ից (1870, 1871, 1872, 1873 և 1874 տողեր), 3 անգամ 2023թ. հունիսի 20-ից՝ (1879, 1880 և 1881) և մի քանի այլ դեպքերում: Հասկանալի չէ, թե արդյոք սրանք վրիպակներ են, թե մեկ ընկերությունը ցուցակում հայտնվում է մի շարք անգամներ, տարբեր պատվիրատուների որոշումների հիման վրա:

Հայտնի չէ, թե արդյոք ընկերությունը ցուցակում, օրինակ 2023թ. ապրիլի 22-ին մինչև 2025թ. ապրիլի 25-ը ներառվելուց հետո կարողացել է մասնակցել նոր գնումների, օրինակ, 2023թ. հոկտեմբերի 13-ին նախորդող օրերին և դրա շրջանակներում մինչև 2025թ. հոկտեմբերի 13-ը նորից ներառվել է ցուցակում, թե հոկտեմբերի 13-ին ցուցակում ներառվել է այնպիսի պայմանագրի շրջանակներում, որը ստորագրվել է մինչև 2023թ. ապրիլի 22-ը: Ի՞նչ կարգավիճակ է ունենում ընկերությունը, եթե պատվիրատուն կայացնում է որոշում նրան ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ, իսկ ընկերությունը գործող պայմանագիր ունի մեկ այլ, «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված պատվիրատուի հետ:

Ընկերությունները կարող են դատարանում վիճարկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ պատվիրատուների պատճառաբանված որոշումները: Օրինակ, «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 00873228) 2022թ. հունիսի 14-ին Երևան քաղաքի առաջին սայանի ընդհանուր իրավասության դատարանի 2022թ. հունիսի 4-ի թիվ ԵԴ/25253/02/22 որոշման հիման վրա հանվել է ցանկից (տող 1323): «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն գնումների գործընթացին

²⁰ ԵԱՏՄ երկրների Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը հասանելի է <https://gnumner.minfin.am/hy/main/eamLink/> էջում:

²¹ Այդ թվում տեղեկատվություն այն ընկերությունների մասին, որոնք այլևս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում չեն: Այն ընկերությունների տվյալները որոնք 2023թ. նոյեմբերի 30-ից հետո դեռ գտնվելու են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում սկսվում է 1131 տողից (էջ 210): Առաջին 1130 տողերում նշված ընկերությունների գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում գտնվելու ժամկետը սպառվել է: Վերլուծությունների տեսակետից դրական է, որ այդ 1130 տողերի տեղեկատվությունը շարունակում հասանելի մնալ հանրությանը:

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու դեպքերը ներկայացված են հավելված 2-ում:

3.8. Գնում չհանդիսացող ծախս

«Գնումների մասին» օրենքի հոդված 18-ի առաջին մասի համաձայն գնում կատարելու ընթացակարգերն են (1) էլեկտրոնային աճուրդը, (2) մրցույթը, (3) գնանշման հարցումը և (4) մեկ անձից գնումը: «Գնումների մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Գանձապետական համակարգի մասին» և պետական ֆինանսական կառավարման ոլորտը կարգավորող մնացած օրենքները, ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշումը չեն սահմանում և չեն օգտագործում «գնում չհանդիսացող ծախս» հասկացություն: Ն. Փաշինյանի կառավարությունն այդ հասկացությունը ՀՀ օրենսդրական դաշտ է ներմուծել 2018թ. հունիսի 15-ին, «Բյուջեների կատարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» №706-Ն իր որոշմամբ:²²

Որոշման համաձայն «գնում չհանդիսացող ծախս» (այսուհետ՝ ԳՉԾ) են համարվում (1) նախորդ տարիների բյուջեների կատարման ընթացքում ստանձնած պարտավորությունների դիմաց առաջացած պարտքերի մարմանն ուղղվող ծախսերը, (2) միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման գծով ծախսերը, (3) հսկիչ գնումներով կատարվող ծախսերը, (4) աշխատանքային պայմանագրերը, օրենքով նախատեսված դեպքերում քրեական, վարչական կամ դատական վարույթ իրականացնող պաշտոնատար անձանց որոշումներով նախատեսված կոնկրետ անձանց կողմից մատուցվող ծառայությունների գծով ծախսերը, արժեթղթերի հավատարմագրային կառավարման հետ կապված ծախսերը, (5) կանխիկ և բանկային վճարային քարտերով շրջանառվող միջոցների գծով՝ ՀՀ կառավարության որոշումներով հաստատված ծախսերը և (6) ՀՀ տարածքից դուրս կատարվող գնումների գծով կատարվող ծախսերը: ԳՉԾ կիրառման դեպքում գոյություն չունի դրա ընտրությունը հիմնավորելու պահանջ: ԳՉԾ «ընթացակարգ» ներմուծվել է Armeps համակարգ:

Armeps համակարգի համաձայն 2022թ. 28 պատվիրատու 2488 ԳՉԾ «ընթացակարգի» արդյունքում կատարել է 5,792,709.0 հազար դրամի գնում: ՀՀ քննչական կոմիտեն ԳՉԾ «ընթացակարգով» կատարել է 1455, ՀՀ առողջապահության նախարարությունը՝ 367, դատական դեպարտամենտը՝ 177, ՀՀ ՆԳՆ-ն՝ 146 գնում: ԳՉԾ «ընթացակարգով» ՀՀ առողջապահության նախարարությունը կատարել է 894.6 մլն դրամի, ՀՀ դատախազությունը՝ 744.5 մլն դրամի, ՀՀ արդարադատության նախարարությունը՝ 7165 մլն դրամ, ՀՀ ՊՆ-ն՝ 685.7 մլն դրամի, ՀՀ քաղաքաշինության կոմիտեն՝ 648.6 մլն դրամի, ՀՀ ՏԿԵՆ-ը՝ 500.2 մլն դրամի, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը՝ 436.5 մլն դրամի, ՀՀ ՊԵԿ-ը՝ 309.1 մլն դրամի, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը՝ 286.5 մլն դրամի, ՀՀ քննչական կոմիտեն՝ 186.2 մլն դրամի, ՀՀ ԲՏԱՆ-ը՝ 142.8 մլն դրամի գնում:

ԳՉԾ «ընթացակարգով» պատվիրատուները կատարել են այլ ծախսեր, ձեռք են բերել անասնաբուժական դեղորայք (ՀՀ ԱԱԾ), անշարժ գույքի և շարժական գույքի գնահատման (ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարումն սպասիվող ծառայություն), բանավոր և գրավոր թարգմանությունների (դատական դեպարտամենտ, ՀՀ դատախազություն, ՀՀ ՆԳՆ), բնակտարածությունների մաքրման (ՀՀ ՊԵԿ), գազատապառման տեխնիկական սպասարկման և հրահանգավորման (ՀՀ

²² ՀՀ կառավարության 2018. հունիսի 15 «Բյուջեների կատարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» №706-Ն որոշում: Հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=179519> էջում:

արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայություն) ծառայություններ, «գնում չհանդիսացող ծախս» (ՀՀ ՏԿԵՆ, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ՊՆ, ՀՀ ԲՏԱՆ, ՀՀ ՆԳՆ, ՀՀ պետական պահպանության ծառայություն, Միասնական սոցիալական ծառայություն, Սրբակցության պաշտպանության հանձնաժողով, ՀՀ ԱԳՆ), հարկերի վճարում (ՀՀ առողջապահության նախարարություն), կապի և հեռահաղորդակցության ծառայություններ (ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայություն), փորձագիտական ծառայություններ (ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե, ՀՀ քննչական կոմիտե, դատական դեպարտամենտ, ՀՀ ՆԳՆ, ՀՀ ՊԵԿ), ճանապարհների վերանորոգման աշխատանքներ (ՀՀ ՏԿԵՆ), մասնագիտական ստուգման (ՀՀ քննչական կոմիտե), մաքրման (ՀՀ ՊԵԿ) և մի շարք այլ ծառայություններ:

Armeps համակարգում ԳԶԾ «ընթացակարգով» գործարքների որոնումների արդյունքում պարզվել է, որ պատվիրատուներն այդ «ընթացակարգն» օգտագործում են առնվազն 2013թ. սկսած և դրանց քանակներն ու ծավալներն աստիճանաբար ավելանում են (աղյուսակ 17): 2023թ. դեկտեմբերի 2-ի դրությամբ պատվիրատուները ԳԶԾ 2322 ընթացակարգով 6.5 մլրդ դրամի գնում են կատարել:

Աղյուսակ 17. Գնում չհանդիսացող ծախս ընթացակարգով գնումների ծավալները և քանակները 2013-22թթ.

	Գնումների քանակը	Գնումների ծավալը (դրամ)
2023թ. (դեկտեմբերի 2-ի դրությամբ)	2322	6,521,449,080
2023թ. (նոյեմբերի 21-ի դրությամբ)	2149	6,492,827,658
2022թ.	2488	5,792,709,000
2021թ.	1509	2,147,130,955
2020թ.	1616	3,040,360,265
2019թ.	1213	3,810,856,197
2018թ.	328	923,834,121
2017թ.	167	2,420,956,595
2016թ.	25	143,731,239
2015թ.	19	75,241,578
2014թ.	12	5,064,125
2013թ.	6	1,066,745

Աղբյուր. Armeps

Ինչպե՞ս են պատվիրատուները 2013-18թթ. ԳԶԾ ընթացակարգով գնումներ կատարել, եթե ՀՀ ֆինանսների նախարարության 2023թ. մարտի 16-ի №03/26-1/4820-2023 գրության համաձայն ԳԶԾ վերաբերյալ կարգավորումը նախատեսվել է 2018թ. հունիսի 15 №706-Ն որոշմամբ: ԳԶԾ «ընթացակարգ» չի նշվել «Գնումների մասին» 2010թ. դեկտեմբերի 22-ին ընդունված օրենքով նախատեսված չորս ընթացակարգերի թվում. բաց, մրցակցային երկխոսություն, սահմանափակ և բանակցային ընթացակարգեր:

«Գնումների մասին» օրենքով չնախատեսված «ընթացակարգի» օգտագործումը, որով ձեռք են բերվում այն նույն ապրանքները, աշխատանքները և ծառայությունները, որոնք ձեռք են բերվում օրենքով նախատեսված ընթացակարգերով, տեղ է տալիս մտածելու, որ այս «ընթացակարգը» դարձել է օրենքը շրջանցելու միջոց, ինչը կոռուպցիոն ռիսկերի առկայության մասին նախազգուշացնող կարմիր դրոշակ է:

3.9. Պայմանագրի կատարում. հանձնում-ընդունում

ՀՀ հաշվեքննիչ պալատը ՀՀ ՆԳՆ ոստիկանությունում 2022թ. պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ իր ընթացիկ եզրակացության մեջ (ՀՀ հաշվեքննիչ պալատի 2023թ. ապրիլի 26-ի թիվ 69-Ս որոշում) ներկայացրել է մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների, կատարված աշխատանքների հանձնման ընդունման հետ կապված մի շարք խնդիրներ: Ոստիկանության պատասխանատու աշխատակիցներն ընդունել են և ոստիկանությունը վճարել է սվեդի մեծ մակերեսով ճաղավանդակների համար, քան ոստկանական մեքենաներում տեղադրված ճաղավանդակների մակերեսն է: Հաղորդակցության միջոցներ են «տեղադրվել» դեռևս ձեռք չբերված մեքենաներում, մեքենաների կլորենսր եղել է սվեդի ցածր, քան պայմանագրին կից տեխնիկական բնութագրում, տեսանկարահանող սարքերը չեն ապահովել դիմացի մեքենայի պետահամարանիշի լուսանկարում այն արագության դեպքում, որը նշված է եղել բնութագրում, և այլ դեպքեր:

Թրանսփարենսի ինթերնեշլ ՀԿ-ի կողմից Հայաստանի պաշտպանության բնագավառի հիմնական կոռուպցիոն ռիսկերը հետազոտությունը ևս նշել է նման դեպքեր:

Չնայած օրենսդրական կարգավորումների առկայությանը պատվիրատուները հազվադեպ են ՀԿ-ներին և լրատվամիջոցների ներկայացուցիչներին ներգրավում ապրանքների, ծառայությունների և աշխատանքների հանձնման-ընդունման աշխատանքներին, ինչը կասկածի տակ է դնում բաց, թափանցիկ, հաշվետու և պատասխանատու կառավարմանը հավատարմությունը:

«Պետական գնումների հանրային վերահսկողության և հաշվետվողականության խթանում» ծրագրի շրջանակներում հատուկ ուշադրություն կդարձվի հանձնման-ընդունման փուլում առկա կարգավորումներին և կներկայացվեն այն բարելավելու վերաբերյալ առաջարկություններ:

3.10. ՀՀ ֆինանսների նախարարության դերը

ՀՀ ֆինանսների նախարարությունն իրականացնում է գնումների գործընթացի կարգավորումն ու համակարգումը: Գնումների գործընթացի կարգավորման և համակարգման աշխատանքների կազմակերպման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարությունը (1) համակարգում է գնումների վերաբերյալ իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները և ընդունում կամ ներկայացնում է դրանք ՀՀ կառավարության հաստատմանը, (2) գնումների գործի կազմակերպման հարցում մեթոդական օժանդակություն է ցուցաբերում պատվիրատուներին, (3) ապահովում է գնումների համակարգողների որակավորման շնորհումը և վերջիններիս շարունակական մասնագիտական վերապատրաստման համակարգի առկայությունը, (4) կազմակերպում է տեղեկագրի հրապարակումը, (5) համակարգում է գնումների հետ կապված միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների և ՀՀ պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությունը, (6) հաշվառում է պետության համար պարտավորություններ առաջացնող գնման գործարքները, (7) հրապարակում է պետական գնումների տարեկան հաշվետվությունն ու գնումների որակավորված մասնագետների (անձանց) ցուցակը, (8) հաստատում է գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը, (9) հաստատում է ներկայացվող փաստաթղթերի, ներառյալ՝ հաշվետվությունների ձևերը և դրանց ներկայացման ժամկետները, (10) հաստատում է գրանցամատյանի ձևը և վարման կարգը, (11) **իրականացնում է էլեկտրոնային գնումների համակարգի սպասարկման և համակարգման գործառույթները**, (12) գնումների վերաբերյալ ահազանգերի արձանագրման և հարցերին

արագ արձագանքելու նպատակով սպառնալով է գնումների աջակցության ծառայության (թեժ գիծ) առկայությունը:

Կանոնադրության համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության խնդիրը գնումների քաղաքականության մշակումն է²³: Նախարարության գործառնություններից մեկը գնումների ոլորտը կարգավորող օրենսդրությամբ նախարարությանը վերապահված գնումների գործընթացի կարգավորման և համակարգման լիազորությունների կատարումն է: Ֆինանսաբյուջետային վերահսկողության բնագավառում ՀՀ ֆինանսների նախարարության պարտականությունն է գնահատել հանրային հատվածի կազմակերպությունների գնումների համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

«Իրագել քաղաքացիների միավորում» խորհրդատվական ՀԿ-ն գրություն էր ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն, խնդրելով ներկայացնել 2020-22թթ. մի շարք պատվիրատուների կողմից ԳՀ ընթացակարգով 80 մլն դրամը գերազանցող գնումների իրավական հիմքերը: Պատասխան գրությունից հետևում է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը չի հետևում ԳՀ ընթացակարգով կատարվող գնումների «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխանությանը, չի պահանջել և չունի տեղեկատվություն այդ մասին, այլապես կտրամադրեր իրավական հիմքերը:

ՀՀ ֆինանսների նախարարության դերը ժամանակի ընթացքում տրանսֆորմացիայի է ենթարկվել:

2000թ. ընդունված «Գնումների մասին» օրենքով ի լրումն վերը նշված իրավունքների և պարտականությունների, ՀՀ ֆինանսների նախարարությունը նաև վերահսկում էր պատվիրատուների կողմից կողմից օրենքի դրույթների և այլ իրավական ակտերի պահանջների կատարումը, մասնակիցների բողոքների հիման վրա կազմակերպում էր ստուգումներ և ընդունում պատվիրատուների համար պարտադիր կատարման ենթակա որոշումներ, օրենքով նախատեսված դեպքերում հաստատում կամ մերժում էր գնումների կատարման ձևի և պայմանագիր կնքելու մասին պատվիրատուների որոշումները, իրականացնում էր գնումների ընթացակարգերի և դրանց մաս կազմող արձանագրությունների ստուգում:

2002թ. ՀՀ կառավարության 2002թ. հունիսի 11-ի №1460-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության համաձայն²⁴ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունն (այսուհետ՝ ՖԷՆ) սպառնալով էր գնումների ընթացակարգերի կազմակերպման և անցկացման գործընթացի նորմատիվ կարգավորման մեթոդաբանությունը, գնումների վերաբերյալ նորմատիվ փաստաթղթերի նախագծերի մշակումը և դրանք ՀՀ կառավարության և (կամ) ՀՀ վարչապետի հաստատմանը ներկայացնելը, գնումների կատարման գործում պետական մարմիններին օժանդակության ցուցաբերումն ու դրանց կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի դրույթների և այլ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը, պետական մարմիններին մեթոդական օգնության ցուցաբերումը, գնումներ կատարելու ժամանակ օգտագործվող փաստաթղթերի նշումների մշակումը և հրապարակումը, մասնակիցների բողոքների հիման վրա ստուգումների կազմակերպումը և պատվիրատուների համար պարտադիր կատարման ենթակա որոշումների ընդունումը, «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում գնումների կատարման ձևի մասին պատվիրատուների որոշումների

²³ ՀՀ վարչապետի 2018թ. հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» №743-Լ որոշում: Հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=163763> էջում:

²⁴ ՀՀ Կառավարության 2002թ. հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» №1460-Ն որոշում: Հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=10031> էջում:

հաստատումը կամ մերժումը, գնումների հետ կապված միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների և ՀՀ պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցության համակարգումը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ գնումների գծով աշխատողների մասնագիտական ուսուցման, որակավորման ու վերապատրաստման գործի կազմակերպումը, գնումների ընթացակարգերի և դրանց մաս կազմող արձանագրությունների ստուգումը, գնումների պաշտոնական տեղեկագրի հրատարակումը, «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում պայմանագիր կնքելու մասին պատվիրատուների որոշումների հաստատումը կամ մերժումը, գնումների ակտերի՝ ներառյալ հրահանգների, կարգադրությունների և հրամանների պարբերական հաշվառումը: ՀՀ պետական բյուջեի կատարման նկատմամբ ՀՀ կառավարության հսկողության իրականացման և ֆինանսական վերահսկողության ոլորտում ՖԷՆ-ը իրականացնում էր պետական և տարածքային կառավարման մարմինների ու համայնքների, դրանց գլխավոր ֆինանսիստների կողմից ՀՀ պետական բյուջեի կատարման ուղղությամբ տարվող աշխատանքների՝ ներառյալ պետական պատվերի տեղադրման (գնումների գործընթացի) ճշտության և օրինականության նկատմամբ հսկողություն:

Եզրակացություն

Պատվիրատուների կողմից մշակվող գնումները և գնումների պլանները չեն հիմնվում կարիքների գնահատման վրա: ՊՎԾ ուսումնասիրությունը վկայում է, որ հաճախ գնման առարկայի բնութագիրը շարունակում է խնդիր հանդիսանալ գնումների ազատ, արդար, մրցակցային գործընթաց կազմակերպելիս:

Պատվիրատուները գնում կատարելու նպատակով հաճախ օգտագործում են ՄԱ ընթացակարգ: ՄԱ-ն ընթացակարգի վերաբերյալ որոշում կայացնելիս վերջին ընտրանքը լինելու փոխարեն (երբ պատվիրատուները համոզվում են որ մրցույթը և մրցակցությունն ապահովող այլ ընթացակարգերի օգտագործումը հնարավոր չէ), ըստ էության այն դիտարկում են որպես առաջին ընտրություն (եթե իրենց կարծիքով, կարողանում են հիմնավորել ՄԱ օգտագործումը, այլևս չեն դիտարկում մնացած տարբերակները): Արդյունքում, ոչ մրցույթային, ոչ մրցակցային ընթացակարգերի քանակները և դրանցով կատարված գնումները մեծ տեսակարար կշիռ են կազմում:

ՀՀ ֆինանսների նախարարությունը հրապարակում է ԵՍՍՄ անդամ երկրների գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակներին հղումները և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը: Պատվիրատուների որոշումները մասնակիցները կարող են բողոքարկել դատական կարգով, ինչը կարող է զգալիորեն ծանրաբեռնել արդեն իսկ ծանրաբեռնված դատական համակարգը: ՀՀ ֆինանսների նախարարությունը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի *պատճառաբանված* որոշման հիման վրա: Հայտնի չէ, թե արդյոք ՀՀ ֆինանսների նախարարությունն ունի պատվիրատուների ղեկավարների որոշումների պատճառաբանված լինելու հանգամանքը ստուգելու մեխանիզմներ և գործիքներ: Հայտնի չէ, թե ով է հսկում պատվիրատուների ղեկավարների պատճառաբանված լինելու հանգամանքը:

Գնումների գործընթացի նկատմամբ հանրային վստահությունը կբարելավվի և դատական համակարգի վրա դրվող բեռը կմեղմվի, եթե հնարավոր լինի ձևավորել պատվիրատուների որոշումների պատճառաբանված լինելը հավաստող *անկախ* մեխանիզմ կամ գործիք: Չի հայտնաբերվել դեպք, երբ ՀՀ ֆինանսների նախարարությունը մասնակցին չներառի գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, պատվիրատուի որոշումը բավարար պատճառաբանված չլինելու հիմնավորվածությամբ:

Ներկա ձևաչափով հնարավոր չէ գտնել տեղեկատվություն, թե որ պատվիրատու գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մատակարարին ներառելու քանի որոշում է կայացրել յուրաքանչյուր տարի, քանի դեպքում է նման որոշում կայացրել միննույն ընկերության նկատմամբ, ըստ տարիների ինչպես է փոփոխության ենթարկվում նման որոշումների քանակը, միննույն մատակարարը քանի անգամ է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, որ պատվիրատուներն են որոշում կայացրել տվյալ մատակարարին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, այլ տեղեկատվություն, որը քաղաքականություն մշակողների, պատվիրատուների, մատակարարների, ՀԿ-ների, լրատվամիջոցների, վերլուծաբանների համար կարող է արժեքավոր լինել:

Գնումներ կատարելու նպատակով պատվիրատուներն օգտագործում են օրենքով չնախատեսված գնում չհանդիսացող ծախս «ընթացակարգ»:

Այս հետազոտության շրջանակներում չի հաջողվել գտնել վկայություններ, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը կատարում է հանրային հատվածի կազմակերպությունների գնումների (գործարքների) ՀՀ օրենսդրությանը համապատասխանությունը գնահատելու իր կանոնադրական պարտականությունը:

Առաջարկություններ

ՀՀ ֆինանսների նախարարությանն առաջարկում ենք հանրային հատվածի կազմակերպությունների գնումների ՀՀ օրենսդրության համապատասխանության սուղեղու իր կանոնադրական գործառույթի շրջանակներում պարբերաբար ուսումնասիրել գնման առարկայի բնութագրերը, կարիքների գնահատմամբ դրանց հիմնավորվածությունը, շուկայում առկա ապրանքների տեսակարար կշիռը, որոնք իրենց բնութագրով համապատասխանում են պատվիրատուների կողմից հրապարակվող գնման առարկայի բնութագրի պահանջներին և հանրային հատվածի կազմակերպությունների գնումների ՀՀ օրենսդրությանը համապատասխանության շրջանակներում գնահատել նաև գնման առարկայի բնութագրերը և իր կողմից հրապարակվող տարեկան հաշվետվություններում տեղեկատվություն ներառել գնման առարկայի բնութագրին ներկայացվող պահանջներին պատրաստված գնման առարկայի բնութագրերի համապատասխանության վերաբերյալ:

ՀՀ ֆինանսների նախարարությանն առաջարկում ենք հանրային հատվածի կազմակերպությունների գնումների մասնագետների համար կազմակերպվող մասնագիտական և կարողությունների զարգացման դասընթացների ժամանակ հիմնվել նախորդ պարբերության մեջ նշված ուսումնասիրությունների վրա:

Քննարկման կարիք ունի պատվիրատուների կայացրած որոշումների պատճառաբանվածությունը հավաստելու մեխանիզմներ ներդնելու անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը ձևավորել այնպես, որպեսզի հնարավոր լինի կատարել որոնումներ ըստ տարիների, ըստ պատվիրատուների, ըստ մատակարարների և այլ չափանիշների:

Ներառել պահանջ, որպեսզի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատճառաբանված որոշման մեջ պատվիրատուի ղեկավարը նշի, թե ինչպես է մատակարարի հետ պայմանագրի լուծումը ազդել

հանրությանը ծառայություն մատուցելու պատվիրատուի կարողության վրա (օրինակ, կարող է ուսդիկանությունը շարունակել վարորդական իրավունքի վկայականներ թողարկել, եթե տվյալ պայմանագրի մյուս կողմը չի մատակարարել դրա պատրաստման համար անհրաժեշտ բաղադրիչները, կամ նախարարություններից որևէ մեկին տվյալների էլեկտրոնային շտեմարանի սպասարկման ծառայություններ մատուցող ընկերությունը դադարեցնում է սպասարկել) և ինչ դասեր է պատվիրատուն քաղել, որը կարող է պիտանի լինել հետագայում նման գնում կատարելիս:

Դադարեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքով չնախատեսված գնում չհանդիսացող ծախս «ընթացակարգ»-ով գնումների կատարումը:

ՀՀ ֆինանսների նախարարությանն առաջարկում ենք գնումների վերաբերյալ իր տարեկան հաշվետվություններում ներառել տեղեկատվություն հանրային հատվածի կազմակերպությունների գնումների (գործարքների) ՀՀ օրենսդրությանը համապատասխանությունը գնահատելու իր կանոնադրական պարտականության շրջանակներում կատարված աշխատանքների վերաբերյալ:

4. Գնումների էլեկտրոնային համակարգը

«Էլեկտրոնային գնում» հասկացությունը Հայաստանի գնումների համակարգ ներմուծվել է 2004թ. ընդունված «Գնումների մասին» ՀՀ օրենքով, որտեղ դրան անդրադառնում էր մեկ հոդված: 2010թ. ընդունված «Գնումների մասին» ՀՀ նոր օրենքն արդեն տալիս էր «Էլեկտրոնային աճուրդ» և «Էլեկտրոնային միջոցներ» հասկացությունների սահմանումները և օգտագործում էր «Գնումների էլեկտրոնային տեղեկատու» ձևակերպումը: 2010թ. օրենքի մեկ ամբողջ գլուխ կարգավորում էր էլեկտրոնային աճուրդների հետ կապված հարաբերությունները: 2016թ. ընդունված «Գնումների մասին» ՀՀ օրենքի առանցքում արդեն էլեկտրոնային գնումներն էին:

2017թ. ապրիլի 6-ին ՀՀ կառավարությունը հաստատել է էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը, որն արձանագրում էր, որ էլեկտրոնային գնումներն իրականացվում են www.armeps.am համակարգի միջոցով: Կարգը նաև սահմանում էր, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը հանդիսանում է լիազորված մարմին և որ www.armeps.am համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնում է ՀՀ ֆինանսների նախարարությունը կամ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ընտրված իրավաբանական անձը:

2017թ. մայիսի 18-ի №534-Ն որոշմամբ ՀՀ կառավարությունը հաստատել է էլեկտրոնային աճուրդների իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը: Կարգով սահմանվում էր, որ էլեկտրոնային աճուրդի համակարգը դա էլեկտրոնային աճուրդների իրականացումն սպառնվող համակարգն է www.armeps.am/eaction: ՀՀ կառավարության որոշման մեջ նշված հղումով ինտերնետային էջ գոյություն չունի (պատկեր 20):

Պատկեր 20. ՀՀ կառավարության որոշման մեջ նշված հղմամբ էջի որոնման արդյունքի տեսաներածումը



Not Found


The requested URL /eaction was not found on this server.



Աղբյուր. www.armeps.am/eaction

Էլեկտրոնային աճուրդների իրականացումն ապահովող համակարգը հասանելի է <https://eauction.armeps.am/hy/user/login/> հղումով (պատկեր 21):

Պատկեր 21. ՀՀ կառավարության էլեկտրոնային աճուրդի էջի տեսանկյունից



Աղբյուր. <https://eauction.armeps.am/hy/user/login/>

Էլեկտրոնային գնումների համակարգի հետ կապված մշտապես խնդիրներ են եղել: Այդ խնդիրներն արձանագրել են ինչպես ՀՀ կառավարությունը, այնպես էլ այլ կառույցներ: 2012թ. հոկտեմբերին ՀՀ վարչապետը ՀՀ ֆինանսների նախարարությանը երկու ամսից պակաս ժամանակ էր տվել, որպեսզի վերջինս էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգը մշակող կազմակերպության հետ պայմանավորվածություն ձևափոխի և շտկեր համակարգում տվյալ պահին հայտնի խնդիրները: Նախատեսվում էր, որ կմշակվեն

ներկա պահին բացահայտված խնդիրների տեխնիկական նկարագրերը և ծառայությունների կատարման վերջնական հայտը ստանալու նպատակով կորսված համակարգը մշակող կազմակերպությանը: Կշտվեն համակարգում ներկա պահին բացահայտված խնդիրները: Դրանից մոտավորապես 6 ամիս հետո «Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային գնումների «ARMEPS» համակարգի շտկման, թարմացման և զարգացման աշխատանքների ղեկավարման, այդ թվում՝ հանձնարարականներ տալու, ներկայացված տեխնիկական մասնագրերը հաստատելու, սրված հանձնարարականների կատարման վերաբերյալ և այլ հաշվետվություններ հաստատելու, ինչպես նաև ծրագրի հետագա ընթացքը կանխորոշող որոշումներ կայացնելու նպատակով» ՀՀ վարչապետին իր նոր որոշմամբ ստեղծել է միջգերատեսչական հանձնաժողով:

Ինչպես նշվել է վերևում «Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական ՀԿ-ն հարցում է ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն խնդրելով տեղեկատվություն սրահադրել ՀՀ վարչապետի երկու որոշումների կատարման վերաբերյալ: ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ էլեկտրոնային գնումների համակարգի վերաբերյալ 2008-14թթ. ՀՀ ֆինանսների նախարարությունում առկա փաստաթղթերն արխիվացվել և 2022թ. մայիսի 31-ին ոչնչացվել են:

2023թ. մարտի 16-ի №03/26-1/4820-2023 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է (պատկեր 18), որ «գնումների էլեկտրոնային համակարգի աուդիտ չի իրականացվել, իսկ համակարգի անխափան աշխատանքն ապահովվում է համակարգի տեխնիկական ապասարկումն իրականացնող կազմակերպության հետ կնքված պայմանագրի շրջանակներում: Ընդ որում նշված կազմակերպության ընտրությունը յուրաքանչյուր տարի կատարվում է այդ նպատակով կազմակերպված գնման մրցակցային ընթացակարգի արդյունքում»: ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված փաստաթղթերի թվում առկա է iunetworks-ի կողմից պատրաստված Armepps համակարգի տնտեսական օպերատորի գործածողի ձեռնարկ: «Այյունեթվորքս» ՍՊԸ-ի վերաբերյալ Armepps համակարգում և այլ աղբյուրներում տեղեկատվության որոնումները սովել են հետևյալ արդյունքը:

Armepps համակարգի համաձայն 2016-21թթ. «Այյունեթվորքս» ՍՊԸ-ն պետական տարբեր կառույցների հետ կնքել է 43 պայմանագիր, այդ թվում 2016թ.՝ 406.3 մլն դրամի (ՀՀ ֆինանսների նախարարություն և ՊԵԿ), 2017թ.՝ 66.1 մլն դրամ (ՀՀ ֆինանսների նախարարություն), 2018թ.՝ 424.7 մլն դրամ 2019թ.՝ 616.3 մլն դրամ (ՀՀ ֆինանսների նախարարություն, ՊԵԿ, դատական դեպարտամենտ), 2020թ.՝ 525.9 մլն դրամ (ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ ՊՆ, ՊԵԿ, ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր ծառայություն, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ), 2021թ.՝ 25.8 հազար դրամ («Հայաերոնավիգացիա» ՓԲԸ), 2022թ.՝ 0 դրամ, 2023թ.՝ 0 դրամ: «Այյունեթվորքս» ՍՊԸ-ն ոչ միայն ծրագրային ապահովման ծառայություններ է մատուցել տարբեր պետական կառույցների, այլ նաև մատակարարել է հեռախոսային սարքեր, սերվերներ, տեխնիկա, պատրաստել է նախագծեր, կատարել է ծախսերի գնահատում, մատուցել է ինժեներական նախագծման և այլ ծառայություններ (հավելված 4):

«Հետք»-ի համաձայն «Այյունեթվորքս» ՍՊԸ-ն հիմնադրվել է 2008թ. մարտին, ՀՀ ֆինանսների նախկին նախարար Գագիկ Խաչատրյանի հորեղբոր որդու՝ Հայկ Խաչատրյանի և «Յուքոմ» ընկերության բաժնետեր Ալեքսանդր Եսայանի կողմից: Պետական ռեգիստրի տվյալների համաձայն 2023թ. դեկտեմբերի 4-ի դրությամբ «Այյունեթվորքս» ՍՊԸ-ի իրական շահառուներն են Մուրադ Մուրադյանը (2022թ. հոկտեմբերի 17-ից, 35%) և Արամ Անտոնյանը (2016թ. հունվարի 15-ից, 65%):

5. Արտաքին վերահսկողություն

Հանրային ֆինանսների կառավարման նկատմամբ արտաքին վերահսկողությունն Հայաստանի Հանրապետությունում իրականացնում է երկու կառույց՝ ՀՀ հաշվեքննիչ պալատն ու ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը:

5.1. Հաշվեքննիչ պալատ

Հաշվեքննիչ պալատն արտաքին պետական հաշվեքննությունն իրականացնող սահմանադրական անկախ մարմինն է: Հաշվեքննիչ պալատի գործունեության նպատակը հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում պետական և համայնքային բյուջեների, միջոցների, ստացած փոխառությունների և վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության վերաբերյալ Ազգային ժողովին և հանրությանը ժամանակին, մասնագիտական և անկողմնակալ տեղեկատվություն ներկայացնելն է:

Հաշվեքննիչ պալատը Ազգային ժողով է ներկայացնում տարեկան հաղորդում իր գործունեության վերաբերյալ, պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացություն և ընթացիկ եզրակացություններ: Ընթացիկ եզրակացությունը հաշվեքննության արդյունքում կազմված և հաշվեքննիչ պալատի կողմից հաստատված փաստաթուղթ է: Հաշվեքննիչ պալատն իրավասու է ուսումնասիրելու իր կողմից հաշվեքննվող մարմինների ներքին աուդիտի համակարգի արդյունավետությունը:

Դեռ ՀՀ 2020թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացության մեջ ՀՀ հաշվեքննիչ պալատը նշել էր, որ «2020թ. շարունակվել է **ներքին աուդիտի առաջադրանքների թիվ անկումը**» և որ մտահոգիչ է նաև որակական անկումը: ՀՀ հաշվեքննիչ պալատն արձանագրել էր, որ «**որակական անկումը տեղի է ունենում ներքին աուդիտի գործառույթը մասնավոր կազմակերպություններին պատվիրակելու ֆոնին**»: Էական անկում էր ապրել հանրային հատվածում ներքին աուդիտի գործունեության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների, ներկայացրած առաջարկությունների, իրավապահ մարմիններին փոխանցված դեպքերի քանակական ցուցանիշները, ներքին աուդիտորների թիվը: Հաշվեքննիչ պալատն արձանագրել էր «Տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ» և «Կատարողական աուդիտ» տեսակների **Չ հաստ** առաջադրանք: «Կատարողականի աուդիտ» տեսակի աուդիտների քանակի զրոյական մակարդակ ՀՀ հաշվեքննիչ պալատն արձանագրել էր այն պայմաններում, երբ համաձայն պալատի «պետական ֆինանսների կառավարման 2019-23 թվականների ռազմավարությամբ սահմանվել է, որ ներքին աուդիտների տարեկան ծրագրի **առնվազն 30%-ը** պետք է կազմեն կատարողականի աուդիտները»:

2020թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացության մեջ ՀՀ հաշվեքննիչ պալատն արձանագրել էր, որ «պետական մարմինների ներքին հսկողության համակարգի թերացումները կարող են ժամանակին չբացահայտվել և չկանխարգել, որի պայմաններում թուլանում է նաև ֆինանսական կարգապահությունը, ստեղծվում է նպատավոր միջավայր անհամապատասխանությունների և խեղաթյուրումների առաջացման համար, խաթարվում է արտաքին աուդիտոր (ի դեմս՝ Հաշվեքննիչ պալատի) – ներքին աուդիտոր կապը»:

Հաշվեքննիչ պալատի եզրակացությունները հրապարակվում են ինտերնետային կայքում²⁵: Գնումների հետ կապված 2019-21թթ. Հաշվեքննիչ պալատն ընթացիկ եզրակացություններ է պատրաստել հետևյալ հաշվեքննությունների վերաբերյալ.

²⁵ Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացությունները հասանելի են <https://armsai.am/hy/current-conclusions> հղմամբ:

- 2021թ. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ ՀՀ ՊՆ) գնումների գործընթացի հաշվեքննության արդյունքները գաղտնի են:
- 2019թ. ռազմական տեխնիկայի, սպառազինության, ռազմամթերքի և ռազմատեխնիկական միջոցների ապահովմանն ուղղված պետական գաղտնիք պարունակող ՀՀ ՊՆ կողմից իրականացվող գնումների հաշվեքննության արդյունքները հույժ գաղտնի են:
- 2019թ. ՀՀ կողմից հիմնադրված «Հայաստան» համահայկական հիմնադրամում 2015թ. հունվարի 1-ից 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում գնումների գործընթացի հաշվեքննության արդյունքում պատրաստված ընթացիկ եզրակացությունը հասանելի է Հաշվեքննիչ պալատի ինտերնետային կայքում:²⁶

Կատարված գնումներին ՀՀ հաշվեքննիչ պալատը երբեմն անդրադարձեր է կատարում տարբեր նախարարությունների և գերատեսչությունների գործունեության կողմից պետական բյուջեի տարեկան կատարման արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացություններում: ՀՀ հաշվեքննիչ պալատի 2023թ. ապրիլի 26-ի թիվ 69-Ս որոշմամբ²⁷ հաստատված «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ռազմականության 2022 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ» ընթացիկ եզրակացության մեջ ծավալուն անդրադարձ կա կատարված գնումների գործընթացներին:

5.2. ՀՀ պետական վերահսկողական ծառայություն

ՀՀ պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ ՊՎԾ) գործունեության նպատակը ՀՀ վարչապետին Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված վերահսկողական լիազորությունների իրականացումն է: ՊՎԾ-ն լիազորված է գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնել պետությունից, համայնքից, պետական, համայնքային ոչ առևտրային կազմակերպություններից, պետության, համայնքների հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպություններից նվիրաբերության կամ դրամաշնորհի կարգով միջոցներ ստացած իրավաբանական անձանց մոտ:

2023թ. ապրիլի 5-ին ՊՎԾ-ն հայտարարել է, որ վերլուծել է էլեկտրոնային գնումների ARMEPS / PPCM համակարգում գետեղված՝ 2022թ. ընթացքում կնքված, 406.6 մլրդ դրամ ծավալով 23799 պայմանագիր²⁸: Ռիսկայնության և մի շարք այլ չափորոշիչների համադրման միջոցով, ընտրանքային կարգով իրականացվել է շուրջ 3100 գնման ընթացակարգերի տեխնիկական բնութագրերի վերլուծություն: Արդյունքում, 168 գնման ընթացակարգերի հրավեր ենթարկվել է փոփոխության: 2021թ. մշտադիտարկվել է 2780 գնման ընթացակարգ, որի արդյունքում ՊՎԾ-ն ներկայացրել է 122 գնման ընթացակարգի տեխնիկական բնութագիր փոփոխության ենթարկելու առաջարկություն²⁹: 2022թ. արձանագրվել է մոտ 1.18 մլրդ դրամի խախտում և նախաձեռնվել է 11 քրեական վարույթ:

²⁶ ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019թ. սեպտեմբերի 19-ի թիվ 20/1 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կողմից հիմնադրված «Հայաստան» Համահայկական հիմնադրամում գնումների գործընթացի վերաբերյալ» ընթացիկ եզրակացություն: Հասանելի է <https://armsai.am/sites/default/files/program/2019/Hamahaykakan.pdf> էջում:

²⁷ ՀՀ հաշվեքննիչ պալատի 2023թ. ապրիլի 26-ի թիվ 69-Ս որոշման հավելված. «Ընթացիկ եզրակացություն Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ռազմականության 2022 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ»: Հասանելի է <https://armsai.am/hy/current-conclusions> էջում:

²⁸ ՀՀ ՊՎԾ 2023թ. ապրիլի 5-ի հայտարարությունը FB սոցիալական հարթակում, հասանելի է <https://www.facebook.com/StateSupervisionService/posts/pfbid0YAaekBbPVb4fTx51B9piKmDnLCYrTcu4HyU2NgdvtzkXU82R99fZdeRs1BY85n2l> էջում:

²⁹ ՀՀ ՊՎԾ 2023թ. փետրվարի 28-ի հայտարարությունը FB սոցիալական հարթակում, հասանելի է <https://www.facebook.com/watch/?v=3278745739047541> էջում:

2023թ. ՊՎԾ-ն ուսումնասիրություններ է իրականացրել ՀՀ արդարադատության նախարարության Քրեակատարողական ծառայությունում և ի թիվս մի շարք այլ բացահայտումների պարզել է, որ մի շարք դեպքերում դրանք իրականացվել են գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներով, ինչի արդյունքում արձանագրվել են նաև պետական միջոցների ոչ արդյունավետ կառավարման դեպքեր³⁰:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ առկա է քրեակատարողական հիմնարկների կարիքների համար սննդի պատրաստման ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող ռեսուրսների անխնա վատնման, քրեակատարողական ծառայության հաշվին այլ սպառողների էլեկտրաէներգիայի և խմելու ջրի սպօրինի տրամադրման դեպքեր, ինչի արդյունքում 2019-22թթ. Քրեակատարողական ծառայության կրմունսով ծախսերի գծով գերաձախսը կազմել է շուրջ 858 միլիոն դրամ:

2022-23թթ. «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի մասնաշենքերի օդափոխության և օդորակման համակարգի կառուցման շինարարական աշխատանքները, պայմանագրի դրույթների խախտմամբ, կապառու կազմակերպությունը գրեթե ամբողջությամբ պատվիրակել է այլ ընկերության, իսկ վերջինս ձեռք է բերել և տեղակայել տեխնիկական բնութագրերի պահանջներին չհամապատասխանող, նախագծով նախատեսված սարքավորումների արժեքներից մի քանի անգամ ցածր գնով սարքավորումներ: Արդյունքում, առանց սահմանված կարգով վերահաշվարկներ իրականացնելու, Քրեակատարողական ծառայության կողմից դրանք ընդունվել են և կապառու կազմակերպությանն ավել է վճարվել շուրջ 322 միլիոն դրամ գումար: Բացի այդ, նույն պայմանագրի շրջանակներում Ծառայության կողմից արձանագրվել է նաև 79 միլիոն դրամի չափով կատարողական ակտերով հաստատված և վճարված, սակայն փաստացի չկատարված աշխատանք:

Ուսումնասիրմամբ արձանագրվել են խախտումներ և պետական միջոցների անարդյունավետ կառավարման դեպքեր Քրեակատարողական ծառայության հաշվեկշռում առկա ավտոտրանսպորտային միջոցների սպասարկման, կալանավորված անձանց և դատապարտյալների համար ձեռքբերվող պատրաստի սննդի դեպքում: Ուսումնասիրության արդյունքներով առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող փաստերը փոխանցվել են ՀՀ գլխավոր դատախազությանը՝ իրավական գնահատական տալու և ընթացքը լուծելու նպատակով: ՀՀ քննչական կոմիտեում և ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է երեք քրեական վարույթ:

«Հանրային ռադիոընկերության» և «ԷյՋ Ընդ ԷյՋ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի շրջանակներում գնումների ընթացակարգերի վերաբերյալ քաղաքացու հանրագրի հիման վրա ՊՎԾ-ն մշտադիտարկում է իրականացրել «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ում և պարզել³¹, որ շուրջ 112 մլն դրամի ծառայություն չի իրականացվել գնման մրցակցային գործընթացների շրջանակներում: Ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման շրջանակներում նախատեսվել են աշխատանքներ, որոնց շեղումների պատճառով կապառու ընկերությունը շուրջ 2.8 մլն դրամ ավել գնով աշխատանքներ է ներկայացրել: Մշտադիտարկման արդյունքներն ուղարկվել են Գլխավոր դատախազություն:

³⁰ ՀՀ ՊՎԾ 2023թ. սեպտեմբերի 4-ի հայտարարությունը FB սոցիալական հարթակում, հասանելի է <https://www.facebook.com/StateSupervisionService/posts/pfbid0rn1kPMPoW1XCuQhOiR2uwdLZ3JeqbyyWgAZ9Uo2yD6axLJeN4rYcCHKqYD7bdptl> էջում:

³¹ ՀՀ ՊՎԾ 2023թ. մայիսի 31-ի հայտարարությունը FB սոցիալական հարթակում, հասանելի է <https://www.facebook.com/StateSupervisionService/posts/pfbid02KWUAdPj5inDb41jyHTdsQji25WGUVhtPbU5qYmpqVGB6nQVNjrFXyjnHCjYIPEvyl> էջում:

2023թ. սեպտեմբերի 12-ին ՊՎԾ-ն հայտարարել է³², որ «Ռ.Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում մշտադիտարկել է հանրային գնումների գործընթացների կազմակերպման ռիսկային հատվածի նկատմամբ: Դիտարկված գնման գործընթացներում ի հայտ եկած շուրջ 89 մլն ՀՀ դրամ առերևույթ իրավախախտումների և անհամապատասխանությունների վերաբերյալ նյութերը իրավական գնահատական տալու և ընթացքը լուծելու նպատակով ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն: ՀՀ քննչական կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ: «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում իրականացված մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ մի շարք գնման ընթացակարգեր իրականացվել են ՀՀ գնումների օրենսդրության խախտումներով: Իրավական գնահատական տալու նպատակով առերևույթ հանցակազմի հատկանիշներ պարունակող փաստերը փոխանցվել են ՀՀ գլխավոր դատախազություն: ՀՀ քննչական կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ:

6. Բողոքարկումների համակարգ

2022թ. հունվարի 21-ին ընդունված օրենքն ուժը կորցրած է ճանաչել գնումների հետ կապված բողոքներ քննող անձի, նրան ներկայացվող պահանջների, գործունեության, բողոք ներկայացնելու կարգը, գնումների ընթացակարգի կասեցում կանոնակարգող «Գնումների մասին» ՀՀ օրենքի 47-51 հոդվածները: Պատվիրատուների, գնահատող հանձնաժողովների գործողություններն ու անգործությունը և որոշումները կարելի է բողոքարկել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

ՀՀ ֆինանսների նախարարության տվյալների համաձայն 2022թ. երկրորդ կիսամյակում պատվիրատուների որոշումների և գործողությունների դեմ ներկայացվել է 31 դատական հայց: Դրանցից 3-ը կապված են եղել հրավերի պայմանների հետ, 15-ը հայտերի գնահատման փուլում գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած որոշումների դեմ, 10-ը՝ պատվիրատուների կողմից կայացրած պայմանագրերը միակողմանի լուծելու դեմ և 13-ը՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատվիրատուի ղեկավարի որոշման դեմ:

ՀՀ ոստիկանության դեմ ներկայացվել է 4 բողոք, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի, ՀՀ ՊԵԿ-ի և «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ դեմ՝ 3-ական, ՀՀ դատական դեպարտամենտի, ԵՊՀ-ի, «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի դեմ՝ 2-ական:

Դատարանները բավարարել են ներկայացված հայցերից 8-ը, այդ թվում հրավերի պայմանների դեմ ներկայացված բողոքներից մեկը («Աշոտ և Հայկ Եղբայրներ» ՍՊԸ-ն ընդդեմ Շիրակի մարզի Անիի համաձայնի), հայտերի գնահատման փուլում գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած որոշումների դեմ ներկայացված բողոքներից 4-ը («Հոֆման» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ ՏԿԵՆ-ի, «Պրոթերմ» ՍՊԸ-ն ընդդեմ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի, «Ռուստամ Սարգսյան» Ա/Ձ-ն ընդդեմ «Գյումրու Ավտոբուս» ՓԲԸ-ի, «Նոբիլիս-Գրուպ» ՍՊԸ-ն ընդդեմ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի), գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման դեմ ներկայացված բողոքներից 3-ը («ՊՐԵՄԻՈՒՄ ԳԱԶ» ՍՊԸ-ն ընդդեմ «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ի, «Քինգ մարշալ» ՍՊԸ-ն ընդդեմ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի, «Լեբրոն» ՍՊԸ-ն ընդդեմ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի):

³² ՀՀ ՊՎԾ 2023թ. սեպտեմբերի 12-ի հայտարարությունը FB սոցիալական հարթակում, հասանելի է <https://www.facebook.com/StateSupervisionService/posts/pfbid0onv4e8922t1axYa1787LchRKj1AalCWgLxzNGAbvbKsQWGPeUxUco1ZQ6gufDT6B1> էջում:

Պատվիրատուների կողմից կայացրած պայմանագրերը միակողմանի լուծելու դեմ ներկայացված 10 բողոքներից 8-ը մերժվել է, մեկն ընթացքում է, մեկը թողնվել է առանց քննության («ԱԼԼ գրուպ» ՍՊԸ-ն ընդդեմ «Բյուրեղավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի):

Դատարները բավարարել են «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի դեմ ներկայացված երկու բողոքները. գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման դեմ «Լեբրոն» ՍՊԸ-ի ներկայացված բողոքը և հայտերի գնահատման փուլում գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած որոշման դեմ «Նոբիլիս-Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը: Սա կարող է նշանակել, որ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի գնումները պլանավորելու և կազմակերպելու կարողությունը բարելավման կարիք ունեն:

Ժամանակի սղության պատճառով նախնական հաշվետվությունը միայն արձանագրում է բողոքարկումների հետ կապված իրավիճակը: Հնարավորության դեպքում այս իրավիճակի պատճառների և սրա հետևանքների վերլուծությունը կկատարվի հետագայում: Հաշվի առնելով ներկայացված բողոքների մեծ քանակը աշխատանքային թիմ է հարկավոր ամբողջ ծավալին անդրադառնալու համար:

Հավելված 1. 2018-23թթ. գնումների համակարգի բարելավման ուղղությամբ ՀՀ կառավարության ձեռնարկած միջոցները

2000թ. ի վեր ՀՀ կառավարությունը մշտապես փոխում և բարեփոխում է գնումների համակարգը: Չնայած այդ ջանքերին հանրության շրջանում դեռևս տարածված է այն տեսակետը, որ գնումների ոլորտը կոռումպացված է, գործընթացները ժամանակատար, թղթատար և ձևական են և որ գնումները չեն նպաստում հանրային ռեսուրսների նպատակային, արդյունավետ և ինսպորտային օգտագործմանը: 2016թ. ընդունվել է «Գնումների մասին» գործող օրենքը, որը 2000թ. ի վեր արդեն 4-րդն է (աղյուսակ Հ1.1): ՀՀ կառավարությունը ոչ թե փոփոխություններ և լրացումներ է կատարել գործող օրենքում, այլ ընդունել է բոլորովին նոր օրենք:

Աղյուսակ Հ1.1. «Գնումների մասին» ՀՀ օրենքների ընդունման օրերը և հղումները

	Օրենքի անունը	Ընդունման օրը
1	Գնումների մասին	2000թ. հունիսի 5 (ՀՕ-62)
	Հասանելի է https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=31962	
2	Գնումների մասին	2004թ. դեկտեմբերի 6 (ՀՕ-160-Ն)
	Հասանելի է https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=40700	
3	Գնումների մասին	2010թ. դեկտեմբերի 22 (ՀՕ-206-Ն)
	Հասանելի է https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=105996	
4	Գնումների մասին	2016թ. դեկտեմբերի 16 (ՀՕ-21-Ն)
	Հասանելի է https://www.arlis.am/documentview.aspx?docid=165080	

Աղբյուր. www.arlis.am

Պետական գնումների բնագավառում կարևոր է ոչ միայն տվյալների, այլ առաջին հերթին որոշումների կայացման թափանցիկությունը (արդյոք տեխնիկական բնութագիրը հիմնվում է կարիքների գնահատման վրա, ինչո՞ւ և ինչպե՞ս ընտրվեց այս կամ ընթացակարգը, ինչո՞ւ և ինչպե՞ս պատվիրատուն որոշեց խոշոր գնումը հերթական անգամ կատարել մեկ անձից):

«Գնումների մասին» նոր օրենք ընդունելով ՀՀ իշխանությունները փոփոխությունների են ենթարկել գնումների ընթացակարգերի տեսակները, ներմուծելով և հանելով ընթացակարգեր, կամ փոխելով դրանց անուններն ու բովանդակությունը (աղյուսակ Հ1.2): Ընթացակարգերի ցանկի ձևավորման վրա ազդեցություն է ունեցել նաև տեխնոլոգիական առաջընթացը, ինչը դրսևորվել է, օրինակ 2016թ. «Էլեկտրոնային աճուրդ» ընթացակարգի ներմուծման տեսքով:

Աղյուսակ Հ1.2. «Գնումների մասին» ՀՀ չորս օրենքներով նախատեսված գնման ընթացակարգերը կան ձևերը

2000թ.	2004թ.	2010թ.	2016թ.
Մրցույթ	Մրցույթ	Բաց ընթաց.	Մրցույթ
<i>Բաց և փակ</i>	<i>Բաց և փակ</i>		
	Սահմ.	Սահմ. ընթ.	
ԳՀ	ԳՀ		ԳՀ
Մեկ աղբյուր	Մեկ անձից	Բանակց. ընթ.	Մեկ անձից
	Մրց. բանակց.	Մրց. երկխ.	
			Էլ. աճուրդ

Ծանոթություն. բաց ընթաց.՝ բաց ընթացակարգ, Սահմ. մրց.՝ սահմանափակ մրցույթ, Սահմ. ընթ.՝ սահմանափակ ընթացակարգ, ԳՀ՝ գնանշման հարցում, Բանակց. ընթ.՝ Բանակցային ընթացակարգ, մրց. բանակց.՝ մրցակցային բանակցություններ, մրց. երկխ՝ մրցակցային երկխոսություն, էլ աճուրդ՝ էլեկտրոնային աճուրդ

2012թ. ՀՀ վարչապետն անդրադարձել էր գնումների ոլորտում առկա խնդիրներին և հաստատել դրանց նվազեցմանն ուղղված բարեփոխումների միջոցառումների ցանկը,³³ այդ թվում (1) ՀՀ ֆինանսների նախարարության գնումների հաշվառման գործառնություն, (2) գնումների էլեկտրոնային տեղեկատուի հետ կապված, (3) ARMEPS համակարգում, (4) ARMEPS-ի միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ իրականացնելիս, (5) հանրային կազմակերպությունների գնումներում, դրանց մոնիթորինգի կարգավորման և իրականացման գործում, (6) պատվիրատուների կողմից հայտարարվող գնման ընթացակարգերի հայտարարություններում և հրավերներում և (7) բողոքարկման խորհրդի որոշումների կատարման ժամանակ:

2013թ. ապրիլին «ARMEPS» համակարգի շտկման, թարմացման և զարգացման աշխատանքների ղեկավարման, այդ թվում՝ հանձնարարականներ տալու, ներկայացված տեխնիկական մասնագրերը հաստատելու, տրված հանձնարարականների կատարման վերաբերյալ և այլ հաշվետվություններ հաստատելու, ինչպես նաև ծրագրի հետագա ընթացքը կանխորոշող որոշումներ կայացնելու նպատակով ՀՀ վարչապետը միջգերատեսչական հանձնաժողով էր ստեղծել և հաստատել դրա անհատական կազմը³⁴:

Այս հետազոտության շրջանակներում փորձ է արվել պարզել, թե 2013-22թթ. ՀՀ կառավարությունն ինչ միջոցներ է ձեռնարկել էլեկտրոնային գնումների համակարգի աշխատանքների բարելավման ուղղությամբ և ՀՀ վարչապետի 2012-13թթ. որոշումները կարևոր դեր կարող են ունենալ այդ հարցում: Էլեկտրոնային գնումների համակարգի վերաբերյալ 2008-14թթ. ՀՀ ֆինանսների նախարարությունում առկա փաստաթղթերը արխիվացվել և 2022թ. մայիսի 31-ին ոչնչացվել են (պատկեր 1): Փաստաթղթերի ոչնչացումը հնարավորություն չի տա ուսումնասիրել գնումների համակարգի զարգացման պատմությունը և դասեր քաղել անցյալի սխալներից:

2013թ. հունիսի 13-ին Վերահսկիչ պալատի (այսուհետ՝ ՎՊ) նախագահին Ազգային ժողովում իր ելույթի ժամանակ խոսեց մեծ վատնումների մասին և նշեց, որ իրավիճակը գնումների համակարգում խիստ մտահոգիչ է, քանի որ խնդիրներն ունեն համակարգային բնույթ: Ի. Զաքարյանը հայտարարեց, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը «բազմիցս նշել է, որ գնումների ոլորտում առկա ռիսկերն էապես նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է ներդնել էլեկտրոնային գնումների համակարգ», որի գծով աշխատանքներն իրականացվում են 2004թ.: Նա նշեց, որ «2011 թվականին Ֆինանսների նախարարությունը պաշտոնապես հայտարարել է, որ էլեկտրոնային գնումների համակարգը, կարծես թե, չի աշխատում, իսկ ակնկալվող արդյունքները լավագույնը չեն: Այնուամենայնիվ, ուսումնասիրությամբ պարզվել է, որ համակարգը փաստացի չի գործում, եւ նույնիսկ գործընթացում խնդիրները գնալով ավելանում են: Դեռ ավելին, ծրագրի բանալիները կողերը, պարզապես, գոյություն չունեն, եւ ծրագիրը ձախողված է: Այս փաստը 2012 թվականի տարեկերջին պաշտոնապես ընդունվել է նաև Ֆինանսների նախարարության կողմից: Այսինքն՝ օգտագործված ռեսուրսները չեն տվել ակնկալվող արդյունքները»: Ի. Զաքարյանը նշում էր, որ ՀՀ ՖՆ-ն մշակել է ՀՀ էլեկտրոնային գնումների համակարգի բարեփոխումների «2013-2015թթ. ճանապարհային քարտեզ», որը նախատեսում էր շտկել խախտված համակարգը եւ զարգացնել դրա մնացած հնարավորությունները: ՎՊ նախագահի կարծիքով առանց ծրագրի ձախողմանը պատճառները և հետագայում դրանք չկրկնելու ռիսկերի կառավարման մեխանիզմներն ուսումնասիրելու լրացուցիչ

³³ ՀՀ վարչապետի 2012թ. հոկտեմբերի 2-ի «Գնումների ոլորտում առկա խնդիրների նվազեցմանն ուղղված բարեփոխումների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» №959-Ն որոշում: Հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=88622> էջում:

³⁴ ՀՀ վարչապետի 2013թ. ապրիլի 26-ի «Միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին» №308-Ս որոշում: Հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=82795> էջում:

Ֆինանսական միջոցների հատկացումը նվազեցնում է պլանավորվող բարեփոխումների հուսալիությունը: Իշխան Չաքարյանը հայտարարում էր, որ «հասել ենք մի եզրագծի, որտեղ հստակ ասել ենք՝ պետական բյուջեի ծախսային մասի 70%-ը, որը վերաբերում է «գնումներ եւ շինարարություն» ոլորտին, որ այս պահին կրում է խիստ ռիսկային, կոռուսկայացված բնույթ»: Նա նշել էր, որ խանութներում մեկ մետրը 110 դրամով (գումարած 20% ԱԱՀ-ն) վաճառվող մալուխը դատարանների շենքերի կառուցման նախահաշիվներում պլանավորվել է մեկ մետրը 1007 դրամ: Հունիսի 18-ին ԱԺ-ում ՎՊ հաշվետվության քննարկման ժամանակ, պատասխանելով ՀՀ արդարադատության նախարար Հրայր Թովմասյանին, Իշխան Չաքարյանն ուղղակի պնդեց. «Էժան, թանկ գումարում ենք, հանում ենք, էլի 200 քանի միլիոն ավել գումար եք տարել էդ յոթ կառույցների հետ կապված»:

Էլեկտրոնային գնումների համակարգի չաշխատելու և ձախողված լինելու փաստը ՎՊ նախագահի կողմից արձանագրելուց 10 տարի և Հայաստանում իշխանափոխությունից 5 տարի հետո ՀՀ կառավարությունը շարունակում է օգտագործել գնումների Armeeps համակարգը:

Ն. Փաշինյանի կառավարությունը բազմիցս է անդրադարձել գնումներին:

Պատկեր 22. ՀՀ վարչապետի աշխատակազմի 02.05.2019 մակը հաղորդագրությունը

Մամլո հաղորդագրություններ



Կառավարությունը քայլեր է ձեռնարկում գնման գործընթացների կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ

02.05.2019



2019թ. մայիսի 2-ին ՀՀ կառավարությունը հայտարարեց գնման գործընթացների կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ իր կողմից ձեռնարկվող քայլերի վերաբերյալ³⁵: ՀՀ կառավարությունը հանգել էր եզրակացության, որ «առկա կարգավորումները բավարար չափով չեն ապահովում գնման գործընթացների արդյունավետությունը և ընթացակարգերին մասնակցելու գրավչությունը, այդ թվում՝ փոքր և սկսնակ բիզնեսի համար, հրավերներով մասնակիցներին ներկայացվում են ձևական պահանջ կրող պայմաններ, պայմանագրերի կատարման շրջանակում մասնակիցները հնարավորություն են ստանում ցուցաբերելու ոչ պատշաճ վարքագիծ վտանգելով ծրագրերի լիարժեք իրականացումը»:

ՀՀ ֆինանսների նախարարության կարծիքով առաջարկվող փոփոխությունները պետք է նպաստեին գործընթացների արդյունավետությունը և ընթացակարգերին մասնակցելու գրավչության աստիճանը բարձրացնելուն, հայտերի գնահատման փուլում մասնակիցներին ձևական պահանջներով չձանրաբեռնելուն, պայմանագրերի կատարման շրջանակում առաջացող հնարավոր ռիսկերը նվազեցնելուն, ինչպես նաև


35 ՀՀ կառավարություն: (2019թ.): Կառավարությունը քայլեր է ձեռնարկում գնման գործընթացների կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: 2 մայիսի 2019թ.: Հասանելի է <https://www.primeminister.am/hy/press-release/item/2019/05/02/Cabinet-meeting/> էջում:

պատվիրատուների և գնահատող հանձնաժողովների կողմից հնարավոր սուբյեկտիվ որոշումների կայացումը բացառելու³⁶

Պատկեր 23. ՀՀ վարչապետի աշխատակազմի 17.07.2019 մամլո հաղորդագրությունը Մամլո հաղորդագրություններ

Կառավարության նպատակն է պետական գնումների համակարգը դարձնել ճկուն, որը կպահպանի արդար մրցակցության սկզբունքը և զերծ կլինի կոռուպցիոն երևույթներից. Վարչապետի մոտ տեղի է ունեցել խորհրդակցություն

17.07.2019



Դրանից երկուսուկես ամիս հետո, 2019թ. հուլիսի 17-ին տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ³⁷ ՀՀ վարչապետը նշել է, որ առկա համակարգն, ըստ էության, համապատասխանում է լավագույն չափանիշներին³⁸ և որ «կա կարծիք, որ գնումների ոլորտում չեն այդ խնդիրները և դրանք ավելի շատ հարակից ընթացակարգերի ու կառուցակարգերի հետ են կապված»: Վարչապետ Փաշինյանը չէր տեսնում նախորդ իշխանություններից ժառանգած համակարգի լուրջ բարեփոխման անհրաժեշտություն:

Բոլոր այն գերատեսչություններին, որտեղ առկա է խոշոր գնումների պոտենցիալ և ռազմավարական ծրագրերի տեսլական, վարչապետը հանձնարարել էր գնումների ռազմավարությունը պլանավորել երկարաժամկետ հատվածի համար՝ 5-10 տարվա կտրվածքով, որպեսզի մեծանա գնումների նկատմամբ պոտենցիալ մասնակից ընկերությունների հետաքրքրվածությունը:

Իր 2019թ. հոկտեմբերի 10-ի նիստում ՀՀ կառավարությունը տարվա ընթացքում երրորդ անգամ է անդրադարձել գնումների համակարգին:³⁹ ՀՀ կառավարությունը որոշել էր, որ իրականացման համար փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերի կարիք չունեցող շինարարական ծրագրերի դեպքում ֆինանսական միջոցները

³⁶ Ֆինանսների նախարարը նշել էր, որ որոշմամբ նախատեսվում է սահմանափակել կանխավճարների տրամադրման հնարավորությունը, նախատեսվում են խտրական պայմանների կիրառումը բացառելուն, մրցակցության և գրավչության աստիճանի բարձրացմանն ուղղված կարգավորումներ: «Շատ հաճախ գնումների համակարգը և «Գնումների մասին օրենքով» սահմանված ընթացակարգերը դիտարկվում են որպես ամենացածրաժեք ապրանքների, ծառայությունների, աշխատանքների ձեռքբերմանն ուղղված կարգավորումներ: Առնվազն՝ այդպես են մեկնաբանվում: Եվ դրանից բխող մրցութային պահանջները սահմանվում են ցածրաժեք ապրանքներին համապատասխան: Հետևաբար, նաև ձեռքբերումները չեն կարող լինել դրան ոչ համարժեք: Լավագույն դեպքում մենք պետք է հենց այդ ցածրաժեք գնման առարկաները ձեռք բերենք: Մինչդեռ գործող օրենքը սահմանում է նաև մոտեցումներ, որոնք հնարավորություն են տալիս ձեռք բերել հատուցման դիմաց լավագույն արժեք: Այսինքն՝ միայն գնային ցուցանիշներով չէ, որ անհրաժեշտ է առաջնորդվել. ոչ գնային չափորոշիչներ սահմանելու, միջազգային ստանդարտների, կյանքի ցիկլի հիման վրա գնառաջարկի կիրառելու ուղղությամբ նույնպես կարգավորումներ կան: Այսինքն՝ դա նշանակում է, որ այն մեկնաբանությունը, որ գնումների մասին օրենսդրությունը կամ գնումների համակարգը նպատակաուղղված է միայն ցածր գնով և դրան համարժեք որակի գնման առարկաներ ձեռքբերելուն, այնքան էլ չի համապատասխանում եղած կարգավորմանը», -ասել է նախարարը:

³⁷ ՀՀ կառավարություն: (2019թ.): Հասանելի է https://www.primeminister.am/hy/press-release/item/2019/07/17/Meeting/#photos_pp_gal_1/1/ էջում

³⁸ Ըստ վարչապետի՝ «լինի ճկուն և մոբիլ, միևնույն ժամանակ, պահպանի արդար մրցակցության սկզբունքը և հնարավորինս զերծ լինի կոռուպցիոն երևույթներից, երրորդը՝ երաշխավորի պետական միջոցների ծախսման ու ստացվող արդյունքի որակը»

³⁹ Կառավարությունը բարեփոխումներ է իրականացնում գնումների համակարգում՝ դնելով բարձր նշանոց: 10 հոկտեմբերի 2019թ.: Հասանելի է <https://www.primeminister.am/hy/press-release/item/2019/10/10/Cabinet-meeting/> էջում:

նախատեսվում են առանց դրանց առկայության, որ գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցը սահմանում է պատվիրատուի ղեկավարը և հանել էր մասնակիցների նկատմամբ որակավորման չափանիշներ սահմանելու և դրանց հիմնավորման համար փաստաթղթեր պահանջելու հետ կապված կարգավորումները, նախատեսելով, որ գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակիցը իր ներկայացրած գնային առաջարկի չափով, բացի պայմանագրի (կանխավճարի) ապահովումը, պատվիրատուին կներկայացնի որակավորման ապահովում՝ 1-ից 10 մլն դրամ գին ունեցող գնումների համար տուժանքի, իսկ 10 մլն դրամից բարձր գնումների դեպքում՝ բանկային երաշխիքի ձևով: Ապահովում չներկայացրած ընտրված մասնակիցը կարող է ներստվել «սև ցուցակում»: Նիկոլ Փաշինյանը նաև նշել էր, որ կարգավորումներն ուժի մեջ մտնելուց հետո այլևս ոչ մի «Ֆեյք» ընկերություն չի կարողանա մասնակցել պետական գնումների գործընթացին:

Պատկեր 24. ՀՀ վարչապետի աշխատակազմի 10.10.2019 մամլո հաղորդագրությունը Մամլո հաղորդագրություններ

Կառավարությունը բարեփոխումներ է իրականացնում գնումների համակարգում՝ դնելով բարձր նշանոց

10.10.2019



2019թ. նոյեմբերի 28-ի «Պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թվականների բարեփոխումների ռազմավարությունը և պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների 2019-2023 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» №1716-Լ որոշմամբ ՀՀ կառավարությունը հանձնառություն է ստանձնել ներդնել պետական գնումների արդար և թափանցիկ համակարգ:

2021թ. մարտին կառավարությունը գնման ընթացակարգերում մրցակցության աստիճանը բարձրացնելուն միտված միջոցներ էր ձեռնարկում⁴⁰: Գնումների ընթացակարգերում որակավորման ապահովման համակարգի կիրառման պայմանների դիվերսիֆիկացման և այլընտրանքների ձևավորման անհրաժեշտությամբ պայմանավորված ՀՀ կառավարությունը որոշել է, որ որակավորման ապահովման չափին ներկայացվող գործող պահանջը, ինչպես նաև այլընտրանքների կիրառման բացակայությունը բավարար չափով չեն խթանում մրցակցությունը, այդ թվում փոքր և միջին ձեռնարկությունների (այսուհետ՝ ՓՄՁ) մասով և գնման մրցակցային ընթացակարգերում մրցակցության աստիճանը բարձրացնելու նպատակով որոշել էր փոփոխության ենթարկել որակավորմանը ներկայացվող պահանջները:

Պատկեր 25. ՀՀ վարչապետի աշխատակազմի 25.03.2021 մամլո հաղորդագրությունը

⁴⁰ ՀՀ կառավարություն: (2021թ.): Կառավարությունը նախատեսում է բարձրացնել մրցակցության աստիճանը գնման ընթացակարգերում: 25 մարտի 2021 թ. Հասանելի է <https://www.primeminister.am/hy/press-release/item/2021/03/25/Cabinet-meeting/> էջում:



Կառավարությունը նախատեսում է բարձրացնել մրցակցության աստիճանը գնման ընթացակարգերում

25.03.2021



Դրանից մեկ շաբաթ հետո, 2021թ. ապրիլի 1-ին կառավարությունը նախատեսում էր պետական գնումների ընթացակարգերի միջոցով գործարկել տեղական արտադրությանը օժանդակելու և միտված միջանկյալ մեխանիզմ⁴¹:

Պատկեր 26. ՀՀ վարչապետի աշխատակազմի 01.04.2021 մամլո հաղորդագրությունը Մամլո հաղորդագրություններ



Պետական գնումների ընթացակարգերի միջոցով կառավարությունը նախատեսում է գործարկել միջանկյալ մեխանիզմ՝ օժանդակելու տեղական արտադրությանը

01.04.2021



2022թ. հուլիսի 21-ին ՀՀ վարչապետի մոտ քննարկում էին գնումների համակարգի զարգացման հայեցակարգի նախագիծը⁴²: Վարչապետը նշել է, որ գնումների ոլորտի զարգացման հարցը կառավարության շարունակական քննարկումների կարևորագույն թեմաներից մեկն է, որն ունի շատ նրբություններ, բարդություններ և կարևորություն: Կառավարության ղեկավարը նշել էր մրցակցության, գնագոյացման, ժամկետների, գնումների բողոքարկման համակարգի հետ կապված խնդիրների մասին:

Խորհրդակցության մասնակիցներն ընդգծել էին գնումների էլեկտրոնային համակարգի ոչ արդիական վիճակը, այլանաւորման և ընթացակարգերի հետ կապված խնդիրները, նշել էին, որ ներկայումս ընթացքի մեջ են գնումների նոր համակարգի մշակման աշխատանքները, նախատեսվում է գնման ընթացակարգերի թվայնացում, գործիքակազմերի արդիականացում, գնումների մասնագետների վերապատրաստում, կարողությունների զարգացում և պայմանագրերի կառավարման բարելավում:

Պատկեր 27. ՀՀ վարչապետի աշխատակազմի 21.07.2021 մամլո հաղորդագրությունը

⁴¹ ՀՀ կառավարություն: (2021 թ.): Պետական գնումների ընթացակարգերի միջոցով կառավարությունը նախատեսում է գործարկել միջանկյալ մեխանիզմ՝ օժանդակելու տեղական արտադրությանը: 1 ապրիլի 2021թ.: Մա հավանաբար ապրիլմեկյան կատակ էր: Հասանելի է <https://www.primeminister.am/hy/press-release/item/2021/04/01/Cabinet-meeting/> էջում:
⁴² ՀՀ կառավարություն: (2022 թ.): Վարչապետին է ներկայացվել Գնումների համակարգի զարգացման հայեցակարգի նախագիծը: 21 հուլիսի 2022թ.: Հասանելի է <https://www.primeminister.am/hy/press-release/item/2022/07/21/Nikol-Pashinyan-meeting>



Վարչապետին է ներկայացվել Գնումների համակարգի զարգացման հայեցակարգի նախագիծը

21.07.2022



2021 թ. օգոստոսի 18-ին ՀՀ կառավարությունը հանդես եկավ գնման ընթացակարգերի բողոքարկման համակարգը բարելավելու օրենսդրական նախաձեռնությամբ⁴³, վեճերի լուծումը տեղափոխելով դատարաններ:

Պատկեր 28. ՀՀ վարչապետի աշխատակազմի 18.08.2021 մամլո հաղորդագրություն Մամլո հաղորդագրություններ



Կառավարությունը հանդես է եկել գնման ընթացակարգերի բողոքարկման համակարգը բարելավելու օրենսդրական նախաձեռնությամբ

18.08.2021



2022 թ. օգոստոսի 25-ին ՀՀ վարչապետն իր N°977-Լ որոշմամբ հաստատել է գնումների համակարգի զարգացման հայեցակարգը, որում տեղ են գտել գնումների գործող համակարգը ցանկացած ուղղությամբ ճկելու բավարար հնարավորություն տվող բառերի խմբեր⁴⁴: Հայեցակարգը գնումների հետ կապված համակարգային խնդիրներ է արձանագրել գնումների գործընթացի ըստ էության բոլոր առանցքային փուլերում:

⁴³ ՀՀ կառավարություն: (2021 թ.): Կառավարությունը հանդես է եկել գնման ընթացակարգերի բողոքարկման համակարգը բարելավելու օրենսդրական նախաձեռնությամբ: 18 օգոստոսի 2021 թ.: Հասանելի է <https://www.primeminister.am/hy/press-release/item/2021/08/18/Cabinet-meeting/> էջում:

⁴⁴ Օրինակ, «կանոնակարգված ձկնորսության գաղափարախոսության առանցք», «համապարփակ և անփոփոխ կարգավորումները չեն կարող ապահովել հանրային օգուտների ժամանակին և արդյունավետ ստեղծումը», «սահմանել այն մոտեցումները, որոնք հանդիսանում են գնումների համակարգի շարունակական փոփոխությունների կանոնակարգման հիմք»

Հավելված 2. Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման դեպքեր

Աղյուսակ 22.1. «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ (ՀՎՀՀ 02535853)

N	Իրավական հիմք⁴⁵	Սկիզբ⁴⁶	Ժամկետը
840	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	27.01.2021թ.	27.01.2023թ.
1795	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	22.04.2023թ.	22.04.2025թ.
1801	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	29.04.2023թ.	29.04.2025թ.
1806	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	06.05.2023թ.	06.05.2025թ.
1811	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	09.05.2023թ.	09.05.2025թ.
1815	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	09.05.2023թ.	09.05.2025թ.
1820	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	13.05.2023թ.	13.05.2025թ.
1828	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	16.05.2023թ.	16.05.2025թ.
1829	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	16.05.2023թ.	16.05.2025թ.
1834	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	20.05.2023թ.	20.05.2025թ.
1837	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	23.05.2023թ.	23.05.2025թ.
1840	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	26.05.2023թ.	26.05.2025թ.
1850	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	30.05.2023թ.	30.05.2025թ.
1851	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	02.06.2023թ.	02.06.2025թ.
1854	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	03.06.2023թ.	03.06.2025թ.
1857	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	03.06.2023թ.	03.06.2025թ.
1861	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	06.06.2023թ.	06.06.2025թ.
1862	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	06.06.2023թ.	06.06.2025թ.
1870	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	10.06.2023թ.	10.06.2025թ.
1871	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	10.06.2023թ.	10.06.2025թ.
1873	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	10.06.2023թ.	10.06.2025թ.
1874	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	13.06.2023թ.	13.06.2025թ.
1879	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	20.06.2023թ.	20.06.2025թ.

⁴⁵ Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը

⁴⁶ Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը

1880	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	20.06.2023թ.	20.06.2025թ.
1881	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	20.06.2023թ.	20.06.2025թ.
1896	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	23.06.2023թ.	23.06.2025թ.
1905	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	30.06.2023թ.	30.06.2025թ.
1912	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	01.07.2023թ.	01.07.2025թ.
1920	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	01.07.2023թ.	01.07.2025թ.
1923	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	04.07.2023թ.	04.07.2025թ.
1926	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	07.07.2023թ.	07.07.2025թ.
1939	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	14.07.2023թ.	14.07.2025թ.
1940	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	14.07.2023թ.	14.07.2025թ.
1946	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	15.07.2023թ.	15.07.2025թ.
1956	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	18.07.2023թ.	18.07.2025թ.
2054	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	05.09.2023թ.	05.09.2025թ.
2093	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	30.09.2023թ.	30.09.2025թ.
2104	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	03.10.2023թ.	03.10.2025թ.
2130	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	13.10.2023թ.	13.10.2025թ.
2148	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	28.10.2023թ.	28.10.2025թ.

Աղյուսակ 22.2. «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ (ՀՎՀՀ 02535853) «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ (ՀՎՀՀ 00873228)

N	Իրավական հիմքը ⁴⁷	Սկիզբ ⁴⁸	Ժամկետը
1323	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ ⁴⁹	13.04.2022թ.	13.04.2024թ.
1576	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	22.11.2022թ.	22.11.2024թ.
1790	Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ	18.04.2023թ.	18.04.2025թ.

⁴⁷ Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը

⁴⁸ Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը

⁴⁹ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 04.06.2022թ. թիվ ԵԴ/25253/02/22 որոշման հիման վրա 14.06.2022թ. ցանկից հանվել է մինչև տվյալ գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Հավելված 3. Գնանշման հարցում ընթացակարգով 2021-22թթ. կատարված 80 մլն դրամը գերազանցող գնումներ

Աղյուսակ Հ3.1 2022թ. ԳՀ ընթացակարգով կատարված գնումներ

№	Պատվիրատու	Ընտրված մասնակից	Պայմանագրի			
			կնքման ամսաթիվ	Ընդհանուր գումարը	Գումարը սուկա ֆինանսական միջոցներով	Հաշվարկային տնտեսում
1	Առողջ. կենտրոն	«ԴԱՅՍ» ՍՊԸ	21/11/2022	179,850,000	1,798,500	-
2	ՀՀ ՊՆ	Արպանիվ ՍՊԸ	29/03/2022	157,713,098	157,713,098	2,574,902
3	Առողջ. կենտրոն	Ֆոտոն ՍՊԸ	21/02/2022	140,400,000	1,404,000	-
4	Մեծամոր	ԿԱՐՄԻՐ ՍՊԸ	22/09/2022	13,415,582	13,415,582	27,181,119
5	Գյումրու ԲԿ	ՊՐՈՖՏԵՍ ՍՊԸ	07/04/2022	129,250,000	129,250,000	-
6	Առողջ. կենտրոն	Արֆարմացիա ՓԲԸ	28/11/2022	116,815,000	1,168,150	-
7	ՀՀ ՊՆ	Էյլ Գրուպ ՍՊԸ	14/06/2022	111,945,960	111,945,960	4,894,040
8	Շիրակ	ԿԻՐ - ՔԱՐ ՍՊԸ	06/12/2022	106,878,960	106,878,960	-
9	Վանաձորի ԲԿ	ՆԱՆՈ ՄԵՂ ՍՊԸ	20/01/2022	100,295,000	100,295,003	-
10	Վանաձորի ԲԿ	ՊՐՈՖՏԵՍ ՍՊԸ	19/01/2022	99,600,000	99,600,000	-
11	Մեծամոր	«ԳԱԶՇԻՆ ՄՁ» ՍՊԸ	29/09/2022	97,499,275	97,499,275	17,264,895
12	Կապան	Արշ-Արա	21/11/2022	95,268,470	95,268,470	2,131,929
13	Զարենցավան	Շինսպյուս ՍՊԸ	17/06/2022	91,980,000	91,980,000	21,542,000
14	Գյումրու ԲԿ	Էմ Դի րնդ Դի Ըլայենս ՍՊԸ	07/04/2022	88,950,000	84,150,000	-
15	ՀՀ ԱԻՆ	ԳԱՄՇԻՆ ՍՊԸ	09/12/2022	88,353,000	51,420,000	-
16	Կապան	Կապանի Նորոզ ին ՍՊԸ	04/10/2022	88,080,000	73,400,000	15,331,780
17	Սպիտակ	Նեմրուք ՍՊԸ	20/08/2022	87,573,788	87,573,788	5,124,212
18	Գեղարքունիք	Օլանդա ՍՊԸ	03/11/2022	85,320,000	85,319,458	-
19	ՀՀ ՊՆ	Մոսէսքո ՍՊԸ	11/04/2022	80,520,000	80,520,000	480,000
20	ՀՀ ՆԳՆ	Լեզին 9 ՍՊԸ	28/12/2022	80,000,000	80,000,000	-

Աղբյուր. Armepps

Ծանոթություն. ՀՀ ՊՆ՝ ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ ԱԻՆ՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, ՀՀ ՆԳՆ՝ ՀՀ ներքին գործերի նախարարություն, Առողջ. կենտրոն՝ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ, Մեծամոր՝ Մեծամորի համայնքապետարան, Գյումրու ԲԿ՝ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ, Շիրակ՝ ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ, Վանաձորի ԲԿ՝ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ, Կապան՝ Կապանի համայնքապետարան, Զարենցավան՝ Զարենցավանի համայնքապետարան, ՀՀ ԱԻՆ՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, Սպիտակ՝ Սպիտակի համայնքապետարան, Գեղարքունիք՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ, ՀՀ ՆԳՆ՝ ՀՀ ներքին գործերի նախարարություն

Աղյուսակ Հ3.2. ԳՀ ընթացակարգով 2021թ. կատարված 80 մլն դրամը գերազանցող գումարների օրինակներ

№	Պատվիրատու	Ընտրված մասնակից	Պայմանագրի			
			կնքման ամսաթիվ	Ընդհանուր գումարը	Գումարը առկա ֆինանսական միջոցներով	Հաշվարկային տնտեսում
1	ՀՀ ՊՆ	Արլանիվ ՍՊԸ	29/03/2021	442,864,506	424,165,006	40,500,494
2	ՀՀ ԱռՆ	Ֆարմատեք ՓԲԸ	25/06/2021	245,511,120	28,728,000	-
3	ՀՀ ԱռՆ	Մ.Լ.Ն Ֆարմ ՍՊԸ	25/06/2021	178,372,000	48,372,000	-
4	Մետրո	ООО «ЭЛАРГОЛД»	06/07/2021	160,950,000	270,000	-
5	ՀՀ ՊԵԿ	ԴՐՈՒԶՅԱ ՍՊԸ	19/02/2021	154,000,000	154,000,000	47,529,289
6	Լուսավորիչ ԲԿ	Դիասերվ ՍՊԸ	23/04/2021	139,000,000	139,000,000	-
7	Ակադեմ	«Մ.Ս. Հոլդինգ» ՍՊԸ	17/09/2021	110,140,000	11,014,000	-
8	ՀՀ ՊՆ	Մետաքսկոմբինատ ՍՊԸ	16/04/2021	109,336,080	109,336,080	26,766,880
9	Մետրո	«ՌԵՖՈՐՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	18/08/2021	103,800,000	103,800,000	6,600,000
10	ՀՀ ՊՆ	Ավանգարդ ՍՊԸ	16/04/2021	102,016,042	102,016,042	11,974,458
11	ՀՀ ՊՆ	տեխսթոր ՍՊԸ	27/08/2021	101,180,000	101,180,000	340,000
12	ՀՀ ՊՆ	Սլացք ՓԲԸ	07/04/2021	99,396,000	99,396,000	9,464,000
13	ՀՀ ՊՆ	Գարուն ֆաբրիկա	14/05/2021	99,348,000	99,348,000	338,000
14	ՀՀ ՊՆ	Գարուն ֆաբրիկա	16/04/2021	98,643,840	98,643,840	29,541,072
15	Աղբահանություն	Արլանիվ ՍՊԸ	10/05/2021	97,600,000	97,600,000	
16	Երևան	Հարսնաձոր ՍՊԸ	27/09/2021	88,092,000	88,092,000	721,920
17	Զրային կոմիտե	Աս Շին Տրանս ՍՊԸ	15/04/2021	87,400,000	87,400,000	
18	Վանաձորի ԲԿ	Թեոֆարմա ՍՊԸ	10/12/2021	85,740,640	82,802,300	
19	ՀՀ ՊՆ	Գենկոն ՍՊԸ	03/06/2021	84,660,000	84,660,000	
20	Քաղշինկոմիտե	Շինսերտիֆիկատ ՍՊԸ	07/06/2021	84,000,000	22,176,800	
21	Քաղշինկոմիտե	Շինսերտիֆիկատ ՍՊԸ	07/06/2021	84,000,000	11,091,365	2,563,100
22	ՀՀ ՊՆ	UNIQUE LINE LLC	08/11/2021	81,810,000	81,810,000	19,0000

Աղբյուր. Armeps

Ծանոթություն. ՀՀ ՊՆ՝ ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ ԱռՆ՝ ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ ՊԵԿ՝ ՀՀ պետական եկամտունների կոմիտե, Մետրո՝ «Գարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ, Լուսավորիչ ԲԿ՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն» ՓԲԸ, Ակադեմ՝ «Ակադեմիական փոխձանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն» հիմնադրամ, Աղբահանություն՝ «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ, Երևան՝ Երևանի քաղաքապետարան, Զրային կոմիտե՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե, Վանաձորի ԲԿ՝ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ, Քաղշինկոմիտե՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե, Գարուն ֆաբրիկա՝ Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ

Հավելված 4. «Այյունեթվորքս» ՍՊԸ-ի հետ պատվիրատուների կնքած պայմանագրերը

Աղյուսակ 24.1. «Այյունեթվորքս» ՍՊԸ-ի (02588485) հետ պատվիրատուների կնքած պայմանագրերը

	Պատվիրատու	Պայմանագրի ծածկագիր	Կնքման ամսաթիվ	Ձև	Գումար, դրամ
1	«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ	201761008	30 հուլիսի 2021թ.	ՄԱ	25,800
2	ՀՀ ՖՆ	ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/57 ⁵⁰	22 հունվարի 2020թ.	ԳՀ	89,900,000
3	ՀՀ ՊՆ	ԳՀԱՊՁԲ-20-1/7-1 ⁵¹	17 ապրիլի 2020թ.	ԳՀ	41,200,000
4	Հարկադիր ⁵²	ՀԿԱԾ-ԳՀԱՊՁԲ-20/SS-3-1 ⁵³	2 մարտի 2020թ.	ԳՀ	1,071,000
5	ՊԵԿ	ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-20/1 ⁵⁴	25 փետրվարի 2020թ.	ՀԲՄ	383,000,000
6	ԵՊՀ	ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/92/5 ⁵⁵	13 մայիսի 2020թ.	ԳՀ	10,711,800
7	ՀՀ ՖՆ	ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/37 ⁵⁶	27 սեպտ 2019թ	ԳՀ	5,938,121
8	ՀՀ ՖՆ	ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-18/4-1 ⁵⁷	1 փետրվարի 2019թ.	ԷԱ	9,995,470
9	ՀՀ ՖՆ	ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-18/4-1 ⁵⁸	1 փետրվարի 2019թ.	ԷԱ	99,954,700
10	ՊԵԿ	ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-19/2 ⁵⁹	22 հոկտեմբերի 2019թ.	ՀԲՄ	101,670,000
11	ՊԵԿ	ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-19/7-1 ⁶⁰	12 փետրվարի 2019թ.	ԷԱ	234,711,000
12	ՊԵԿ	ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-19/8-1 ⁶¹	8 փետրվարի 2019թ.	ԷԱ	54,954,000
13	ՊԵԿ	ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/010 ⁶²	2 ապրիլի 2019թ.	ԳՀ	4,982,400

⁵⁰ Armeps և էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվակականության Armeps/րբԿ համակարգերի ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ

⁵¹ Համակարգիչ ամբողջը մեկում

⁵² ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

⁵³ համակարգիչներ եվ համակարգչային սարքավորումների ձեռքբերում

⁵⁴ ՀՀ ՊԵԿ-ում ներդրված «Հարկատու 3» համակարգի և նրա ենթահամակարգերի սպասարկման ծառայություններ

⁵⁵ Համակարգիչների, տպիչ սարքերի և պրոյեկտորների ձեռքբերում

⁵⁶ Էլեկտրոնային գնումների հարթակում Ռուսաստանի Դաշնության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցների համար հայտերի ներկայացման առցանց (օնլայն) համակարգի մշակման ծառայություններ

⁵⁷ էլեկտրոնային գնումների Armeps և էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվակականության Armeps/րբԿ համակարգերի ծրագրային ապահովման տեխնիկական սպասարկման ծառայություններ

⁵⁸ էլեկտրոնային գնումների Armeps և էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվակականության Armeps/րբԿ համակարգերի ծրագրային ապահովման տեխնիկական սպասարկման ծառայություններ

⁵⁹ ՀՀ Հարկային օրենսգրքի փոփոխություններով պայմանավորված ՀՀ ՊԵԿ-ում նոր ենթահամակարգերի ծրագրային ապահովման իրականացման ծառայություններ

⁶⁰ ՀՀ ՊԵԿ-ում ներդրված էլեկտրոնային համակարգերի և համարող միջոցների («Հարկատու 3» համակարգի և նրա ենթահամակարգերի) սպասարկման ծառայություններ

⁶¹ ՀՀ ՊԵԿ-ում ներդրված նոր սերնդի հսկիչ-դրամարկային մեքենաների էլեկտրոնային համակարգերի և համարող միջոցների սպասարկման ծառայություններ

⁶² ՀՀ ՊԵԿ կարիքների համար համակարգչային սերվերի ձեռքբերում

14	ՀՀ ՊՆ	ԳՀԱՊՁԲ-1/2-2 ⁶³	15 ապրիլի 2019թ.	ԳՀ	710,400
15	«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ	ՀԱՆ-ԳՀԾՁԲ-15/19/2 ⁶⁴	24 հունիսի 2019թ.	ԳՀ	360,000
16	ՀՀ վիճակագրական կոմիտե	ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2019/10-1 ⁶⁵	18 հոկտեմբերի 2019թ.	ԳՀ	297,000
17	Ատոմակայան ⁶⁶	ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-15/19/6 ⁶⁷	20 հունիսի 2019թ.	ՀԲՄ	0
18	ԵՊՀ	ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/141/1 ⁶⁸	16 հոկտեմբերի 2019թ.	ԳՀ	7,245,600
19	Հեռուստառադիոցանց ⁶⁹	ՀՀՌՑ-ԳՀԾՁԲ-19/15/1 ⁷⁰	3 հունիսի 2019թ.	ԳՀ	1,092,000
20	ՀՀ Ազգային ժողով	ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-19/12 ⁷¹	16 հուլիսի 2019թ.	ԳՀ	31,500,000
21	ՀՀ Ազգային ժողով	ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/40 ⁷²	23 դեկտեմբերի 2019թ.	ԳՀ	30,780,000
22	ՀՀ Ազգային ժողով ⁷³	ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/40	23 դեկտեմբերի 2019թ.	ԳՀ	30,780,000
23	Հարկադիր ⁷⁴	ՀԿԱԾ-ԳՀԱՊՁԲ-19/Ա-4/ՏՏ-Ա ⁷⁵	19 դեկտեմբերի 2019թ.	ԳՀ	1,298,000
24	ՀՀ ՖՆ	ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-18/3-1 ⁷⁶	11 սեպտ 2018թ.	ԷԱՃ	16,747,500
25	ՀՀ ՖԻՆ	ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/5 ⁷⁷	6 մարտի 2018թ.	ԳՀ	5,598,000
26	ՀՀ ՖՆ	ՀՀ ՖՆ ՀՄԱ-ԾՁԲ-18/1 ⁷⁸	12 հուլիսի 2018թ.	ՀՄԱ	5,359,200
27	ՀՀ ՖՆ	ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-18/28 ⁷⁹	12 հուլիսի 2018թ.	ՄԱ	25,474,500
28	ՊԵԿ	ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-18/5 ⁸⁰	10 ապրիլի 2018թ.	ՀԲՄ	54,954,000

⁶³ Կապի և համակարգչային միջոցներ

⁶⁴ Ինժեներական նախագծման ծառայություններ քաղաքացիական շինարարության համար

⁶⁵ ՀՀ ՎԿ կարիքների համար համակարգչային և պատճենահանման օժանդակ նյութերի ձեռքբերում

⁶⁶ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ

⁶⁷ Ցածրավոլտ սարքավորումներ և պահեստամասեր

⁶⁸ Համակարգչային տեխնիկա

⁶⁹ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ

⁷⁰ Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում / Ապարանի, Զկարվի, Սևանի հեռուստակայաններ/

⁷¹ Նոր օպտիկամանրաթելային ցանցի ստեղծման ծառայությունների ձեռքբերում

⁷² Համակարգչային սերվեր

⁷³ Այս տողը երկու անգամ է նշված:

⁷⁴ ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

⁷⁵ Հեռախոսային սարքեր

⁷⁶ Ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ

⁷⁷ ներքին աուդիտի միասնական կառավարման տեղեկատվական համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության ձեռքբերում

⁷⁸ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության

⁷⁹ էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություն

⁸⁰ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում ներդրված նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների էլեկտրոնային համակարգերի և համալրող միջոցների սպասարկման ծառայություններ

29	ՊԵԿ	ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-18/4 ⁸¹	13 ապրիլի 2018թ.	ՀԲՄ	75,810,000
30	Դատական ղեկարտամենտ	ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-18/02-5 ⁸²	26 դեկտեմբերի 2018թ.	ՄԱ	270,375
31	Դատական ղեկարտամենտ	ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-18/02-5 ⁸³	20 դեկտեմբերի 2018թ.	ԷԱ	2,703,750
32	ՀՀ վիճակագրական կոմիտե	ՀՀ ԱՎԾ-ԳՀԾՁԲ-2018/5-1 ⁸⁴	22 մարտի 2018թ.	ԳՀ	3,093,000
33	ՀՀ ՖՆ	ՀՀ ՖՆ ԲԸՀ-ԾՁԲ-04/17/1 ⁸⁵	5 մայիսի 2017	ԲԸՀ	5,598,000
34	ՀՀ ՖՆ	ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-17/5 ⁸⁶	20 դեկտ 2017թ	ՀԲՄ	34,996,500
35	ՀՀ ՖՆ	ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-17/5 ⁸⁷	20 դեկտ 2017թ.	ՀԲՄ	3,000,000
36	ՀՀ ՖՆ	ՀՀ ՖՆ ԲԸՀԾՁԲ-05/17/1 ⁸⁸	10 մայիսի 2017թ.	ԲԸՀ	22,485,000
37	ՀՀ ՖՆ	ՀՀ ՖՆ ԲԸՀ-ԾՁԲ-07/16/1 ⁸⁹	28 նոյեմբերի 2016թ.	ԲԸՀ	22,485,000
38	ՀՀ ՖՆ	ՀՀ ՖՆ ԲԸՀ-ԾՁԲ-08/16/2 ⁹⁰	28 նոյեմբերի 2016թ.	ԲԸՀ	6,555,600
39	ՀՀ ՖՆ	ՀՀ ՖՆ ԲԸՀ-ԾՁԲ-06/16/1 ⁹¹	28 հուլիսի 2016թ.	ԲԸՀ	5,895,000
40	ՀՀ ՖՆ	ՀՀ ՖՆ ԲԸՀ-ԾՁԲ-08/16/1 ⁹²	28 նոյեմբերի 2016թ.	ԲԸՀ	5,850,000
41	ՊԵԿ	ՊԵԿ-ՇՀԾՁԲ-17-1-15/6/1 ⁹³	29 դեկտեմբերի 2016թ.	ՇՀ	234,711,000
42	ՊԵԿ	ՊԵԿ-ՇՀԾՁԲ-17-2-15/6/1 ⁹⁴	29 դեկտեմբերի 2016թ.	ՇՀ	54,954,000
43	ՊԵԿ	ՀՀԿԱ-ՊԵԿ-ՇՀԾՁԲ-17/1-15/6 ⁹⁵	29 դեկտեմբերի 2016թ.	ՇՀ	75,810,000

Աղբյուր. *Armepps*

Ծանոթություն. ՇՀ՝ Շրջանակային համաձայնագիր, ԲԸՀ՝ Բանակց. ընթացակարգ հայտարար.

⁸¹ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում ներդրված եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման համակարգի սպասարկման ծառայություններ

⁸² Անխափան սնուցման աղբյուրների ձեռքբերում

⁸³ Անխափան սնուցման աղբյուրների ձեռքբերում

⁸⁴ Ցանցային համակարգչային ծրագրային փաթեթ

⁸⁵ Ներքին աուդիտի միասնական կառավարման տեղեկատվական համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություններ

⁸⁶ համակարգի ձեխնիկական սպասարկման ծառայություն

⁸⁷ համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություն

⁸⁸ էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության

⁸⁹ էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություններ

⁹⁰ էլեկտրոնային գնումների ARMEPS/PPCM համակարգում փոփոխությունների կատարման ծառայություններ

⁹¹ է ՀՀ էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի պատուհանների և օգտագործողի ձեռնարկի ռուսերեն լեզվով թարգմանության ծառայություններ

⁹² էլեկտրոնային գնումների ARMEPS/PPCM համակարգում փոփոխությունների կատարման ծառայություններ

⁹³ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում ներդրված էլեկտրոնային համակարգերի և համալրող միջոցների («Հարկատու 3» համակարգի) սպասարկման ծառայություններ

⁹⁴ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում ներդրված նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների էլեկտրոնային համակարգերի և համալրող միջոցների սպասարկման ծառայություններ

⁹⁵ Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման համակարգի սպասարկման ծառայություններ

Օգտագործված աղբյուրներ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով: Հինգերորդ գումարում: Երրորդ նստաշրջան: Սղագրություն №27: 13 հունիսի 2013թ.: Հասանելի է <http://www.parliament.am/transcript.php?AgendaID=2472&day=13&month=06&year=2013&lang=arm# 13.06.2013> էջում: Դիտվել է 2021թ. նոյեմբերի 28-ին:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով: Հինգերորդ գումարում: Արտահերթ նստաշրջան: Սղագրություն №2: 18 հունիսի 2013թ.: Հասանելի է <http://www.parliament.am/transcript.php?AgendaID=2478&day=18&month=06&year=2013&lang=arm# 18.06.2013> էջում: Դիտվել է 2022թ. հունվարի 29-ին:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի №168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №526-Ն որոշում: Հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=177283> էջում:

ՀՀ կառավարության 2019թ. նոյեմբերի 28-ի «Պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թվականների բարեփոխումների ռազմավարությունը և պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների 2019-2023 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» №1716-Լ որոշում: Հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=159219> էջում:

ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 6-ի «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի №1370-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №386-Ն որոշում: Հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=182210> էջում:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի «Էլեկտրոնային աճուրդների իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» №534-Ն որոշում: Հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138560> էջում:

ՀՀ վարչապետի 2022թ. օգոստոսի 25-ի «Գնումների համակարգի զարգացման հայեցակարգը և դրանից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» №977-Լ որոշում: Հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=167787> էջում:

ՀՀ վարչապետի 2012թ. հոկտեմբերի 2-ի «Գնումների ոլորտում առկա խնդիրների նվազեցմանն ուղղված բարեփոխումների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» №959-Ն որոշում: Հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=88622> էջում:

ՀՀ վարչապետի 2013թ. ապրիլի 26-ի «Միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին» №308-Ա որոշում: Հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=82795> էջում:

ՀՀ վարչապետի 2021թ. դեկտեմբերի 30-ի «Պետական եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթերի մշակման, ներկայացման և հսկողության իրականացման մեթոդական հրահանգը հաստատելու մասին» №1508-Լ որոշում: Հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=159201> էջում:

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019թ. սեպտեմբեր 19-ի թիվ 20/1 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կողմից հիմնադրված «Հայաստան» համահայկական հիմնադրամում գնումների գործընթացի վերաբերյալ» ընթացիկ եզրակացություն

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2023թ. ապրիլի 26-ի թիվ 69-Ա որոշման հավելված. «Ընթացիկ եզրակացություն Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությունում 2022 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ»: Հասանելի է <https://armsai.am/hy/current-conclusions> էջում:

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021թ. մայիսի 27-ի թիվ 168-Ա որոշման հավելված.
«Եզրակացություն Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման վերաբերյալ»: Հասանելի է <https://www.armsai.am/files/conclusion2020.pdf> էջում:

Քյուրումյան Արտակ: (2021թ.): Հայաստանի պաշտպանության բնագավառի գնումներում հիմնական կոռուպցիոն ռիսկերը. 4 կարմիր դրոշակ: Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն: 2021թ.: Հասանելի է <https://transparency.am/en/publication/pdf/285/9901> էջում: